1967

…րա. և ՚ի ներքոյ լեզուի ՚ի
…ւք և վաստակք.
…նեալ ընդ մեծամեծս ՚ի
…իս սպանանել զամ։իծն.
…րա ՚ի տնանկս հային . դ . ա
…ղտնիս, որպէս զառիւծ ՚ի մորի
…ւոջ իւրում.
…ի յափշտակել զաղքատն . յա
…ել զաղքատն, և ձգել զնա.
…յլէ իւր խոնարհեցուսցէ զնա
…հեսցի և անկցի ՚ի տիրել իւ
…ում ՚ի վերայ տնանկաց.
…՚ի սրտի իւրում թէ մոռացաւ
…ոյց զերեսս իւր՝ զի մի տեսա
…ցէ իսպառ.
…ած իմ. բարձր եղիցի ձեռ
և … մի՛ մոռանար զտնանկս.
…արկացոյց ամբարիշտն զա՜ծ.
՚ի սրտի իւրում թէ ո՛չ քննի.
…ս դու զնա ՚ի ցաւս, և ՚ի սրտ
…իւնս հայիս. ՚ի քեզ թողեալ
, և որբոյն՝ դու ես օգնական,
…եսցի բազուկ մեղաւորի՝ և չ
…եսցին մեղք նո՛ր, և նա մի գտա

Տր թագաւոր յաւիտեան
նից. կորիցեն հեթանոսք յ
Զ ցանկութի տնանկաց լու
պատրաստութեն սրտից նոցա
ունկն քո։

Դատ առնել որբոյն և տնան
կա յաւելցէ մարդ, ՚ի մեծա
բանել ՚ի վր երկրաց եր

Ի կատարած. Սաղմո
ժ



ՏԷՐ յուսացայ.
ցէք ցանձն իմ, փո
լերինս որպէս ճն
Զի ահա մեղաւորք լարեցի
ըս իւրեանց. պատրաստեալ ար
կապարճս, ձգել ընդ խաւա
ցին. զի ուղիղ են սր
Զի զոր դու հաստատեցեր՝ նոք
ցին. իսկ արդարն զի՞
Տր ՚ի տաճար սբ իւրում.
յաթոռ. իւրում.
չք նր ՚ի տնանկս հայեցին

Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում,
թէ ոչ գոյ ա՛ծ։

Ապականեցան և պղծեցան յանօրէնութեն
իւրեանց. և ոչ ոք է՝ որ առնէ զքաղցրութի.

Տէր յերկնից նայեցաւ յո՛ս որդւոց
մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաս-
տուն, որ խնդրիցէ զա՛ծ։

Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին՝ և
անպիտանացան։

Ոչ ոք է՝ որ առնէ զբարի. և չէ՝ ոք
մինչև ՚ի մի։

Ո՞չ ոչ ծանիցեն ամենեքեան, որք
գործեն զանօրէնութի։

Որք ուտէին զժողովուրդ իմ որպէս կե-
րակուր հացի, և զտ՛ր ոչ կարդացին։

Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ իցէ
երկիւղ. զի տ՛ր է յազգս արդարոց։

Զխորհուրդ աղքատին յամօթ արա-
րէք. զի տ՛ր է յոյս նորա։

Ո՞ տացէ ՚ի սիոնէ զփրկութի իէլի. ՚ի
դարձուցանել տ՛ն զգերութի ժողովր-
դեան իւրոյ. ցնծասցէ յակոբ՝ և ու-
րախ եղիցի իէլ։

Ի չորրորդ․ Սաղմոս Դաւթի․ ԺԴ․

Տէր ով կացցէ ի խորանի քում․ կամ ով բնակեսցէ ի լերան սբ․ քո։

Որ գնայ անբիծ՝ գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում։ Որ ոչ նենգաւորեաց լեզուաւ իւրով, և չար՝ ընկերի իւրում ոչ արար։ Նախատինս ի մերձաւորաց նա ոչ առնու․ արհամարհեալ է առաջի նր չարագործն։ Զերկիւղածս տն փառաւոր առնէ․ որ երդնու ը̄ ընկերի իւրում և ոչ ստէ։ Զարծաթ իւր ի վաշխս ոչ տայ, և կաշառս ի վր անմեղաց ոչ առնու․ որ զայս արասցէ, նա մի սասանեսցի յաւիտեան։

Սաղմոս դաւթի ։ ԺԵ․

Պահեա զիս տր իմ, զի ես ի քեզ յուսացայ․ ասացի տն, տր իմ ես դու և բարիք իմ՝ ինձ, ի քէն են։

Սբց քոց որք են յերկրի քում․ զքանչելի արարեր զամն կամս իմ ի նոսա։



Յա

Յաճախեսցին հիւանդութիւնք նոցա. յետ
այսորիկ ապա վաղվաղեսցին:
Ո՛չ ժողովեցայց ՚ի ժողովս նոցա յարենից. և
ո՛չ յիշեցից զանուանս նոցա ՚ի շրթունս իմ:
Տէ՛ր՝ բաժին ժառանգութեան իմոյ և բա
ժակի իմոյ. դու ես որ այսորէն դար_
ձուցանես զժառանգութիւն իմ՝ յիս:
Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և
ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ:
Օրհնեցից զՏէր՝ որ իմաստուն արար
զիս, մինչ ՚ի գիշերի ևս՝ խրատեցին
զիս երիկամունք իմ:
Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի
իմ յամ ժամ. զի է ընդ աջմէ իմմէ,
զի մի՛ սասանեցայց:
Վա՛սն այսորիկ՝ ուրախ եղև սիրտ իմ,
և ցնծացաւ լեզու իմ. ևս և մարմին
իմ՝ բնակեսցէ յուսով.
Զի ոչ թողցես զանձն իմ ՚ի դժոխս.
և ոչ տացես սրբոյ քում տեսանել
զապականութիւն:
Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց.
լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց
՚ի քաղցրութիւն վայելչութեան աջոյ քո մինչ
իսպառ:



Լու

## Սաղմոս դաւթի ։ ԺԶ

Լո՛ւր տէր արդարութեան . և նայեա́ ՚ի խնդրուածս իմ . ունկն դիր աղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորօք ։
Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն ։
Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր ՚ի գիշերի . փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն ։
Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան . վս բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս ։
Հաստատեա́ զշաւիղս իմ ՚ի ճանապարհի քում, զի մի՛ գայթակղեսցին գնացք իմ ։
Ես առ քեզ տր կարդացի՝ զի լուար ինձ ած , խոնարհեցո́ առ իս զունկն քո . և լո́ւր բանից իմոց ։
Սքանչելի արարեր զողորմութիւնս քո՝ ո́ փրկես զայնոսիկ , որք յուսացեալ են ՚ի քեզ՝ յայնցանէ , որք հակառակ կան աջոյ քո ։
Պահեա́ զիս տր բիբ ական . ընդ հովա-



նեաւ

նեաւ Թեւոց քոց ծածկեսցես զիս , յերեսաց ամբարշտաց՝ որք տառապե_ցուցին զիս ։

Թշնամիք զանձն իմ պաշարեցին . և ՚ի ճարպս իւրեանց արգելին . և բերանք նց խօսեցան զամբարտաւանութի ։

Մերժեցին զիս , և այժմ դարձեալ պատեցան զինև . ուշ եդին խոնարհե_ցուցանել զիս յերկիր ։

Համարեցան ինձ որպէս առիւծ՝ զի պատ_րաստ յորս . և որպէս կորիւն առիւծու զի նստի դարանեալ ։

Արի՛ տէր՝ ժամանեա նց , և խափանեա զնս . փրկեա զանձն իմ յամբարշտաց , ՚ի սրոյ՝ և ՚ի ձեռաց թշնամւոյն ։

Տէր՝ կորո զնս յերկրէ . բաժանեա և խափանեա զնս ՚ի կեանս իւրեանց ։

Գաղտնեօք քովք լցան որովայնք նց , յագեցան կերակրովք , և թողին ըզ մնացուածս տղայոց իւրեանց ։

Ես արդարութեամբ երևեցայց երե_սաց քոց . և յագեցայց յերևիլ փառաց քոց ։

'Ի կատարած. Սաղմոս Դաւթի։ Օր աւուր, յորժամ փրկեաց զնա տ՟ր 'ի ձեռաց ամ՟ թշնա-
մեաց։ ԺԷ.

Սիրեցից զքեզ տ՟ր զօրութիւն իմ. տ՟ր՝ հաստատութիւն իմ, ապաւէն իմ՝ և փրկիչ իմ։

Ա՟ծ՝ օգնական իմ, և ես յուսամ 'ի նա. ապաւէն իմ, եղջիւր փրկութե՟ իմոյ՝ ընդունելի իմ է։

Օրհնելով կարդացից առ տէր, և 'ի թշնամեաց իմոց ապրեցայց։

Շուրջ եղեն զինև երկունք մահու. և ուղխք անօրէնութե՟ խռովեցուցին զիս։

Երկունք դժոխոց պաշարեցին զիս. և ժամանեցին ինձ որոգայթք մահու։

Ի նեղութե՟ իմում ես առ տ՟ր կարդա-
ցի, և առ ա՟ծ իմ աղաղակեցի։

Լուաւ ինձ 'ի տաճարէ ս՟բյ իւրմէ ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ առաջի ն՟ր, մտցէ յականջս ն՟ր։

Խռովեցաւ և դողաց երկիր՝ և հի-
մունք լերանց սասանեցան և խռովե-
ցան, զի բարկացաւ 'ի վ՟ր ն՟ց ա՟ծ։

Ել ծուխ ՚ի բարկութենէ նր̃ . և հուր
յերեսաց նր̃ բորբոքեցաւ , և փայլա-
տակունք հատան ՚ի նմանէ ։
Խոնարհեցոյց զերկինս և էջ . և մէգ
՚ի ներքոյ ոտից նր̃ ։
Ել ՚ի քրովբէս և թռեաւ . սլացաւ
նա ՚ի թեւս հողմոց ։
Եդ զխաւար ՚ի ծածկոյթ իւր , և շուրջ
զնովաւ են յարկք իւր . և խաւարային
ջուրք՝ մինչև յամպս օդոց ։
Ի փայլատակել նր̃ առաջի նց̃ , ամպք
անցուցին զկարկուտ՝ և զկայծակու-
նս հուր ։
Որոտաց տր̃ յերկնից , և բարձրեալն
ետ զձայն իւր ՚ի կարկուտ՝ և ՚ի կայ-
ծակունս հուր ։
Առաքեաց զնետս իւր՝ և ցրուեաց
զնոսա . յաճախեաց զփայլատակունս
իւր՝ և խռովեցոյց զնս̃ ։
Երևեցան աղբերք ջուրց . և յայտնե-
ցան հիմունք աշխարհի ։
Ի սաստէ քումմէ տէր , և ՚ի շնչել
հողմոյ բարկութեան քո ։
Առաքեաց ՚ի բարձանց և ընկալաւ զիս .
ընկալաւ զիս ՚ի ջուրց բազմաց ։

Փրկեացէ զիս տէր ՚ի թշնամեաց իմոց հզօրաց՝ և յատելեաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս.

Ժամանեցին ինձ աւուրք չարչարանաց իմոց. եղև տէր հզօրիչ իմ, և եհան զիս յանդորր, փրկեաց զիս տէր՝ զի կամեցաւ զիս.

Հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում. ըստ անբծութեան իմում հատուսցէ ինձ.

Զի պահեցից զճանապարհս տեառն, և ոչ ամբարշտեցայց յԱյ իմմէ.

Զի ամենայն իրաւունք նորա առաջի իմ են. և զարդարութիւն իւր ոչ ՚ի բացեայ արար յինէն.

Եղէց և ես անբիծ ընդ նմա. և զգուշացայց յանօրէնութենէ իմմէ.

Հատուսցէ ինձ տէր ըստ արդարութե իմում. ըստ սրբութե ձեռաց իմոց՝ առաջի աչաց իմոց.

Ընդ սրբոյն՝ սուրբ եղիցիս, ընդ առն անբծի՝ անբիծ եղիցիս, ընդ ընտրելոյն ընտրեալ եղիցիս. և զթիւրսն կործանեսցես.

Կենդանի է Տր՛ եւ օրհնեալ է Ած·
եւ բարձր եղիցի Ած փրկութե իմոյ։
Ած է որ խնդրես զվրէժ իմ· եւ հնա
զանդ առնես զժողովուրդս ընդ իս։
փրկիչ իմ ՚ի թշնամեաց իմոց բարկա
ցողաց· յայնցանէ որք յարուցեալ են
՚ի վերայ իմ՝ բարձր արարեր զիս·
եւ յառնէ անիրաւէ փրկեցեր զիս։
Վն այսորիկ՝ խոստովան եղէց քեզ
՚ի հեթանոսս· եւ անուան քում սաղ
մոս ասացից· Մեծ արարեր զփրկ
կութի թագաւորի նր· առնել ողոր-
մութի ընդ օծելոյ նր դաւթի· եւ ընդ
զաւակի նր ազգէ մինչեւ յաւէտ։

******************************

Օրհնութի Մովսէսի եւ որդւոցն Իսրայէլի·
Ելից· ԺԵ։

Օրհնեսցուք զՏր, զի փա
ռօք է փառաւորեալ։
Զհեծեալս եւ զերիվարս
ընկէց ՚ի ծով· օգնական ընդունելի
իմ Տր, եւ եղեւ ինձ ՚ի փրկութի։

Սա է իմ Ա՟ծ՝ և փառաւոր առնեմ
զնա. Ա՟ծ հօր իմոյ՝ և բարձր արարից
զնա։ Տէր խորտակէ զպատերազ-
մունս, և Տ՟ր է անուն նորա։
Զընտիրս արանց՝ և զընտիրս ասպա-
զինուց, զկառս և զերիվարս, և զա՟մ
զօրութիս փարաւոնի ընկէց ՚ի ծով։
Ծով ծածկեաց զն՟ս. ընկղմեցան յան-
դունդս խորոց՝ իբրև զվէմս։
Աջ քո Տ՟ր՝ փառաւորեալ է զօրու-
թեամբ. և աջ քո Տէր՝ խորտակեաց
զթշնամիս քո։ Եւ մեծու՟թբ փառաց
քոց մանրեցեր զհակառակորդս քո.
առաքեցեր զբարկութի՟ն սրտմտութե՟ն
քոյ. և եկեր զն՟ս որ՟պ զեղէգն։
Հոգւով զօրութեան սրտմտութե՟ն քո
պատառեցան ջուրք. դէզ կացին
որ՟պ պարիսպ քարեայ ջուրք ծովուն.
և պաղեցան դիզան ալիք ջուրցն ՚ի
մէջ ծովուն։ Ասաց թշնամին. ասէ,
հալածեցից՝ հասից՝ հարից. բաժա-
նեցից զաւարն՝ և լցուցից ՚ի նոցա-
նէ զանձն իմ։



Ի

## Աղթ.

Տր տուընջեան՝ և գոյացուցիչ գի-շերոյ. որ արարեր զտիւ ՚ի զբօսանս բարեգործութեան ՚ի փրկութիւն անձանց մերոց. և զգիշեր ՚ի հանգիստ քնոյ՝ տկարացեալ բնութեան մերոյ. Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութիւն ահաւոր և փառաւորեալ անուան քում Տէր. Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք ՚ի նոյն պաշտօն քո կանխել միշտ. և նովիմբ կանոնիւս անդադար փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

### ԽՈՂՈՂՈՒԹԵԱՆ ՏԵՆԵՑՈՒՆ.

### ԱՍՏՈՒԱԾՈՅ ԵՐԿԻՐՊԱԳԵՍՑՈՒՔ.

Օ քեզ, որ յամմի գթած և մարդասէր Տէր ես՝ աղաչեմք հանապազ, զի զօրացուսցես զմեզ որ ըստ օրէն կալ ՚ի կարգի կրօնաւորութեան մերում.

Դասուք իմ արկից զնոսա • տիրեսցէ և
բարձրասցի ՚ի վերա նոցա աջ իմ ։ Նուաճե
ցեր զհողմն քո, և ծածկեցեր զնոսա ծով •
ընկղմեցան, և իջին որպէս կապար ՚ի ջուրս
սաստիկս • Ո՞ նման է քեզ յաստուածս տէր,
կամ ո՞ նման իցէ քեզ՝ փառաւորեալդ
՚ի սուրբս • Սքանչելի փառաւորեալ՝ որ
առնես զնշանս և զարուեստս • Ձգե
ցեր զձեռն քո • և էկուլ զնոսա երկիր •
Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդ
դեան քո այդմ, զոր և փրկեցեր •
Մխիթարեցեր զնոսա զօրութեամբ քով ՚ի
բանակետեղ սրբութեան քո • Լուան ազգք
և բարկացան • և երկունք կալան ըզ
բնակիչս փղշտացւոց •
Յայնժամ փութացան դքսաւորք
եդովմայ, և իշխանք մովաբացւոց •
Առեալ զնոսա դողումն • հալեցան ամենայն
բնակիչք քանանացւոց •
Անկցի ՚ի վերա նոցա ահ և դողումն • և
՚ի զօրութեն բազկի քո քարացցին •
Մինչև անցցէ ժողովուրդ քո տէր՝
մինչև անցցէ ժողովուրդս քո այս՝
զոր ստացար •

Տարեալ տնկեսցես զնոսա 'ի լերին
ժառանգութե՟ն քոյ, 'ի պատրաստութե՟
բնակութե՟ն ժառանգութե՟ քոյ։
Զոր ստացար 'ի սկզբանէ տ՟ր, սրա֊
ցար սրբութի՟՝ զոր պատրաստեցին
ձեռք քո. տ՟ր թագաւոր յաւիտենս,
յաւիտենից և ևս։
Զի եմուտ փարաւօն կառօք և ե֊
րիվարօք, և ընտիր սպառազինօք
'ի մ՟ջ ծովուն.
Եւ եած 'ի վ՟ր ն՟ց տ՟ր զջուրս ծո֊
վուն. և որդիքն իսրայէլի գնացին
ընդ ցամաք 'ի մ՟ջ ծովուն։
Փառք հօր և որդ"։

---

Մաղթանք։

Բնէ իմ ա՟ծ, և փառաւոր առ֊
նեմ զնա. ա՟ծ հօր իմոյ՝ և բարձր
արարից զնա։
Մարդասէր տ՟ր՝ վ՟ս սրբուհւոյ անա֊
րատի մօր քոյ և կուսի, և վ՟ս խաչի
քոյ պատուականի, ընկալ զաղաչանս
մեր՝ և կեցո զմեզ։

Քարոզ և աղօթք՝ Առաւօտու և Ճաշու կանոնոյն.

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք. Տէր ողորմեա։

Վասն լսելի լինելոյ առն այ ձայնի աղաչանաց մերոց, զՏր աղ։

Վասն քաւիչ և նորոգիչ լինելոյ այ ի վր մեղաց մերոց, զՏր աղ։

Վս թողլոյ մեզ զամ յանցանս մեր՝ զկամայ և զակամայ, զՏր աղ։

Վս զի մի ընդ-խոտորեալսն դատապարտեցելոց յաւուրն պատասխանատուութեան, զ։

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի քս ննջեցին, զՏր աղ։

Եւ ևս՝ միաբան, վս ճշմարիտ և ուղ հաւատոյս մերոյ, զՏր աղ։

Զանձինս մեր՝ և զմիմեանս ան այ ամենակալին յանձն արասցուք.

Ողորմեսցի մեզ տր ած մեր, ըս մեծի ողորմութեան քում. ասասցուք ամէնեան միաբանութեամբ.

Տր ողորմեա՛. տր ողորմեա՛. տր ողորմեա՛.

ծութեան ընդ ճանապարհս իմ։
Հաստատեցեր զոտըս իմ որպէս զեղ-
ջերուի, եւ ՚ի վերայ. բարձանց կա-
ցուցեր զիս։
Ուսուցեր ընդ ձեռըս իմ ՚ի պատե-
րազմ, եւ արարեր ընդ բազուկ իմ
որպէս զաղեղըն հաստ. եւ ետուր
ինձ ընդ պաշտպանութիւն փըրկու-
թեան քո։
Աջ քո ընկալաւ զիս՝ եւ խըրատ
քո կանգնեաց զիս ՚ի սպառ, եւ խը-
րատ քո ուսուսցէ զիս։
Ընդարձակեցեր ընդ գընացըս իմ ՚ի
ներքոյ իմ. եւ ոչ տըկարացան
շաւիղք իմ։
Հալածեցից ընդ թըշնամիս իմ՝ եւ
հասից նոցա, եւ ոչ դարձայց ՚ի նո-
ցանէ՝ մինչեւ ըսպառեցից ընդ նոսա։
Նեղեցից ընդ նոսա եւ այլ մի կարաս-
ցեն կեալ. եւ անկցին ՚ի ներքոյ ո-
տից իմոց։
Զգեցուցեր ինձ ընդ զօրութիւն
պատերազմի. եւ ընդ յարուցեալ


սըն

սըն 'ի վերայ իմ՝ ներքոյ իմ արա-
րեր ։

Զթըշնամիս իմ հալածականըս
արարեր, եւ զատելիս իմ սատա-
կեցեր ։

Աղաղակեցին, եւ ոչ ոք էր որ
փըրկէր ըզնոսա ։ կարդացին առ
տէր, եւ ոչ լըւաւ նոցա ։

Մանրեցից ըզնոսա որպէս փոշի
առաջի հողմոյ ։ եւ որպէս կաւ գը-
ռեհաց կոխեցից ըզնոսա ։

Փըրկեսցես զիս տէր 'ի հակառակու-
թենէ ժողովըրդոց, եւ կացուսցես
զիս գըլլուխ հեթանոսաց ։

Ժողովուրդ՝ զոր ոչ գիտէի ծա-
ռայեաց ինձ ։ եւ 'ի լուր ականջաց
լըւաւ ինձ ։

Որդիք օտարաց ստեցին ինձ ։ որ-
դիք օտարաց մաշեցան, եւ կաղա-
ցան 'ի շաւղաց իւրեանց ։

Կենդանի է տէր՝ եւ օրհնեալ
աստուած, եւ բարձր եղիցի. աստ-
ուած փըրկութեան իմոյ ։



Աստ

և ես քե՛զ համբերէի․ փրկեա՛ ա̃ծ զիս
րայէլ յա̃մ նեղութեանց նր̃։

Դ հատուած․ Աղօթամատուցէ։ ԻԵ

Դատ արա ինձ տ̃ր՝ զի ես յամբծութե̃ն
իմում գնացի․ ի տ̃ր յուսացայ՝ զի մի՛
եղէց հիւանդ։
Փորձեա՛ զիս տ̃ր և քննեա՛ զիս․ փոր-
ձեա՛ զերիկամունս իմ և զսիրտ իմ։
Ողորմութի̃ն քո տ̃ր առաջի աչաց իմոց․
և հաճոյ եղէց ճշմարտութե̃ն քում։
Ո՛չ նստայց ես յատեան նանրաց․ և
ընդ անօրէնս ես ո՛չ մտից։
Ատեցի ես զժողովս չարաց․ և ընդ
ամբարշտաց ես ո՛չ նստայց։
Լուացից սրբութի̃բ զձեռս իմ․ և շուրջ
եղէց զսեղանով քով տ̃ր։
Լսել ինձ զձայն օրհնութե̃ն քո․ և պատ
մել զա̃մ սքանչելիս քո։
Տ̃ր սիրեցի զվայելչութի̃ն տան քո՝ և
զտեղի յարկի փառաց քոց։
Մի՛ կորուսաներ ընդ ամբարշտաց
զանձն իմ․ և մի՛ ընդ արս արիւնա-
հեղս զկեանս իմ։

Որոց ձեռք խաբեանց յանօրէնութե
են. եւ աջ նոցա լի է կաշառօք։
Այս յամբծութե իմում գնացի. փրկեա
զիս Տր եւ ողորմեա ինձ։
Ոտն իմ կացցէ յուղղութե. յեկեղե-
ցիս մեծս օրհնեցից զքեզ։

Սաղմոս դաւթի. մինչչեւ օծանէր։ ԻԶ.

Տր լոյս իմ եւ կեանք իմ՝ ես յումմէ՞
երկեայց. Տր ապաւէն կենաց իմոց՝
ես յումմէ՞ դողացայց։
Ի մերձենալ առ իս չարաց՝ ուտել զմ-
արմին իմ. նեղիչք իմ եւ թշնամիք
իմ, նոքա տկարացան եւ անկան։
Թէ պատրաստեսցի ի վր իմ պատե-
րազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. եւ թէ յարի-
ցէ ի վր ճակատամարտ, սակայն եւ այն-
ու իկ ի քեզ Տր յուսացայ։
Զմի խնդրեցի ի Տնէ, եւ զայն աղա-
չեմ. բնակել ինձ ի տան Տն զամ
աւուրս կենաց իմոց։
Տեսանել ինձ զքաղցրութի Տն. եւ հրա-
մանս տալ ի տաճարի նորա։
Ծածկեաց զիս ի խորանի իւրում


ի

յաւուր չարի. ընդ յարկաւ արար զիս
'ի ծածկոյթ խորանի իւրում։

'Ի վիմէ բարձր արարեր զիս. և այժմ
բարձր արա զգլուխ իմ 'ի վերայ թշ-
նամեաց իմոց։

Շուրջ եղէց և մատուցից 'ի խորանի
նորա պատարագ օրհնութե. օրհնեցից
և սաղմոս ասացից տն։

Լուր տր ձայնի իմում զի կարդացի
առ քեզ. ողորմեա ինձ և լուր ինձ՝ զի
քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին ե-
րեսք իմ՝ զերեսս քո տր խնդրեցից։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո 'ի-
նէն. և մի՛ խոտորիր բարկութբ 'ի
ծառայէ քումմէ։

Օգնական իմ լեր ած՝ մի՛ անարգեր
զիս. և մի՛ թողուր զիս ած փրկիչ իմ։

Հայր իմ և մայր իմ թողին զիս. և տր
իմ ընկալաւ զիս։

Օրէնսդրեա արա զիս տր 'ի ճանապար-
հի քում. և առաջնորդեա ինձ 'ի շա-
ւիղս քո ուղիղս։

Վս թշնամեաց իմոց, մի՛ մատներ զիս
'ի ձեռս նեղչաց իմոց։

Յարեան ՚ի վերայ իմ վկայք մեղաց. և ստեցին ինձ յանօրէնութե իւրեանց։ Հաւատացի տեսանել զբարութի տն յերկրին կենդանեաց. համբերեա տն և քաջալերեաց. զօրասցի՛ սիրտ քո և համբերեա տեառն։

## Սաղմոս Դաւթի. ԻԷ.

Առ քեզ տէր կարդացիած իմ, մի՛ լռեր յինէն. մի՛ երբէք լռեսցես յինէն. նմանեցայց այնոցիկ՝ որք իջանեն ՚ի գուբ։

Լուր տէր ձայնի խնդրուածոց իմոց՝ յաղաչել ինձ առ քեզ. ՚ի համբառնալ ձեռաց իմոց ՚ի տաճար սբ քո։

Մի՛ համարիր ընդ ամբարշտաց զանձն իմ. և մի՛ ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութի՝ կորուսանէր զիս։

Որք խօսին զխաղաղութի ընդ ընկերս իւրեանց՝ և չարութի է ՚ի սիրտս նց։

Տուր նց տէր ըստ գործոց նց. և ըստ անօրէնութե գնացից նց՝ հատո՛ նց։

Ըստ գործոց ձեռաց նոցա հատո՛ նց
զհատուցումն նց, նոցին։
Ո՛չ խելացան նոքա զգործս տն. և ոչ
'ի գործս ձեռաց նր հայեցան. կործա
նեսցես զնս, և այլ մի՛ շինեսցես։
Օրհնեալ է տր՝ զի լուաւ ձայնի աղօթից
իմոց. տր օգնական իմ և պաշտպան իմ.
'ի նա յուսացաւ սիրտ իմ. օգնեցաւ
և զուարճացաւ մարմին իմ. և ես կա
մօք իմովք խոստովան եղէց նմա։
Տր զօրութի ժողովրդեան իւրոյ.
ապաւէն փրկութե օծելոյ իւրոյ։
Փրկեա՛ զժողովուրդս քո. և օրհնեա՛
ժառանգութիւ քո. հովուեա՛ և բարձ
րացո՛ զնս մինչև յաւիտեան։
Սաղմոս դաւթի. օրհնութե նաւակատեաց տա
ճարին։ ԻԸ
Մատուցէք տն որդիք այ. մատու
ցէք տն զորդիս խոյոց։
Մատուցէ՛ք տն զփառս և զպատիւ.
և մատուցէք տն զփառս անուան նր. և
երկիրպագէք տն 'ի գաւիթ սրբութե նր։
Ձայն տն 'ի վր ջուրց՝ և ած փառաց ո
րոտաց. և տր ինքն 'ի վր ջուրց բազմաց։
Ձայն

Ձայն տն զօրութեց, և ձայն տն մեծվայելչութեց։

Ձայն տն փշրէ զմայրս. և մանրէ տր զմայրսն լիբանանու։

Մանրեսցէ զնս ոպ զմատաղատունկն լիբանանու. որ սիրելին է ոպ զորդիս միեղջերուի։

Ձայն տն հատանէ զբոց ի հրոյ. ձայն տն շարժէ զանապատն, և խռովեցուցանէ տր զանապատն կադէս։

Ձայն տն հաստատէ զեղջերուս. և յայտնի առնէ զանտառս։

Ի տաճարի նր ամենեքեան ասասցեն զփառս նորա։

Տր զջրհեղեղս նստուցանէ և ցածուցանէ. թագաւորեսցէ տր յաւիտեան։

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ. և օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղութի։

Սաղմոս Դաւթի. ի նոյն։ ԻԹ

Բարձր առնեմ զքեզ տր, զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ ինև։

Տէր Աստուած իմ՝ կարդացի առ քեզ, եւ բը
ժշկեցեր զիս. Տէր հաներ ՚ի դժոխոց
զանձն իմ. եւ փրկեցեր զիս յայնցանէ,
որք իջանեն ՚ի գուբ։

Սաղմոս ասացէք Տեառն սուրբք նորա. եւ խոստո
վանեցարուք յիշատակի սրբութեան նորա։

Սրտմտութիւն է ՚ի բարկութեան նորա. եւ
կեանք են ՚ի կամաց նորա։

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առա
ւօտու եղիցի ուրախութիւն։

Ես ասացի ՚ի բարեկենդանութեան իմում,
թէ ոչ սասանեցայց յաւիտեան։

Տէր ՚ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօ
րութիւն, դարձուցեր զերեսս քո յինէն՝
եւ ես եղէ խռովեալ։

Առ քեզ Տէր կարդացի, եւ առ Աստուած իմ
աղաղակեցի. զի՞նչ օգուտ է քեզ յարե
նէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութիւն։

Մի՞ թէ հող խոստովան առնիցի առ
քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւն քո։

Լուաւ ինձ Տէր՝ եւ ողորմեցաւ. եւ Տէր
եղեւ ինձ օգնական։

Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, է
զերծ յինէն զքուրձ. եւ ինձ զգեցոյց



զու

զուարճութիւն։

Զի սաղմոս ասասցեն քեզ փառք իմ․ և ոչ մի՛ եւս զղջացայց․ տէր ած իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ։

Ի կատարած․ նուագարանաց Դաւթի․

Սաղմոս Դաւթի։ Լ.



քեզ տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան․ յարդարութե քում փրկեա և ապրեցո զիս։

Խոնարհեցո առ իս զունկն քո․ վաղվաղեա կեցուցանել զիս։

Լեր իմ ած պաշտպան՝ և տուն ապաւէնի ապրեցուցանել զիս․ զի հզօրութիւն իմ և ապաւէն իմ դու ես։

Եւ վասն անուան քո տէր առաջնորդեցեր ինձ, և սնուցեր զիս․ և հանցես զիս յորոգայթէ յայսմանէ, որ թագուցան ինձ։

Զի դու ես պաշտպան իմ տէր, և ՚ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ։

Փրկեցեր զիս տէր ած ճշմարտութե քով․ ատեցեր զայնոսիկ որք պահեն



զնր

զերկիւղ ի սնոտիս։

Ես ի Տէր յուսացայ, ցնծացայց եւ ու-
րախ եղէց ի փրկութեան քում։

Զի հայեցար ի խոնարհութիւն իմ. եւ
փրկեցեր ի վշտաց զանձն իմ. եւ ոչ
մատնեցեր զիս ի ձեռս թշնամեաց իմոց.
եւ կացուցեր յանդորրու զոտս իմ։

Ողորմեա ինձ Տէր, զի նեղեալ եմ ես.
խռովեցաւ ի սրտմտութենէ ակն իմ՝
անձն իմ եւ փոր իմ։

Պակասեցան ի ցաւոց կեանք իմ. եւ
ամք իմ յոգւոց ելանելոյ։

Տկարացաւ ի տկարութենէ զօրութիւն
իմ. եւ ոսկերք իմ խռովեցան։

Քան զամ թշնամիս իմ եղէ ես նա-
խատ դրացեաց իմոց, յոյժ ահ եւ եր-
կիւղ ծանօթից իմոց։

Ամենեքեան որք տեսանէին զիս, ար-
տաքս փախչէին յինէն։

Մոռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սըր-
տէ. եւ եղէ ես որպէս զանօթ կորուսեալ։

Զի լուայ ես զբամբասանս ի բազմաց՝
որք շուրջ էին զինեւ. ի ժողովել նոցա
ի միասին, առնուլ զանձն իմ խորհե-
ցան.

ցան. այլ ես ՚ի քեզ տէր յուսացայ։

Ասացի դու ես Աստուած իմ. և ՚ի ձեռս քո է ժառանգութիւն իմ։

Փրկեա՛ զիս ՚ի ձեռաց թշնամեաց ի-
մոց, և ՚ի հալածչաց իմոց։

Երևեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս քո. ապրեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում. տէր մի՛ յամօթ եղէց, զի կարդացի առ քեզ։

Ամաչեսցեն ամբարիշտք, և իջցեն ՚ի դժոխս. համր եղիցին շրթունքն նենգաւորք, որք խօսէին զօրդարոյ զանի-
րաւութիւն, յամբարտաւանութիւն և յանարգա-
նս իւրեանց։

Ո՜րչափ բազում է ողորմութիւն քաղցրութեան քո տէր. զոր պահեցեր երկիւ-
ղածաց քոց։

Արարեր դու այնոցիկ, որք յուսացեալ են ՚ի քեզ. առաջի որդւոց մարդկան։

Ամրացուցեր զնոսա ՚ի ծածկոյթ երե-
սաց քոց՝ ՚ի խռովութենէ մարդկան։

Ծածկեցեր զնոսա ՚ի խորանի քում, ՚ի հակառակութենէ լեզուաց։

Օրհնեալ է տէր, զի սքանչելիս արար,

զողորմութիւն իւր ՚ի քաղաք ամուր։
Ես ասացի ՚ի զարմանալ իմում, թէ
ընկեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։
Վասն այսորիկ լուար ձայնի աղօթից
իմոց. յաղաղակել իմում առ քեզ։
Սիրեցէք զտր ամ սուրբք նր, զի ըզ-
ճշմարտութիւն խնդրէ տր. և հատուցանէ
այնոցիկ, որք առաւել առնեն զամբար-
տաւանութիւն։
Քաջալերացարուք և զօրասցին սիրտք
ձեր, ամքն՝ որք յուսացեալ էք ՚ի տր։

Սաղմոս Դաւթի։ ԼԱ.

Երանի, ում թողութիւն եղև մեղաց.
և ծածկեցան ամ յանցանք նր։
Երանի առն՝ որում ոչ համարի տր զմեղս
նր. և ոչ գոյ նենգութիւն ՚ի բերան նր։
Լռեցի ես՝ և մաշեցան ամ ոսկերք
իմ, առ աղաղակել իմն առ տր զօրհա-
նապազ ՚ի տուէ և ՚ի գիշերի։
Ծանրացաւ ձեռն քո ՚ի վր իմ. դարձայ
՚ի թշուառութիւն, զի հարան յիս փուշք։
Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէ-
նութիւն իմ ոչ ծածկեցից ՚ի քէն։


Ասա

Ասացի՝ թէ պատմեցից ինձէն զմեղս իմ. և դու թողցես զամ ամբարշտութիւնս մեղաց իմոց.

Վս այսորիկ յաղօթս կացցեն առ քեզ ամ սբք, 'ի ժամ ընդունելի.

Բայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց. որք առ նմ ինչ ոչ մերձեսցին.

Դու ես ապաւէն իմ 'ի նեղութէ յայսմանէ, որ շուրջ եղեն զինև.

Ցնծութի իմ, փրկեա զիս յայնցանէ՝ որք պաշարեցին զիս.

Իմաստուն արարից զքեզ՝ և խելամուտ 'ի ճանապարհ յոր և գնասցես. և հաստատեցից 'ի վր քո զաչս իմ.

Մի՛ լինիք որպ զձի և զջորի. զի ոչ գոյ 'ի նոսա իմաստութի. 'ի սանձս և 'ի դանդանաւանդս ձմլեսցես զկզակս նոցա, որք առ քեզ ինչ ոչ մերձեսցին.

Բազում տանջանք են մեղաւորաց. բայց որք յուսան 'ի տր՝ ողորմութի նա շուրջ եղիցի զնոքօք.

Ուրախ եղերուք և ցնծացէք արդարք, 'ի տր պարծեցարուք ամքն՝ որք ուղիղ էք սրտիւք.

Ցնծացէք արդարք ՚ի Տ՟ր՝ ուղ-
ղոց վայել է օրհնութի՟ւ. խոստո
վան եղերուք Տ՟ն օրհնութե՟բ.
տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս
ասացէք նմա։

Օրհնեցէք զՏ՟ր յօրհնութի՟ն նոր՝ զի բա-
րւ է. սաղմոս ասացէք նմա օրհնութ՟բ։
Ուղիղ են պատգամք Տ՟ն. և ա՟մ գործք
նր՟ հաւատովք են. և սիրէ զողորմու-
թիւն և զիրաւունս Տ՟ր։
Ողորմութե՟բ Տ՟ն լի եղև երկիր, և բա-
նիւ Տ՟ն երկինք հաստատեցան. և հո-
գւով բերանոյ նր՟ ա՟մ զօրութիւնք նց՟։
Ժողովեաց որպ՟ ՚ի տիկ զջուրս ծովու.
և դնէ ՚ի խորս զգանձս իւր։
Երկիցէ ՚ի Տ՟նէ ա՟մ երկիր. և ՚ի նմանէ
դողասցին ա՟մ բնակիչք աշխարհի։
Զի նա ասաց՝ և եղեն. ինքն հրամայ-
եաց՝ և հաստատեցան։
Տ՟ր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց.
անարգէ Տ՟ր զխորհուրդս ժողովրդոց.
և արհամարհէ Տ՟ր զխորհուրդս իշխանաց։
Խորհուրդ Տ՟ն յաւիտեան մնայ, և խոր

հուրդ սրտի նր ազգէ մինչև յազգ.
Երանի՛ ազգի՛ որոյ տր ած օգնական
է նմա. ժողովուրդ զոր ընտրեաց
ժառանգութի իւր։
Յերկնից նայեցաւ տէր. յամ որդիս
մարդկան. 'ի պատրաստ բնակութէ իւր
մէ հայեցաւ յամ բնակիչս աշխարհի։
Ստեղծ առանձին զսիրտս նց, 'ի միտ
առնու զամ գործս նց։
Ո՛չ թէ 'ի բազում զօրս իւր ապրեսցէ
թագաւոր, և ո՛չ հսկայ 'ի բազում զօ-
րութե իւրում։ Սուտ է՛ ձի 'ի փրկութե
իւրում. 'ի բազում զօրութե իւրում
ո՛չ ապրեցուցանէ զհեծեալն։
Աչք տն 'ի վր երկիւղածաց իւրոց.
և ոյք յուսան յողորմութի նր։
Փրկել 'ի մահուանէ զանձինս նց. և
կերակրել զնս 'ի սովու։
Անձինք մեր համբերեսցեն տն. զի
օգնական և պաշտպան մեր է։
'Ի նա ուրախ եղիցին սիրտք մեր, և
յանուն սբ նր յուսացուք։
Եղիցի՛ ողորմութի քո տր 'ի վր մեր.
որպէս յուսացաք 'ի քեզ։

Սաղմոս Դաւթի․ յորժամ այլակերպեաց զերեսս իւր առաջի Աբիմելիքայ․ և արձակեաց զնա՝ գնաց․ ԼԳ։

Օրհնեցից զՏր յամ ժամ, յամ ժամ օրհնութի նր ՚ի բերան իմ։
Ի Տր պարծեսցի անձն իմ․ լուիցեն հեզք, և ուրախ եղիցին։
Մեծ արարէք զՏէր ինև․ և բարձր արասցուք զանուն նր ՚ի միասին։
Խնդրեցի ՚ի Տնէ և լուաւ ինձ․ յամ նեղութենէ իմմէ փրկեաց զիս։
Մատիք առ Տէր՝ և առէք զլոյս․ և երեսք ձեր մի ամաչեսցեն։ Այս աղքատ կարդաց առ Տր, և Տր լուաւ նմա․ յամ նեղութէ սորա փրկեաց զսա։
Բանակք հրեշտակաց Տն շուրջ են զերկիւղածովք իւրովք, և պահեն զնս։
Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տր․ երանեալ է այր՝ որ յուսայ ՚ի նա։
Երկերուք ՚ի Տնէ ամ սրբք նր․ զի ոչ ինչ է պակասութի երկիւղածաց նր։
Մեծատունք աղքատացան և քաղցեան․ բայց որք խնդրեն զՏր, մի՛ պակասեսցի ՚ի նոցանէ ամ բարութի։

Եկայք որդեակք իմ՝ լուարուք ինձ.
և զերկիւղ տն ուսուցից ձեզ:
Ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս, սիրէ
զաւուրս իւր տեսանել ՚ի բարութե.
Լռեցո՛ զլեզու քո ՚ի չարութենէ. և շրթ
թունք քո մի՛ խօսեսցին զնենգութի:
Խոտորեա՛ ՚ի չարէ՝ և արա՛ զբարի. խնդ
րեա՛ զխաղաղութի, և երթ զհետ նր.
Աչք տն ՚ի վր արդարոց, և ականջք
նր ՚ի վերայ աղօթից նց:
Երեսք տն ՚ի վր չարագործաց. սատա
կել յերկրէ զյիշատակս նց:
Կարդացին արդարքն առ տր, և տէր
լուաւ նց. յամ նեղութե նց փրկեաց զնս:
Մերձ է տր առ այնոսիկ՝ որք մաշեալ
են սրտիւք. և զխոնարհս հոգւով
կեցուսցանէ:
Բազում նեղութիւնք են արդարոց. յամե
փրկէ զնս տր. և պահէ զամ ոսկերս
նց. և մի՛ ՚ի նոցանէ մի՛ փշրեսցի:
Մահ մեղաւորին չար է. և որք ատէ
զարդարն, զղջասցի:
Փրկէ տր զանձինս ծառայից իւրոց. մի՛
զղջասցին ամենքն՝ որք յուսացեալ են ՚ի նա:


՚Ի

Ի կատարած. Սաղմոս Դաւթի։

ԼԴ

Դատեա՛ Տէր զայնոսիկ՝ որք դատեն զիս. մարտեա ընդ այնոսիկ, որք մարտնչին ընդ իս։

Առ զզէն և զասպար քո, և արի՛ յօգնել ինձ. հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել զնոսա. և ասա զանձն իմ, թէ փրկութիւն քո եմ ես։

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք խնդրեն զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, որք խորհին ինձ չար։

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ. և հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա։

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար և ի գայթակղութիւն, և հրեշտակ Տեառն հալածեսցէ զնոսա։ Ի նանիր թագուցին ինձ որոգայթ յապականութիւն իւրեանց, և ի նանիր նախատեցին զանձն իմ։

Հասցէ ի վերայ նոցա որոգայթ, զոր ոչ գիտասցեն. և որսն՝ զոր թագուցին, առցէ զնոսա. և յորոգայթ ի նոյն անկցին։

Իսկ անձն իմ ցնծասցէ ի Տէր. ուրախ



եղի

եղիցի ՚ի փրկութեն նր՟, և ամ՟ ոսկերք իմ
ասասցեն, տր՟ ո՞ նման է քեզ։

Որ փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հզօ-րի, զաղքատն և զտնանկն յոյնցանէ՝ որք յափշտակեն զնա։

Յարեան ՚ի վր՟ իմ վկայք չարեաց. և զոր ինչ ոչ գիտէի՝ հարցանէին զիս։

Հատուցին ինձ չար փոխանակ բր՟ բար-ւոյ. անժառանգել զանձն իմ խորհե-ցան յորդւոց ՚ի մարդկանէ.

Ես ՚ի նեղել նց՟ քուրձ զգենուի. խո-նարհ առնէի պահօք զանձն իմ. և ա-ղօթք իմ ՚ի ծոց իմ դարձցին։

Որպէս զեղբայր և զընկեր՝ այնպէս հաճոյ լինէի. որպէս զսգաւոր և զտրտում, այն-պէս խոնարհ առնէի։

՚Ի վր՟ իմ ուրախ եղեն՝ և ժողովեցան. ժողովեցան յիս տանջանք, և ես ոչ ծա-նեայ. ցրուեցան, և ոչ զղջացան։

Փորձեցին զիս՝ և արհամարհեցին ար-համարհանօք. կրճտեցին ՚ի վր՟ իմ զա-տամունս իւրեանց. տր՟ երբ տեսցես.

՚Ի բաց արա զանձն իմ ՚ի խորամանկու-նց՟, և յառիւծուց զմիամօրութի իմ։



Խոս

Խոստովան եղէց քեզ տէր՝ յեկեղեցիս մեծս. և 'ի ժողովս բազմաց օրհնեցից զքեզ:

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ, որք ատեցին զիս 'ի տարապարտուց. ակն արկին ատենէին յիս աչօք իւրեանց:

Ընդ իս զխաղաղութիւն խօսէին. և ինքեանք բարկութեամբ զնենգութիւն խորհէին:

Լայնեցին 'ի վերայ իմ զբերանս իւրեանց, և ասացին՝ այո այո տեսին աչք մեր:

Տեսեր տէր՝ և մի՛ լռեր. տէր՝ մի՛ 'ի բացեայ առներ յինէն.

Զարթիր և հայեա՛ց տէր՝ յիրաւունս իմ. աստուած իմ և տէր իմ 'ի դատաստանս իմ. և իրաւ արա ինձ ըստ արդարութեան քում, տէր աստուած իմ:

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. և մի՛ ասասցեն 'ի սիրտս իւրեանց, թէ վա՛շ վա՛շ անձանց մերոց, զի ընկլուզաք զնա:

Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ որք խնդան ընդ չար իմ. զգեցցին զամօթ և զանարգանս՝ որք մեծաբանեն 'ի վերայ իմ:

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որք կամին ընդ արդարութեան իմ:



Լեզու

Ասասցեն յամ ժամ, մեծ է ած․ և որք կամին զխաղաղութի ծառայի քո։
Եւ լեզու իմ խօսեսցի զարդարութիս քո․ զօրհնաբանաղ զգովութիս քո։

Ի կտրծ, ծառայի տն․ Սաղմոս դաւթի։ ԼԵ

Ասէ անօրէնն ի մեղանչել ընդ միտս իւր, թէ չիք երկիւղ այ առաջի աչաց նր․
Նենգեաց առաջի նր, գտանել զանօրէնութի, և ատել զնա։
Բանք բերանոյ նր՝ անօրէնութի և նենգութի են։
Ոչ կամեցաւ նա իմանալ զբարիս․ զանօրէնութի խորհեցաւ յանկողնի իւրում։
Եկաց նա յամ ճանապարհ, որ ոչ է բարի․ և չարէ նա ոչ ձանձրացաւ։
Տր՝ յերկինս է ողորմութի քո․ ճշմարտութի քո մինչև յամպս։
Արդարութի քո որպ լերինք այ․ իրաւունք քո որպ խորք բազումք․ զմարդիկ և զանասուն կեցուսցանես դու տր։
Որպ զի բազում արարեր զողորմութի քո այ․ այլ որդիք մարդկան ի հովանի թևոց քոց յուսասցին։

 Ար

Արբեսցին նոքա ՚ի պարարտութենէ տան
քո. և զուղխս փափկութեան քո տացես
ըմպել նոցա.

Ի քէն է որ աղբիւր կենաց. և լուսով
երեսաց քոց տեսանեմք զլոյս:

Ձգեա՛ զողորմութիւնս քո՝ որք ճանա_
չեն զքեզ, զարդարութիւն քո՝ որք
ուղիղ են սրտիւք.

Մի՛ եկեսցեն ՚ի վր մեր ոտք ամբարտա_
ւանից. և ձեռք մեղաւորաց մի՛ դողա_
ցուսցեն զմեզ.

Անդ անկցին ամէնքն՝ որք գործեն զանօ_
րէնութիւն. մերժեսցին և ոչ մի՛ կարա_
ցեն հաստատել:

Օրհնութի Ծննդին Աստուածածնին տօնական Մար-
գարէից: է. Օրհնոյ. ԼԵ.



այեցարո՛ւք երկինք, և խօսե
ցայց. լուիցէ երկիր զբանս
բերանոյ իմոյ:

Ընդունեսցի իբրեւ անձրեւ բարբառ
իմ. և իջցեն որպէս ցօղ՝ պատգամք իմ.



Իբր

Որպ անձրեւ ՚ի վր աւգոյ, որպ տարափ ՚ի
վր խոտոյ. զի զանուն տն կարդասցուք.
և տուք օրհնութիւն տն այ մերոյ:
Ած՝ որոյ ճշմարտութիւն են գործք նր. և
ամ ճանապարհք նր իրաւամբք են.
Ած հաւատարիմ է, և ոչ գոյ ՚ի նմա ա-
նիրաւութիւն. արդար և ճշմարիտ է տր:
Մեղան՝ և ոչ նմա՝ որդիքն արատոյ.
ծնունդք խոտորեալք և թիւրեալք:
Այդ այն է՝ զոր տն հատուցանէք
դուք՝ ժողովուրդք. յիմարք և ոչ իմաս-
տունք:
Ո՞չ սա ինքն է հայր քո, որ ստացաւ
զքեզ, արար զքեզ՝ և ստեղծ զքեզ:
Յու՛շ լիցին քեզ աւուրքն յաւիտե-
նից. իմացարու՛ք զամս ազգաց մինչև
յազգս.
Հարցի՛ր դու ցհայր քո, և պատմես-
ցէ քեզ. ցծերս քո՝ և ասասցեն քեզ:
՚Ի ժամանակի՝ յորժամ բաժանեաց
բարձրեալն զազգս ամ. որոց սփռեաց
նա զորդիսն ադամայ:
Կացոյց սահմանս հեթանոսաց, ըստ
թուոյ հրեշտակաց այ:

Եղև բաժին տն ժողովուրդ իւր յակոբ · և վիճակ ժառանգութե իւրոյ իսրայէլ:

Բաւական եղև նմա յանապատի · ի ծարաւ տօթոյ յանջրդուոջ պաշտպանեաց զնա:

Խրատեաց զնա, և պահեաց որպ բիբ ական · որպ զարծուի ի թևս իւր ընկալաւ զնա. և որպ ի վր ձագուց իւրոց գթացաւ:

Տարածեաց զթևս իւր, և ընկալաւ զնա · և բարձեալ բերէր զնա ի վերայ միջնոլաց իւրոց:

Տէր միայն ածէր զնս · և ոչ գոյր ընդ նս ած օտար:

Ած եհան զնս ի զօրութիւն երկրի · և կերակրեաց զնս արդեամբք անդաստանաց:

Դիեցոյց նց մեղր՝ ի վիմէ, և իւղ՝ յապառաժ վիմէ:

Իւղ կովուց՝ և կաթն մաքեաց, ճարպով հանդերձ՝ խոյոց, որթուց, ցլուց և նոխազաց:

Օ պարարտութ երինկամանց ցորենոյ. և

 զա

զարիւն խաղողոյ էարբ գինի.
Եկեր Յակոբ եւ յագեցաւ, եւ անդու-
շեաց զսիրելին:
Գիրացաւ՝ ստուարացաւ՝ լայնացաւ,
եթող զՏր ած զարարիչ իւր. եւ յետս
եկաց յայյ փրկչէ իւրմէ.
Բարկացուցին զնա օտարոտիւք իւր-
եանց. եւ կռովք իւրեանց դառնա-
ցուցին զնա.
Զոհեցին դիւաց՝ եւ ոչ այյ, դիցն՝ զորս
ոչ գիտէին. նորք եւ առժամայինք, զորս
բնաւ ոչ ճանաչէին հարքն նց.
Թողին զՏր՝ որ ծնաւ զնս. մոռացան
զած՝ որ կերակրեաց զնս:
Ետես Տր եւ նախանձեցաւ. եւ սրտմտե-
ցաւ ի վր ուստերաց եւ դստերաց նց,
եւ ասէ:
Դարձուցից զերեսս իմ ի նոցանէ. եւ
ցուցից նց զինչ լինելոց իցէ յապայ
ժամանակի.
Զի ազգ մի թիւր են նոքա՝ եւ որդիք
անհաւատք. նոքա նախանձեցուցին զիս
ի չաստուածս իւրեանց. եւ դառնա-
ցուցին զիս ի կուռս իւրեանց.


Եւ ես

Որդ՝ և ես նախանձեցուցից զնա յազ-
գ անպիտան . և անմիտ ազգաւ զկծեցու-
ցից զնա։
Փառք Հօր և որ"։

Մաղթանք։

Զի՞նչ փառս տաց, զի՞նչ օրհնութիւն մատուցանիցեմ Երախտաւորին յաւիտենից, որ միշտ ողորմածա-ցեալ և կեցուցանէ։ Ամենակալ Տէր՝ Տէր որ"։

Բարերար և աղօթք՝ Խորհրդոց պատմեն և Տէր ապաւէն հանապազ։

Առ ի գիշերի և ի տուէնջեան, և յամ ժամու խօսիլ մեզ զբանս տն, զոր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Առ չարչարանելոյ մեզ ի փորձութի, ո-րում ոչ կարեմք համբերել, զոր"։

Առ անբիծ և անդատապարտ կալ մեզ առաջի ահեղ ատենին քո, զոր"։

Առ առաջնորդելոյ մեզ ի նաւահան-գիստն կենաց անվախճանից, զոր"։

Առ արժանի լինելոյ մեզ մերին կող-մանն՝ և երկնից արքայութեն, զոր"։

Առ Հօր"։ Նա ես միա"։ Օ ամենիմա։
Ողորմեսցի։



Որօն

# Աղօթք։

Ի գիշերի և 'ի տուընջեան և յամ ժա-
մու զքեզ աղաչեմք, և 'ի քէն խնդ-
րեմք մարդասէր տէր։ Տուր մեզ ած
փրկիչ մեր. խոնարհեցո՛ ունկն քո 'ի
խնդրուածս մեր. զի մի՛ ունայն լիցին
վաստակք ծառայից քոց. այլ՝ համա-
րեա՛ զաշխատութիւնս մեր 'ի գործ ար-
դարութե, և 'ի պտուղ ածպաշտութե։
Ընկա՛լ տէր՝ զաղօթս և զերկրպագութիս
մեր, և հաստա՛ մեզ զողորմութիւն
քո առատապէս. ծածկեա՛ զմեզ ընդ
հովանեաւ ամենազօր աջոյ քո. զօր.ցո՛
զմեզ տէր՝ զօրութե սբ հոգւոյդ. պահեա՛
զմեզ ամ̃ չարեաց։ Եւ արա՛ առ մեզ
նշան բարի, 'ի գովեստ և 'ի փառաբա-
նութի անուան քում սբյ։ Զի 'ի քո
փառս կատարի ամ արարածոց մշտնջե-
նաւոր փառաբանութի 'ի բարձունս,
հօր և որդւոյ և հոգւոյդ սբյ.
այժմ և միշտ, և յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

Սաղմոս Դաւթի. Լ.Զ.



Ի՛ՆԱԽԱՆՁ

ձիր ընդ չարս.
և մի՛ ընդ այնոսիկ՝ որք
գործեն զանօրէնութի
Զի իբր խոտ վաղվա֊
ղակի ցամաքեսցին.
որպէս զդալար խոտոյ
վաղվաղակի անկ֊
ցեն.

Յուսա՛ ի Տէր՝ և արա՛ զքաղցրութի. բնա֊
կեա՛ յերկրի, և հովուեսցիս ի մեծութեն
նորա.

 Փափկեա՛

Վայելեա՛ ի տեառնէ, և նա տացէ քեզ
զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛ առա-
ջի տն զճանապարհս քո, և յուսա՛ ի նա.
Նա արասցէ և հանցէ որպս զլոյս զար-
դարութիւն քո. և զիրաւունս քո որպ
զօր հասարակ.

Հնազանդ լեր տն՝ և ծառայեա՛ նմա.
և մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց ա-
ռաջեալ իցեն ճանապարհք իւրեանց,
ընդ մարդոյ՝ որ գործէ զանօրէնութի:
Լռեա՛ ի բարկութէ, և հանգի՛ր ի
սրտմտութէ, և մի՛ նախանձիր ընդ չարս.
Զի չարք փողփողակի սատակեսցին.
բայց որք համբերեն տն, նոքա ժա-
ռանգեսցեն զերկիր.

Փոքր մի՝ և այլ ոչ ևս իցէ ամբարիշտն.
խնդրեսցես զտեղի նր, և ոչ գտցես.
Իսկ որ հեզքն են՝ նոքա ժառանգես-
ցեն զերկիր. և փափկասցին ի բազում
խաղաղութե իւրեանց.

Սպասէ մեղաւորն արդարոյ, և կրճտէ
ի վր նր զատամունս իւր. այլ տր ծի-
ծաղեսցի զնովաւ. Քանզի յառաջագոյն
տեսանէ. զի հասեալ է օր նր.

Սուր հանէին մեղաւորք, և լարեցին զա-
ղեղունս իւրեանց՝ հարկանել զաղքա-
տըն և զտնանկըն · սպանանել զայն՝ որ
խոնարհն է սրտիւ ·

Սուրք նոցա մտցեն ՚ի սիրտս նոցա, և
աղեղունք նց̅ փշրեսցին ։

Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ, քան
զբազում մեծութի̅ մեղաւորաց · և բա-
զուկք ամբարշտաց խորտակեսցին ·

Հաստատէ տէր զարդարս, և ճանաչէ
զաւուրս անբծից, ժառանգութի̅ նց̅
յաւիտեան եղիցի ·

Ո՛չ ամաչեսցեն նոքա ՚ի ժամանակս չա-
րուե̅ · այլ յաւուրս սովու յագեսցին ։

Զի մեղաւորք կորիցեն · այլ թշնամիք
տն̅ ՚ի փառաւորել և ՚ի բարձրանալ իւ-
րեանց՝ ապականեսցին ոպ̅ ծուխ, զի ապականի

Փոխ առնու մեղաւորն՝ և ոչ հատու-
ցանէ · այլ որ արդարն է՝ ողորմի և տայ ·

Ոյք օրհնեն զտր̅՝ ժառանգեսցեն զեր-
կիր · և ոյք անիծանեն, սատակեսցին ՚ի
նմանէ ։ ՚Ի տն̅է ուղղին գնացք առն ·
զճանապարհս նր̅ նա կամի յոյժ ·

Թէպ̅ և գայթակղեսցի, նա մի՛ կոր-

ծանեայցի․ զի տէր ձեռնհաս է նր։
Մանուկ էի ես՝ և ծերացայ․ և ոչ
տեսի զարդարն արհամարհեալ, և ոչ
զաւակ նր՝ թէ մուրանայ հաց․
Զօրհանապազ ողորմի և տայ փոխ․ զա_
ւակ նր օրհնեալ եղիցի յաւիտեան։
Խոտորեա՛ 'ի չարէ, և արա՛ զբարի․ և
բնակեսցես յաւտնս յաւտնից 'ի նմա։
Տր սիրէ զիրաւունս, և ոչ է մայր հար_
կանէ զսուրբս իւր․ այլ յաւն պահէ զնս։
Անօրէնք հալածեսցին 'ի միասին․ և զա
ւակք ամբարշտաց սատակեսցին։
Բայց արդարք ժառանգեսցեն զերկիր․
և բնակեսցեն յաւտնս յաւտնից 'ի նմա։
Բերան արդարոյ խորհի զիմաստութի․
և լեզու նր խօսեսցի զիրաւունս։
Օրէնք այ իւրոյ են 'ի սրտի իւրում․
և մի՛ դայթաքեսցին գնացք նր։
Հայի մեղաւոր ընդ արդար, և խնդրէ
սպանանել զնա․ այլ տր ոչ թողու զնա 'ի
ձեռս նր, և ոչ դատապարտէ զնա՝ յոր_
ժամ դատէ զնա։ Համբեր տն՝ և պա_
հեա զճանապարհս նր․ և բարձր արա_
ցէ զքեզ 'ի ժառանգել զերկիր, և զա_
տակումն մեղաւորաց տեսցես։ 82

Տեսի զամբարիշտն վերացեալ, և բարձ-
րացեալ որպէս զմայրսն Լիբանանու։

Անցի և ահա ոչ էր. խնդրեցի և ոչ գտաւ տեղի նր։

Պահեա զանմեղութի. և տես զուղղութի. զի գոն մնացուածք առն խաղաղարարի։

Անօրէնք հալածեսցին ի միասին. և զա-ւակք ամբարշտաց կորիցեն։

Փրկութի արդարոց ի տէնէ է. վերակա-ցու է նց ի ժամանակս նեղութե։

Օգնեսցէ նց տր՝ և փրկեսցէ զնս. ապ-րեսցուսցէ ի մեղաւորաց՝ և կեցուսցէ զնս, զի յուսացան ի նա։

Սաղմոս Դաւթի. առ ի յիշատակ շաբաթու։

ԼԷ.

Տէր մի՛ սրտմտութբ քով յանդի-մաներ զիս. և մի՛ բարկութբ քով խրատեր զիս։

Զի նետք քո հարան յիս. և յիս հաս-տատեցաւ ձեռն քո։

Ո՛չ գոյ բժշկութի մարմնոյ իմոյ յերե-սաց բարկութե քո.

Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց․ յերեսաց մեղաց իմոց։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ․ որպէս բեռն ծանր՝ ծանրացան ՚ի վերայ իմ։

Նեխեցան և փտեցան վէրք իմ, յերեսաց անզգամութեան իմոյ։

Տառապեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ․ զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղև չարչարանօք․ և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ․ մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ։

Տէր առաջի քո է ամենայն ցանկութիւն իմ․ և հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ․ լոյս աչաց իմոց, և այս ոչ եղև ընդ իս։

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին․ և մերձաւորք իմ ՚ի հեռի եղեն յինէն։

Նեղադատէին զիս և խնդրէին զանձն իմ․ որք խորհէին չար ՚ի վերայ իմ, խորհեցան զանօրէնութիւն, և զնեն-



գու-

գութիւն զօրհանապազ խորհեցան։
Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ. որպէս
համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։
Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ. և ոչ
գոն խօսք ՚ի բերան նորա։
Ես ՚ի քեզ տէր յուսացայ, և դու
լուիցես ինձ տէր Աստուած իմ։
Ասացի՝ թէ մի՛ ուրախ եղիցին յիս
թշնամիք իմ. ՚ի սասանել ոտից իմոց՝ ՚ի
վերայ իմ մեծամեծս խօսեցան։
Ես ՚ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք
իմ առաջի իմ են յամենայն ժամ։
Զանօրէնութիւնս իմ պատմեցից, և
հոգացայց վասն մեղաց իմոց։
Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և
զօրացեալք են քան զիս. և բազումք
էին, որք ատէին զիս ՚ի տարապար-
տուց։
Որք հատուցին ինձ չար փոխանակ
ընդ բարւոյ. չարախօսէին զինէն, զի
ես երթայի զհետ արդարութեան։
Մի՛ թողուր զիս տէր Աստուած իմ. և մի՛
՚ի բացէայ առներ յինէն, հայեաց յօգ-
նել ինձ տէր փրկութեան իմոյ։

՚Ի կատարած. Իդիթոնայ օրհնութիւն.

Սաղմոս Դաւթի. ԼԸ.

Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի մեղայց լեզուաւ իմով. Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ՚ի հակառակել մեղաւորին առաջի իմ. Լուռ եղէ և խոնարհեցայ. լռեցի ՚ի բարութէ, և ցաւք իմ նորոգեցան յիս. Ջեռաւ սիրտ իմ ՚ի փորի իմում. և ՚ի խորհուրդս իմ վառեցաւ հուր. Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի. ցոյց ինձ Տէր զկատարած իմ, և զթիւ աւուրց իմոց՝ քանի՞ք են, զի գիտացից թէ որչափ ինչ պակասեալ է յինէն. Ահա չափով եդեր զաւուրս իմ. և կար զօրութեան իմոյ՝ որպէս ոչինչ է առաջի իմ. այսկոյն ամենեքին ընդունայն է ամենայն մարդ մահեղի.

Այլ ապաքէն որպէս ՚ի պատկերի շրջի մարդ, այսկոյն ՚ի զուր խռովի. գանձէ՝ և ոչ գիտէ ում ժողովէ: Եւ արդ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ոչ դու Տէր. կամ կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ ՚ի քէն. Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեցես զիս. և նախատինս անզգամաց արարեր զիս.

Լուռ եղէ, և ոչ բացի զբերան իմ, զի
դու արարեր:
Ի բաց արա յինէն զտանջանս իմ. զի
ի զօրութենէ ձեռին քո ես սպառեցայ:
Կշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր
զմարդ. մաշեցեր որպէս սարդի ոստայն
զանձն նորա. սակայն ընդունայն է ամենայն մարդ.
Լուր արա աղօթից իմոց. ունկն դիր
խնդրուածոց իմոց, արտասուաց
իմոց մի՛ լռեր:
Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ
և անցաւոր՝ որպէս ամենայն հարք իմ:
Թո՛յլ արա ինձ զի հանգեայց. մինչչև
երթեալ իցեմ, և այլ ոչ ևս գտանիցիմ:
Ի կատարած. Սաղմոս դաւթի: ԼԹ.
Համբերելով համբերի տեառն, և նայեցա-
ւ ինձ. և լուաւ աղօթից իմոց:
Եհան զիս ի գբոյ տառապանաց, ի
կաւոյ և ի տղմոյ:
Հաստատեաց ի վերայ վիմի զոտս իմ. և
ուղղեաց զգնացս իմ:
Եարկ ի բերան իմ օրհնութիւն նոր.
զօրհնութիւն աստուծոյ մերոյ.
Տեսցեն բազումք՝ և երկիցեն, և յու-


սասցին

սասցին 'ի տր . երանեալ է այր՝ որոյ
անուն տն յոյս է նր։
Ո՛չ հայեցաւ նա 'ի նանրութի . և ոչ
'ի մոլութի սուտ։
Բազում արարեր դու՝ տր ած իմ զսքանչելիս քո . և խորհրդոց քոց՝ ոչ
ոք է որ նմանիցի քեզ։
Պատմեցի և խօսեցայ՝ և բազումք եղեն
քան զթիւ . ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար . մարմին պատրաստեցեր ինձ . զողջակէզս և զվս մեղացն
ոչ խնդրեցեր։
Յայնժամ ասացի՝ թէ ահաւասիկ գամ
ես . 'ի գլուխ գրոց գրեալ է վս իմ։
Առնել զկամս քո ած իմ կամեցայ, և
զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ։
Աւետարանեցից զարդարութիս քո յեկեղեցիս մեծս . ահա զշրթունս իմ ոչ
արգելից 'ի քէն։
Տր դու գիտացեր, զի զարդարութիս
քո ոչ ծածկեցի 'ի սրտի իմում . զճշմարտութիս քո՝ և զփրկութիս քո։
Ասացի՝ և ոչ թաքուցի զողորմութիս
քո . և զճշմարտութիս քո 'ի ժողովրդենէ
մեծէ։



Այլ

Այլ դու տէր մի՛ հեռի առներ զգթութիւնս քո յինէն. զի ողորմութիւն քո, և ճշմարտութի քո յամ ժամ ընկալցի զիս։

Շուրջ եղեն զինև չարք՝ որոց ո՛չ գոյր թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ո՛չ կարացի տեսանել։

Բազմացան եղեն քան զհեր գլխոյ իմոյ. և սիրտ իմ եթող զիս։

Կամեաց տր՝ փրկել զիս. և տր յօգնել ինձ նայեաց։

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք խնդրեն զանձն իմ բառնալ զնա. դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք խորհէին ինձ չար։

Կրեսցեն զամօթ առ ժամայն վաղվաղակի, որք ասէին ինձ վա՛հ վա՛հ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամքեան, որք խնդրեն զքեզ տր։

Ասասցեն յամ ժամ, մեծ է ած, և որք սիրեն զփրկութիւն քո։

Ես աղքատ և տնանկ եմ, ած խորհեսցի զիս. օգնական և պաշտպան իմ ես. և դու ած իմ մի՛ յամենար։

Խ

Երանի որ խորհի զաղքատն և
զտնանկն. յաւուր չարի փրկե-
սցէ զնա Տր։

Տր փրկեսցէ զնա և կեցուցանէ. երանե-
լի առնէ զնա ի վր երկրի. և ոչ մատնէ
զնա ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տր օգնական է նմա ի մահիճս ցաւոց
իւրոց. զամ անկողինս նորա դարձու-
ցանէ ի հիւանդութէ նր։

Ես ասացի Տր ողորմեա ինձ. բժշկեա
զանձն իմ, ես մեղայ քեզ։

Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ
իցէ՝ զի մեռցի, և կորիցէ անուն նր։

Մտանէր տեսանել զիս անդրուէն, խօսէր
ի սրտի իւրում. և ժողովէր զանօրէ-
նութի յանձն իւր.

Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զի-
նեն շշնջէին ամ թշնամիք իմ։

Խորհեցան չար ի վր իմ. բան անօրէ-
նութե եդին ի վր իմ։

Մի թէ որ ննջիցէ, և այլ ոչ ևս յաւել-
ցի յառնել. քանզի և այրն խաղաղութե
իմոյ, յոր և ես յուսացայ. 

Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն:

Դու տ՟ր ողորմեա ինձ, և կանգնեա զիս. և ես հատուցից նոցա:

Յայսմ ծանեայ՝ թէ հաճեցար ընդ իս. զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ:

Դու զիս յանմեղութեան իմում ընկալար. և հաստատեցեր զիս առաջի քո յաւ՟տն:

Օրհնեալ տ՟ր ա՟ծ իս՟էլի յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի:

Ի կատարած, իմաստութ՟ որդւոցն կորխայ. Սաղմոս դաւթի. ԽԱ

Որպ՟ս փափագի եղջերու յաղբերս ջուրց, այնպ՟ս փափագի անձն իմ առ քեզ ա՟ծ:

Ծարաւի է անձն իմ առ քեզ ա՟ծ, հզօր և կենդանի. Երբ եկից երևեցայց երեսացդ ա՟յ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՛ւր է ա՟ծ քո:

Զայս ա՟մ յիշէի, տառապէր յիս անձն իմ. քաջալերէի, զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն ա՟յ:

Ի ձայն ցնծութեան խոստովանութեան․ և ի ձայն բարեկենդանութեան։

Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս․ յուսա՛ առ Աստուած, խոստովանեսցուք նմա՝ փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Անձն իմ յիս խռովեցաւ․ վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն Յորդանանու, ի Հերմոնէ լերանց փոքուէ։

Խորք խորոց կարդացին առ քեզ, ի ձայն սահանաց քոց։

Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին ի վերայ իմ։

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն իւր, ի գիշերի զօրհնութիւն նորա․ և աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց։

Ասացի Աստուծոյ՝ ընդունօղ իմ ես․ ընդէ՞ր մերժեցեր զիս․ ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ․ յասել ցիս զօրհանապազ, թէ ո՞ւր է Աստուած քո։

Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս․ յուսա՛ առ

ած , խոստովանեսցուք նմա՝ փրկչին երե_
սաց իմոց ած է։

## Սաղմոս դաւթի։ ԽԲ

Դատ արա ինձ ած . և իրաւս արա ինձ
՚ի դատաստանի իմում։
Յազգէ որ ոչ է սբ , ՚ի մարդոյ մեղա_
ւորէ նենգաւորէ փրկեա զիս ։
Զի դու ած հզօրիչ իմ ես . ընդէ՞ր մերժե_
ցեր զիս , ընդէ՞ր տրտում գնամ ես ՚ի
նեղել թշնամւոյ իմոյ։
Առաքեա տր զլոյս քո և զճշմարտութի_
ւն քո . զի առաջնորդեսցեն ինձ , և հան_
ցեն զիս ՚ի լեառն սբ և ՚ի յարկս քո ։
Մտից առաջի սեղանոյ այ առ ած . որ
ուրախ առնէ զմանկութի իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ
ած ած իմ։
Ընդ՝ ընդէ՞ր տրտմեալ ես անձն իմ ,
կամ ընդէ՞ր խռովես զիս . յուսա առ
ած , խոստովանեսցուք նմա՝ փրկչին երե_
սաց իմոց ած է։



Դա

Ի կատարած, իմաստութեան որդւոցն Կորխայ։

## Սաղմոս Դաւթի ԽԳ.

Աստուած ականջօք մերովք լուաք. զոր հարքն մեր պատմեցին մեզ։

Զգործն՝ զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս։

Ձեռն քո խլեաց զհեթանոսս. եւ զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս քո, եւ հաներ զնոսա։

Զի ոչ եթէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր. եւ ոչ բազուկ նոցա փրկեաց զնոսա։

Այլ աջ քո՝ եւ բազուկ քո՝ եւ լոյս երեսաց քոց. զի հաճեցար դու ընդ նոսա։

Դու ինքն ես՝ թագաւոր իմ եւ Աստուած իմ, որ հրամայեցեր զփրկութիւն Յակոբայ։

Ի քեզ զթշնամիս մեր հարցուք. եւ անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն ի վերայ մեր.

Ոչ եթէ յաղեղն իմ յուսացեալ եմ, եւ ոչ սուր իմ կեցուցանէ զիս.

Այլ դու փրկեցեր զմեզ ի թշնամեաց մերոց. եւ զատելիս մեր յամօթ արարեր։



Ա

դարէ, գեղեցիկ տեսլեամբ քան զա՟մ
որդւոց մարդկան։

Փութացան շնորհք ՚ի շրթանց քոց. վա՟ս
այսորիկ օրհնեաց զքեզ Ա՟ծ յաւիտ՟ն։

Ա՛ծ զսուր ընդ մէջ քո հզօր, վայել-
չութե՟ և գեղոյ քոյ։

Լարեա՛ ուղղեա՛ և թագաւորեա՛ վա՟ս
ճշմարտութե՟ հեզութե՟ և արդարութե՟, և ա-
ռաջնորդեսցէ քեզ սքանչելա՟պ աջ քո։
Նետք քո սրեալ են հզօր, և ժողո-
վուրդք ՚ի ներքոյ քո անկցին, ՚ի սիրտս
թշնամեաց թագաւորի։

Աթոռ քո Ա՟ծ յաւիտեանս յաւիտե-
նից, գաւազան ուղղութե՟ գաւազան
արքայութե՟ քո։

Սիրեցեր զարդարութի՟, և ատեցեր
զանօրէնութի՟։

Վասն այսորիկ եօծ զքեզ Ա՟ծ Ա՟ծ քո
իւղով ուրախութե՟, առաւել քան
զընկերս քո։

Զմուռս և ստաշխն և կասիայ ՚ի զգես-
տէ քումմէ, ՚ի տաճարաց փղոսկրէից,
ուստի ուրախ արարին զքեզ դստերք
թագաւորաց ՚ի պատիւ։

Կացցէ դշխոյ ընդաջմէ քումմէ՝ 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Լուր դուստր և տես՝ խոնարհեցո՛ զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո, և զտուն հօր քո. զի ցանկացաւ թագաւորն գեղոյ քո։

Նա ինքն է տէր քո՝ երկիրպագցես նմա. և դուստր ծուրայ երկիրպագցէ նմա. և պատարագօք զերեսս նորա պաղատեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց։

Ամենայն փառք դստեր թագաւորի 'ի ներքոյ. 'ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Տարցին թագաւորի կուսանք զհետ նր. և զընկերս նր տարցին նմա։

Ածցին ցնծութբ և ուրախութբ. և տարցին 'ի տաճար թագաւորի. և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո։

Կացուսցես զնս իշխանս ընդ ամ երկիր. և յիշեցի անուն քո ընդ ամ ազգս ազգաց։

Վս այսորիկ ժողովուրդք խոստովանեսցին առ քեզ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։

՚Ի կատարած ․ որդւոցն Կորխայ ՚ի վր փոփոխելոց։

Սաղմոս դաւթի։ ԽԵ

Ած մեր ապաւէն և զօրութիւն ․ օգնական ՚ի վր նեղութեանց, որք գտին զմեզ յոյժ։

Վ՟ա այսորիկ ոչ երկիցուք մեք ՚ի խռովել երկրի ․ ՚ի փոփոխել լերանց ՚ի սիրտս ծովու ։

Գոչեցին և խռովեցան ջուրք նց ․ խռովեցան լերինք ՚ի զօրութէ նր ։

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն այ ․ և սբ արար զյարկս իւր բարձրեալն ։

Ած ՚ի մէջ նց, և նորա մի՛ սասանեսցին ․ օգնեսցէ նց ած՝ ՚ի վաղորդենէ մինչև ՚ի վաղորդեան ։

Խռովեցան հեթանոսք, և խոնարհեցան թագաւորութիւնք ․ ետ զձայն իւր բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր ։

Տէր զօրութեանց ընդ մեզ ․ ընդունելի է մեր ած յակոբայ ։

Եկայք և տեսէք զգործս այ, որ արար զնշանս և զարմանս ՚ի վր երկրի ։

Եհար զպատերազմ ՚ի ծագաց մինչև ՚ի



ծագս

ծագս երկրի․ զաղեղունս փշրեաց, զզէնս
խորտակեաց, և զասպարս այրեաց հրով։
Կանխեցէք և ծաներուք, զի ես եմ
Ած․ բարձր եղէց ՚ի հեթանոսս, և բարձ-
րացայց ՚ի վր երկրի․
Տր զօրութեց ընդ մեզ․ ընդունելի է
մեր Ած յակոբայ։

՚Ի կատարած․ ձն որդւոցն կորխայ։ Սաղմոս
Դաւթի։ ԽԶ.



ափս հարէք ամ հեթա-
նոսք, աղաղակեցէք առ
Ած ՚ի ձայն ցնծութեն․
Տր բարձրեալ և ահաւ-
որ, թագաւոր մեծ ՚ի վր ամ երկրի․
Հնազանդ արար զժողովուրդս մեզ․
և զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց։
Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժառանգութի․
զգեղեցկութի յակոբայ՝ զոր և սիրեաց․
Համբարձաւ Ած օրհնութբ․ և Տր
մեր ձայնիւ փողոյ։
Սաղմոս ասացէք այ մերում, սաղմոս
ասացէք թագաւորին մերում․ սաղմոս
ասացէք․ Թա

Թագաւոր մեծ ՚ի վր ամ երկրի ած է. սաղմոս ասացէք նմա իմաստութբ:

Թագաւորեաց ած ՚ի վր հեթանոսաց. ած նստաւ յաթոռ սրբութե իւրոյ.

Իշխանք ժողովրդոց ժողովեցան ընդ ած աբրահամու, զի այ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան:

Սաղմոս օրհնութե երգոյ որդւոցն կորխայ: ԽԷ

Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ ՚ի քաղաքի այ մերոյ, ՚ի լերին սբ նր:

Հաստատեալ ցնծացէ ցնծութբ ամ երկիր. լերինք սիոնի, կողմանք հիւսի-սոյ՝ ՚ի քաղաք Թագաւորին մեծի:

Ած ՚ի տաճարի իւրում յայտնի. ՚ի ժամանակի նղ օգնական լինելոյ նր:

Ահաւասիկ Թագաւորութիւնք երկրի ժո-ղովեցան, և անկցին ՚ի միասին:

Ինքեանք տեսին այնպէս՝ և զարմացան. խռովեցան սասանեցան, և դողումն կալաւ զնս:

Անդ երկաւնք ոպ ՚ի ծննդեանն. և հողմն սաստիկ փշրեսցէ զնաւս ՚ի Թարսիս:

Ոպ լուաք, այնպէս և տեսաք. ՚ի քա-ղաք տն զօրութեանց՝ ՚ի քաղաք այ մերոյ:



Ած

Աստուած հիմունս եդիր նմա յաւիտեան.
Ընկալաք Աստուած զողորմութիւն քո ի մէջ ժողովրդեան քո.
Ըստ անուան քում Աստուած, սոյնպէս և օրհնութիւն քո ընդ ամենայն տիեզերս. և արդարութեամբ լի է աջ քո.
Ուրախ եղիցի լեառն Սիոն. և ցնծասցեն դստերք Յուդայ, վասն իրաւանց քոց Տէր.
Շրջեցարուք զՍիոնիւ, պաշարեցէք զնա. և պատմեցէք զաշտարակս նորա.
Դիք զսիրտս ձեր ի վերայ զօրութեան նորա. բաժանեցէք զապարանս նորա, զի պատմել կարասջիք յազգ յայլ.
Զի սա է Աստուած, Աստուած մեր յաւիտենից յաւիտեանս. և սա հովուեսցէ զմեզ մինչև յաւիտեան.

Ի կատարած որդւոցն Կորխայ. ԽԸ

Լուարուք զայս ամենայն ազգք, ունկնդիր լերուք ամենեքին, որք բնակեալ էք յաշխարհի.
Ծնունդք երկրի և որդիք մարդկան, ի միասին մեծամեծք և տնանկք.
Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն, և խորհուրդ սրտի իմոյ զհանճար.

 Խոն

Խոնարհեցուցից յառակուածն զունկն
իմ· բացից տաւղաւ զերգարան իմ· և խօ-
սեցայց զառակս ՚ի սկզբանէ։
Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես յաւուր չա-
րի· զի անօրէնութիւնք գնացից իմոց
շուրջ եղեն զինև։
Յուսացեալք ՚ի զօրութիւն իւրեանց, ՚ի
բազմութիւն մեծութեան իւրեանց պարծեսցին։
Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ, և
ոչ տայ այ զփրկանս իւր· և ոչ զգինս
փրկանաց անձին իւրոյ։
Աշխատեսցի յաւիտեան, և կեցցէ մինչ
իսպառ· և ոչ տեսցէ զապականութիւն։
Յորժամ տեսցէ՝ թէ իմաստունք մե-
ռանիցին, ՚ի միասին անզգամք և անմիտք
կորիցեն· և թողցեն օտարաց զմեծութիւն
իւրեանց։
Գերեզմանք նց տունք նց եղիցին յա-
ւիտեան, և յարկք նոցա ազգէ մինչև
յազգ· և կարդասցին անուանք նց ՚ի
հողս իւրեանց։
Մարդ ՚ի պատուի էր՝ և ոչ իմացաւ,
հաւասարեցաւ անասնոց անբանից՝ և
նմանեցաւ նց։

 Այս

Այս ճանապարհ է գայթակղութիւն նց
նոցին. յետ այսորիկ բերանովք իւրեանց
հաճեսցին:
Որպէս խաշն ՚ի դժոխս մատնեսցին,
և մահ հովուեսցէ զնս. և տիրեսցեն
նց ուղիղք ընդ առաւօտս:
Օգնութիւնք նց մաշեսցին ՚ի դժոխս.
և ՚ի փառաց իւրեանց անկցին:
Բայց սակայն ած փրկեսցէ զանձն իմ
՚ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունիցին
զիս:
Մի երկնչիր՝ յորժամ մեծանայ մարդ,
և յորժամ բազմասցին փառք տան նր:
Զի ոչ եթէ ՚ի մեռանելն իւրում առցէ
ընդ իւր զամ. և ոչ եթէ իջցեն փառք
տան նր ընդ նմա:
Այլ անձն նր ՚ի կեանս իւրում օրհ-
նեսցի. և խոստովանեսցի քեզ՝ յոր-
ժամ բարի արասցես դու նմա:
Մտցէ նա մինչև յազգ հարց իւրոց.
մինչև յաւիտեան զլոյս մի տեսցէ:
Մարդ ՚ի պատուի էր՝ և ոչ իմացաւ,
հաւասարեցաւ անասնոց անբանից՝ և
նմանեցաւ նց:

Ա՟Ծ աստուածոց Տ՟ր խօսեցաւ,
և կոչեց զերկիր՝ յարևելից
մինչև ՚ի մուտս արևու:
՚Ի սիոնէ մեծ վայելչութի՟ն փրկութե՟ն
գեղոյ ն՟ր:
Ա՟ծ մեր յայտնապէս եկեսցէ. և ա՟ծ
մեր մի՛ դադարեսցէ:
Հուր առաջի նորա բորբոքեսցի, և
շուրջ զնովաւ մրրիկ յոյժ:
Կոչեսցէ զերկինս ՚ի վերուստ՝ և զեր-
կիր, ՚ի դատել զժողովուրդ իւր, ժո-
ղովել առ ինքն զսուրբս իւր, և որք դնեն
զպատարագս ուխտից ՚ի վ՟ր սեղանոյ ն՟ր:
Պատմեսցեն երկինք զարդարութիւն
ն՟ր, զի ա՟ծ դատաւոր է:
Լուր ժողովուրդ իմ, և խօսեցայց ընդ
քեզ. և իսրայէլ՝ քեզ վկայեցից. զի
ա՟ծ ա՟ծ քո ես եմ:
Ո՛չ թէ վ՟ս պատարագաց քոց կշտամ-
բեմ զքեզ. զի ողջակէզք քո առաջի
իմ են յա՟մ ժամ:
Ո՛չ ընդունիմ ՚ի տանէ քումմէ զուա-
րակս.

բակս. և ոչ ՚ի հօտից քոց նոխազս.
Իմ է ամենայն գազան անտառի, երէ
լերանց և ամ անասունք:
Գիտեմ ես զամ թռչունս երկնից.
գեղեցկութի վայրի ընդ իս է.
Թէ քաղցեայց, քեզ ինչ ոչ ասացից.
զի իմ է աշխարհ լրիւ իւրով:
Մի՞ չուտեմ ես զմիս զուարակաց քոց.
և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ:
Մատո՛ այ պատարագ օրհնութեան.
հատուցեալ բարձրելոյն զուխտս քո:
Կարդասցես առ իս յաւուր նեղութե
քո. ես փրկեցից զքեզ՝ և դու փառա_
ւոր առասցես զիս:
Մեղաւորին ասէ այ. իսկ դու
ընդէ՞ր ընաւ պատմես զարդարութի
իմ, կամ առնուս զուխտ իմ ՚ի բե_
րան քո:
Զի դու ատեցեր զխրատ իմ. մերժե_
ցեր, և յետս ընկեցեր զամ բանս բե_
րանոյ իմոյ:
Թէ տեսանէիր զգող՝ ընթանայիր ը_
նմա. և ընդ շնացողս դնէիր զբաժին քո:
Բերան քո յաճախէր զչարութիւն,



և

և լեզու քո նիւթեր զխնդութի·
Նստեալ՝ զեղջօրէ քումն չարախօ-
սէիր · և՛ի վե՛ր որդւոյ մօր քո դնէիր
զգայթակղութի·

Զայս ա՛ծ արարեր , և լռեցի քեզ·
կարծեցեր անօրէնդ ՚ի միտ քում, թէ
և ես քեզ նմանիցեմ:

Որդ յանդիմանեցից և կացուցից զայս
ա՛մ առաջի քո· իմացարուք ամենեքեան՝
որոց մոռացեալ էիք զա՛ծ·

Գուցէ երբեք յափշտակիցէք , և ո՛չ
ոք իցէ՝ որ փրկիցէ·

Պատարագ օրհնութե՛ փառաւոր ա-
րասցէ զիս · և անդ է ճանապարհ , ուր
ցուցից նմա զփրկութի ա՛յ:

Ի կատարած Սաղմոս դաւթի · ՚ի ժամանակի իբրև
եկն առ նա նաթան մարգարէ՝ յորժամ մտեալ էր
նա առ բերսաբէէ: Ծ

Ողորմեա՛ ինձ ա՛ծ ըստ մեծի ողորմութե՛
քում · ըստ բազում գթութե՛ քում
քաւեա՛ զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ·
և ՚ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս:


Զա

Զանօրէնութիւն իմ ես ինձէն գիտեմ.
եւ մեղք իմ առաջի իմ են յամ ժամ:
Քեզ միայն մեղայ տր. եւ չար առաջի
քո արարի.
Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո. եւ
յաղթօղ ՚ի դատել դաս:
Անօրէնութեամբ յղացայ, եւ ՚ի մեղս
ծնաւ զիս մայր իմ:
Դու տր զճշմարտութիւն սիրեցեր.
զանյայտս եւ զծածկեալս իմաստութե
քում յայտնեցեր ինձ:
Ցօղեա՛ յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց.
լուա՛, եւ քան զձիւն սպիտակ եղէց:
Լսելի՛ արա ինձ զցնծութիւն եւ զու
րախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ
տառապեալք.
Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց. եւ
զամ անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն.
Սիրտ սբ հաստատեա՛ յիս ած, եւ հոգի
ուղիղ նորոգեա՛ ՚ի փորի իմում:
Մի՛ ընկենուր զիս տր յերեսաց քոց,
եւ զհոգի քո սբ մի՛ հաներ յինէն.
Տո՛ւր ինձ ցնծութե փրկութե քոյ. եւ
հոգւով պետութե քոյ հաստատեա՛ զիս:


Ու

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամբարիշտք առ քեզ դարձցին.

Փրկեա զիս յարենէ Աստուած Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո.

Թէ կամեցեալ էիր, պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Այ հոգի խոնարհ. զսիրտ մբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի՛ արա Տր կամօք քովք սիոնի. և շինեսցին պարիսպքն երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութէ, յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս:

'Ի կատարած իմաստութե, Սաղմոս Դաւթի. 'Ի ժամանակին յորժամ եկն Դովեկ Եդովմեայ և պատմեաց Սաւուղի, ասացեալ թէ եկն Դաւիթ 'ի տունն Աբիմելեքայ:

## ԾԱ

Զի՞ պարծիս 'ի չարութեան հզօր՝ զանօրէնութիւն. զօրհանապազ զանիրաւութիւն խորհեցաւ 'ի լեզուի իւրում:

Որպէս զածելի սուր՝ սրբեաց զնեն-
գութի. սիրեաց զչարութի քան զբա-
րութիւն. զանօրէնութի քան զխօսս
արդարութե.
Սիրեաց նա զամ խօսս կործանման, և
զլեզուս նենգաւորս:
Վասն այսորիկ ած կործանեսցէ զնա
իսպառ. խլեսցէ և հանցէ զնա յար-
կաց իւրոց ։ և զարմատս նորա յերկ-
րէն կենդանեաց.
Տեսցեն արդարք և երկիցեն. զնովա-
ծիծաղեսցին, և ասասցեն.
Ահա այր է, որ ոչ արար զած իւր օգ-
նական. այլ յուսացաւ սա 'ի բազում
մեծութիւն իւր, և զօրացաւ 'ի նան-
րութեան իւրում.
Այլ ես որպէս ձիթենի պտղալից 'ի
տան այ. յուսացայ յողորմութի այ յաւի-
տեան՝ և յաւիտեանս յաւիտենից.
Խոստովան եղէց քեզ տր յաւիտեան,
զի արարեր. և համբերեցից անուան
քում, զի քաղցր ես առաջի սրբոց
քոց.

Ի կատարած. վն մաղաղելոյ. իմաս-
տութեան Դաւթի. ԾԲ

Ասաց անզգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ ած̅. ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. և ոչ ոք է որ առնէ զքաղցրութի.

Տ̅ր յերկնից նայեցաւ յամ̅ որդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ զած̅.

Ամենեքեան խոտորեցան ի միասին, և անպիտանացան.

Ոչ ոք է որ առնէ զբարի, և չէ՛ ոք մինչև ի մի.

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որք գործեն զանօրէնութի.

Որք ուտէին զժողովուրդ իմ իբ̅ր կերակուր հացի. և զած̅ ոչ կարդացին.

Անդ երկիցեն զերկիւղ՝ ուր ոչ իցէ երկիւղ. զի ած̅ ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից.

Ամաչեսցեն և յամօթ լիցին, զի ած̅ անարգեաց զն̅ս.

Ո՛ տացէ ի Սիոնէ զփրկութի Իսրայելի. ի դարձուցանել տն̅ զգերութի ժո-

 ղո

ղովրդեան իւրոյ, ցնծասցէ Յակոբ, և
ուրախ եղիցի Իսրայէլ։

Ի կ՟տրծ. Սաղմոս դաւթի. յորժամ զիփացիքն
ասացին ցսաւուղ, ոչ ապաքէն թաքուցեալ
նստի առ մեզ դաւիթ։ Ծ՟Գ

Ա՟Ծ յանուն քում կեցո զիս, և ի
զօրութե՟ն քում իրաւ արա ինձ։
Ա՟Ծ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկնդիր լեր բա-
նից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան ի վերայ իմ. և հզօրք
խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարե-
ցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց։
Ահա ա՟ծ օգնական իմ. և տ՟ր ընդու-
նող հոգւոյ իմոյ։
Ի դարձուցանել զչարն ի թշնամեաց
իմ, ճշմարտութ՟բ քով սատակեա զն՟ս։
Կամօք իմովք պատարագս մատու-
ցից քեզ. և խոստովան եղէց անուան
քում տ՟ր, զի բարի է։
Զա՟մ նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ի
թշնամիս իմ ետես ակն իմ։

Ի կատարած, Սաղմոս դաւթի։ Ծ՟Դ

Ունկնդիր լեր ա՟ծ աղօթից իմոց. և մի՛
անտես առներ զխնդրուածս իմ։
Նայեա՛ առ իս և լո՛ւր ինձ. զի տրտմեցայ



ես

՚ի ծառայէ քումմէ ․ զի նեղեալ եմ
ես, վաղվաղակի լուր ինձ ։
Հայեաց յանձն իմ, և փրկեա զիս ․ և վա՛ս
թշնամեաց իմոց ապրեցո՛ զիս ։
Զի դու գիտես զնախատինս իմ, զա_
մօթ իմ, և զպատկառանս իմ ։
Առաջի քո են ամ՟ նեղիչք անձին ի_
մոյ ․ նախատանաց համբերեր սիրտ իմ, և
թշուառութեան ։
Ակն ունէի՝ թէ ոք տրտմեսցի ընդ իս,
և ո՛չ ոք էր ․ և մխիթարիչ ինձ ոք ո՛չ
գտաւ ։
Ետուն ՚ի կերակուր ինձ լեղի ․ և ՚ի ծա_
րաւ իմ արբուցին ինձ քացախ ։
Եղիցին սեղանք նոցա առաջի նց՟ յորո
գայթ, ՚ի հատուցումն և ՚ի գայթակ_
ղութիւն ։
Խաւարեսցին աչք նց՟, զի մի՛ տեսցեն ․
և զթիկունս նց՟ համապազ կորացո՛ ․
Հեղցես ՚ի վերայ նց՟ զբարկութի՟ քո ․
և սրտմտութիւն բարկութե՟ քո հասցէ
՚ի վերայ նց՟ ․
Եղիցին բնակութիք նց՟ աւերակ ․ և ՚ի
յարկս նց՟ մի՛ ոք իցէ՝ որ բնակիցէ ։

Զի զոր դու հարեր, հալածեցին. և
ի վէրս ցաւոց իմոց յաւելին։
Դիր զնոսա ի վ՟ն մեղաց ն՟ց, զի մի
մտցեն յարդարութ՟ի քո։
Ջնջեսցին նոքա ի դպրութ՟է քում՟մէ
կենաց, և ը՟ն արդարս քո մի գրեսցին.
Աղքատ և ցաւած եմ ես, փրկութ՟ի քո
ա՟ծ ընկալցի զիս։
Օրհնեցից զանուն ա՟յ իմոյ օրհնութ՟բ,
և բարձր արարից զնա գոհութ՟բ։
Հաճոյ եղիցի ա՟յ քան զորթ մատաղ,
որ բերէ զեղջիւրս և զկճղակս։
Տեսցեն աղքատք՝ և ուրախ եղիցին.
խնդրեցէք զա՟ծ, և կեցցեն անձինք ձեր
Զի լուաւ տ՟ր տնանկաց, և զկապեալս
իւր ոչ արհամարհեաց։
Օրհնեսցեն զնա երկինք և երկիր,
ծով և ա՟մ որ զեռայ ի ն՟մ։
Զի ա՟ծ փրկէ զսիոն, և շինեսցին քաղաքք
հրէաստանի. շինեսցեն՝ բնակեսցին և
ժառանգեսցեն ի նմա։
Զաւակ ծառայից քոց հաստատեսցի
անդ. և որք սիրեն զանուն քո, բնա
կեսցին ի նմա։

'Ի կատարած․ Սաղմոս Դաւթի առ 'ի յիշատակ փրկելոյ զնա Տն։ ԿԹ

Աստուած յօգնել ինձ նայեաց․ եւ Տր յօգնել ինձ փութա՛։

Ամաչեսցեն եւ յամօթ լիցին, որք խնդրեն զանձն իմ․ դարձցին յետս եւ ամաչեսցեն, որք խորհին ինձ չար։

Դարձցին առժամայն ամաչեցեալք, որք ասեն ինձ վա՜շ վա՜շ։

Ցնծասցեն եւ ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որք խնդրեն զքեզ Տր։

Ասասցեն յամ ժամ՝ մեծ է Տծ, որք սիրեն զփրկութիւն քո։

Ես աղքատ եւ տնանկ եմ Տծ՝ օգնեա՛ ինձ․ օգնական եւ փրկիչ իմ ես դու Տր իմ՝ մի՛ յամենար։

'Ի կտրծ․ Սաղմոս Դաւթի որդւոյն Յովնադաբոյ՝ յետ առաջնոյ գերութեն․ Հ

Ի քեզ Տր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան․ յարդարութեն քում փրկեա՛ եւ ապրեցո՛ զիս։

Խոնարհեցո՛ առ իս զունկն քո, եւ կեցո՛ զիս։

Լեր իմ Ած ապաւէն՝ եւ տեղի ամուր
կեցուցանել զիս . զի հաստատութի իմ
եւ ապաւէն իմ դու ես ։

Ած իմ, փրկեա զիս 'ի ձեռաց մեղաւո-
րի, 'ի ձեռաց անօրինի եւ անիրաւի .

Դու ես համբերութի իմ Տր, Տր յոյս
իմ 'ի մանկութենէ իմմէ ։

'Ի քեզ հաստատեցայ ես յարգանդէ .
յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն
իմ . եւ առ 'ի քէն է օրհնութի իմ յա-
մենայն ժամ ։

Որպէս զի նշանակ եղէ ես բազմաց . եւ
դու օգնական իմ եւ հզօրիչ իմ ։

Լցցի բերան իմ գովութե, ոպէս օրհնե-
ցից զփառս քո . զօրհանապազ զմեծ-
վայելչութիւնս քո ։

Մի՛ ընկենուր զիս Տր 'ի ժամանակս
ծերութե . 'ի պակասել զօրութե իմոյ մի՛
թողուր զիս ։

Ասացին թշնամիք իմ ինձ . եւ որք պա-
շարեցին զանձն իմ, խորհեցան 'ի միա-
սին եւ ասացին .

Ած եթող զնա, հալածեցէք եւ հա-
ցէք զնա . զի ոչ ոք է որ փրկէ զնա ։

Ա՟ծ իմ, մի՛ հեռի առներ յինէն. և ա՟ծ
յօգնել ինձ նայեաց.

Ամաչեսցեն և պակասեսցին՝ որք չա-
րախօս կային զանձնէ իմմէ. զգեցցին
զամօթ և զպատկառանս, որք խնդրէ-
ին ինձ չար:

Ես յամ ժամ յուսացայց, և յաւելից
յօրհնութիւնս քո:

Բերան իմ պատմեսցէ զարդարութի՟ս
քո, զօրհանապազ զփրկութի՟ս քո:

Որպէս ոչ թէ խարդախութ՟է ինչ գի-
տէի դպրութեան, այլ մտից ՚ի զօրու-
թիւնս տ՟ն. տ՟ր՝ յիշեցի զարդարութի՟ս
քո միոյն:

Ա՟ծ իմ, ուսուցեր զիս ՚ի մանկութ՟է
իմմէ. և ցարդ ես պատմեցից զարդա-
րութի՟ս քո.

Մինչև յալևորիլ և ՚ի ծերանալ, ա՟ծ
իմ մի՛ թողուր զիս.

Մինչև պատմեսցի բազուկ քո՝ ազգի
ամենայնի որ գալոցն է:

Զօրութի՟ս քո և զարդարութի՟ս քո
մինչև ՚ի բարձունս, զոր արարեր մե-
ծամեծս. ա՟ծ ո՛ նման քեզ.

Որչափ ցուցեր ինձ նեղութիւնս բազումս
և չարչարանս, դարձեալ մխիթարեցեր
զիս. և ի խորոց անդնդոց երկրի հա-
ներ զիս.

Յաճախեցեր զզօրութիւնս քո, դարձար
և մխիթարեցեր զիս. և ի խորոց երկրի
միւսանգամ հաներ զիս.

Արդ՝ և ես խոստովան եղէց քեզ ի
պատրաստութեան սաղմոսաց՝ Աստուա-
ած. սաղմոս ասացից քեզ օրհնութեամբ
սուրբդ Իսրայէլի.

Ցնծասցեն շրթունք իմ, յորժամ սաղ-
մոս ասիցեմ քեզ. և անձն իմ՝ զոր
փրկեցեր.

Այլ և լեզու իմ զօր հանապազ խօսես-
ցի զարդարութիւնս քո.

Ի ժամանակի որ յամօթ լիցին և ա-
մաչեսցեն, որք խնդրէին ինձ չար.

Ի Սողոմոն Սաղմոս Դաւթի. ՀԱ.

Ած՝ զիրաւունս քո արքայի տուր, և
զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի.
Դատել զժողովուրդս քո արդարութեամբ,
և զաղքատս քո իրաւամբք.

 Առ-

Առցեն լերինք զխաղաղութիւն ժողովր-
դեան, եւ բլուրք զարդարութիւն:
Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեն,
եւ կեցուսցէ զորդիս տնանկաց, եւ խո-
նարհեցուսցէ զամբաստանս:
Կացցէ եւ մնասցէ ընդ արեւու, յառաջ
քան զլուսին յազգէ մինչեւ յազգ:
Իջցէ որպէս զանձրեւ ՚ի վերայ գեղման, որպէս
ցօղ որ ցօղէ յերկիր:
Ծագեսցի յաւուրս նորա արդարութիւն,
բազում խաղաղութիւն մինչեւ կատարես-
ցի լուսին:
Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչեւ ՚ի ծով. ՚ի
գետոց մինչեւ ՚ի ծագս աշխարհի:
Առաջի նորա նախ նդրիկք անկցին. եւ
թշնամիք նորա հող լիզցեն:
Թագաւորք Թարսիսի եւ կղզեաց՝ պա-
տարագս մատուսցեն նմա. թագաւորք
արաբայ եւ սաբայ՝ պատարագս բեր-
ցեն նմա:
Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք
երկրի. եւ ամենայն ազգք ծառայեսցեն
նմա:
Զի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հզօ-


րի

րի . զաղքատն և զտնանկն , որոյ ոչ է
իւր օգնական ։
Խնայեսցէ նա յաղքատն և 'ի տնանկն .
և զանձինս տնանկաց կեցուսցէ . 'ի վաշ
խից չարաց փրկեսցէ զանձինս նց ։
Պատուական է անուն նորա առաջի
նոցա . կեցցէ , և տացի նմա յոսկւոյն
արաբացւոց ։
Յաղօթս կացցեն առ նա յամ ժամ . և
զօրհանապազ օրհնեսցեն զնա ։
Եղիցի հաստատութի ընդ ամ երկիր ,
և 'ի վերայ գլխոց լերանց ։
Բարձրասցի քան զլիբանան պտուղ
նորա , և ծաղկեսցի 'ի քաղաքի տն ոպ
խոտ երկրի ։
Եղիցի անուն տն օրհնեալ յաւիտեան .
զի յառաջ քան զարեւ է անուն նր ։
Ի նմ օրհնեսցին ամ ազգք երկրի , և
ամ ազինք երանեսցեն նմա ։
Օրհնեալ տր ած իսրայէլի որ առնէ
զսքանչելիս միայն . և օրհնեալ է անուն
փառաց նր յաւիտեան . լցցի փա
ռօք նորա ամ երկիր . եղիցի
եղիցի ։


Ս. հբ.

## Աղօթք Աննայի մօրն Սամուէլի. ա Թագ. Բ.

Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, և բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած փրկիչ իմ.

Ընդարձակեցաւ բերան իմ ի վերայ թշնամեաց իմոց. ուրախ եղէց ի փրկութեան քում.

Զի ոչ գոյ սուրբ որպէս զՏէր, և ոչ արդար որպէս զԱստուած մեր. և չիք սուրբ բաց յԱստուծոյ մերմէ։

Մի՛ պարծիք և մի՛ խօսիք զամբարտաւանս. և մի՛ ելցէ ընդ բերանս ձեր բան հպարտ մեծաբանութեան.

Զի Աստուած գիտութեանց Տէր Աստուած պատրաստէ իւրով իմաստութեամբ զգիտութիւն յարարածս իւր.

Զօրաց հաստ աղեղունք թուլացան. և տկարք վառեցան զօրութեամբ.

Յագք և լիք հացիւ՝ նուաղեցան, և քաղցեալք լցին զերկիր.

Ամուլն ծնաւ եօթն, և բազմածինն նուաղեցաւ ի ծննդոց.



Տէր

Տ̅ր մեռուցանէ, և տ̅ր կեցուցանէ.
իջուցանէ ՚ի դժոխս և հանէ:

Տէր աղքատացուցանէ և տէր մեծա-
ցուցանէ. խոնարհ առնէ զամբարտա-
ւանս մինչև յերկիր, և բարձր առնէ
զտառապեալս յաղբեաց:

Նստուցանէ զն̅ս իշխանս ընդ իշխանս
ժողովրդեան. և զաթոռ փառաց ժա-
ռանգեցուցանէ նոցա:

Կատարէ զուխտս ուխտաւորաց. և
օրհնեաց զամս արդարոց:

Ոչ ի՛նչ թէ իւրում զօրութ̅բ զօրանայ
հզօր, այլ տ̅ր տկար առնէ զհակառա-
կորդս իւր. տ̅ր ս̅բ է:

Մի՛ պարծեսցի խորհրդականն ՚ի խոր-
հուրդս իւր. և մի՛ պարծեսցի հզօրն
՚ի զօրութ̅ն իւր. և մի՛ պարծեսցի մեծն
՚ի մեծութեան իւրում:

Այլ որ պարծին, ՚ի տ̅ր պարծեսցի. ՚ի
խորհուրդս գիտութ̅ն զտ̅ր ճանաչել:

Առնել զիրաւունս՝ և գործել զարդա-
րութ̅ի ՚ի մ̅ջ երեսաց երկրի:

Տէր ել յերկինս և որոտաց. և ինքն
դատէ առանց բարբառելոյ.



Տայ

Տոյ զօրութիւն թագաւորաց մերոց.
և բարձր առնել զեղջիւր օծելոյ
իւրոյ։

Փառք Հօր և որ"։

---

Մաղթանք։

Նախերգացա եղեւր իմ յաւէտ փրկիչն իմ. հաստա-
տեցաւ սիրտ իմ 'ի տէր անձամբ և հաստատով։

Մաղթանք տէր՝ զ... որ"։ Ձայն և աղօթ՝

Աղօթեմ և 'ի նեղութեան հանանցն։

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զօ-
զօրութիւն 'ի բարերար տնէ մերմէ,
զտէր աղաչեսցուք։

Վասն փրկելոյ զմեզ 'ի զրպարտութենէ մարդ-
կան և յորոգայթից սատանայի, զտէր"։

Վասն ամ անձանց քրիստոնէից և ամենայ
հաւատացելոց, զտէր"։

Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս
բնակեալ են սբ հարքն մեր, զտէր"։

Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատա-
րեն զամ ժամանակս կենաց իւրեանց, զ"։

Վասն հոգ"։ Եւ ևս միա՛։ Ողորմեա"։

Աղօթեմք։



[illegible]

## Աղօթք.

Գոհանամք զքեզ տէր ած մեր, որ
զարթուցեր զմեզ ՚ի հանգստենէ քնոյ
շնորհի՛ ողորմութե՛ քո։ Զարթո՛ զմիտս
մեր արդարութե՛ առ քեզ տր ած մեր.
զի տեսցեն աչք մեր զփրկութի՛ քո։
Իջեսցէ և բնակեսցի առ մեզ ածութի՛
քո, և ողորմութի՛ քո հովանի և պահա
պան լիցի ՚ի վր պաշտօնէից քոց. և ընդ
մեզ զծառայս քո արժանի՛ արա ՚ի
տուէ և ՚ի գիշերի և յամ ժամու միշտ
խորհիլ ՚ի սէր պատուիրանաց քոց։
Եւ գոհանալով փառաւորել զհայր և
զորդի և զսբ հոգին, այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն.

### Խաղաղութեան ամենեցուն.
### Աստուծոյ երկիրպագեսցուք.

Կենդանարար զօրութի՛ և աղբիւր ան
մահութե՛ դու ես քս ած փրկիչ մեր։
Որ շնորհեցեր մեզ ՚ի մէջ գիշերի յառ
նել՝ և խոստովան լինել առ քեզ՝ վս
իրաւանց և արդարութե՛ քո։ Եւ այժմ



աղա

Թէպէտ և ասէի՝ թէ այսպէս պատ-
մեցից, ահաւասիկ յազգ որդւոց քոց՝
որոց և ուխտեցի՞մ:
՚Ի մտի եդի, թէ սակայն և այս ջան է
առաջի իմ, մինչև մտից ՚ի սրբութիւն այ՟,
և ՚ի միտ առից զկատարած նց՟:
Սակայն վս՟ նենգութէ՟ նց՟ տարագիր
արարեր զնս՟. և կործանեցեր զնս՟
յամբարտաւանութէ՟ իւրեանց:
Իսկ զիա՞րդ եղեն յաւեր յանկարծա-
կի, սատակեցան պակասեցան կորեան
վս՟ անօրէնութէ՟ իւրեանց, և եղեն ոպ՟
երազք զարթուցելոց:
Տր՟ ՚ի քաղաքի քում զպատկերս նց՟ ու-
նարգեսցես. զի հուր բորբոքեցաւ ՚ի
սրտի իմում, և երիկամունք իմ այլա-
գունեցան:
Ես արհամարհեալ եղէ՝ և ոչ գիտացի.
ոպ՟ զանասուն համարեցայ առաջի քո,
և ես յամ՟ ժամ ընդ քեզ եմ:
Կալար զաջոյ ձեռանէ իմմէ, ՚ի խոր-
հուրդս քո առաջնորդեցեր ինձ, և
փառօք ընկալար զիս:
Զի՞նչ կայ իմ բնաւ յերկինս, կամ


՚ի

՚ի քէն զինչ և ես խնդրեցից յերկրի.
Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ. Աստուած սրտի իմոյ, բաժին իմ Աստուած յաւիտեան։
Զի ահաւասիկ որք հեռի արարին զանձինս իւրեանց ՚ի քէն, կորիցեն. սատակեսցես զամենայն՝ որք ապստամբ եղեն ՚ի քէն։
Ինձ մերձենալ առ Աստուած բարի է, և դնել առ Տէր զյոյս իմ։
Պատմել զամենայն օրհնութիւնս քո, ՚ի դրունս դստեր Սիօնի։

## Իմաստութ. Ասափայ. ՀԳ.

Ընդէ՞ր մերժեցեր Աստուած իսպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ՚ի վերայ խաշին արօտի քո։
Յիշեա զժողովուրդ քո՝ զոր ստացար ՚ի սկզբանէ. փրկեցեր զգաւազան ժառանգութեան քո։
Լեառն սիօն այդ՝ ուր բնակեցար դու ՚ի նմա. համբարձ զձեռն քո ՚ի վերայ ամբարտաւանութեան նոցա իսպառ։
Որ ինչ անիրաւեցաւ թշնամին ՚ի սրբութեան քում. պարծեցան ատելիքն քո ՚ի մէջ բարեկենդանութեան իւրեանց։
Եդին զնշանս իւրեանց ՚ի նշանս. և ին-



քեանք

քեանք ոչ ծանեան զնլս 'ի վերուստ։

Որպէս յանապատի փայտատաք կոտորեցին զդրունս նր̅. 'ի միասին փայտատաք և մրճով կործանեցին զնա։

Այրեցին 'ի հուր զսրբութի̅ քո յերկրի. պղծեցին զխորան անուան քո։

Ասացին 'ի սիրտս իւրեանց ազգք նց̅ 'ի միասին, եկա՛յք լուցուսցուք զա̅մ տօնս ա̅յ յերկրէ։

Նշանս մեր ոչ տեսաք, և ոչ ևս գոյցէ մարգարէ, և զմեզ ինչ ոք ոչ ծանիցէ։

Մինչև յե՞րբ ա̅ծ՝ նախատէ թշնամին. բարկացուցանէ հակառակորդն զա-նուն ս̅բ քո։

Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո, և զա̅ջ քո 'ի միջոյ ծոցոյ քումմէ իսպառ։

Ա̅ծ թագաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս. որ արարեր զփրկութի̅ 'ի մէջ երկրի։

Դու հաստատեցեր զօրութ̅ քով ըզ-ծով. դու խորտակեցեր զգլուխս վիշա-պին 'ի վե̅ր ջուրց։

Դու փշրեցեր զգլուխս վիշապին, և ե-



տուր

տուր զնա կերակուր զօրացն հնդկաց:
Դու բղխեցուցեր զաղբիւրս և զվտակս·
դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս:
Քո է տիւ, և քո է գիշեր· զլոյս և զա-
րև դու արարեր· և դու հաստատեցեր
զամ սահմանս երկրի· զամարուն և զձ-
մեռն դու ստեղծեր:

Յայս յուշ լիցի քեզ՝ զի թշնամին նա-
խատեաց զՏր̃· ժողովուրդ անզգամ
բարկացոյց զանուն սբ քո:

Մի՛ մատներ գազանաց զանձն՝ որ խոս-
տովան առնի առ քեզ· և զանձինս տ-
նանկաց քոց մի՛ մոռանար իսպառ·

Հայեա՛ց յուխտ քո· զի լցան տունք
ափշելոց յերկրի անիրաւութե̃·

Մի՛ դարձցի անանկն ամաչեցեալ· այլ
աղքատք և անանկք օրհնեսցեն զա-
նուն սբ քո:

Արի՛ Տր̃՝ և դատեա՛ զդատաստանս
քո· յիշեա՛ զնախատինս՝ որ յանզգա-
մէն զօրհանապազ:

Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից քոց·
ամբարտաւանութիւն ատելեաց քոց վե-
րասցի հանապազ:

## ՀԴ

Խոստովան եղիցուք առ քեզ Աստուած, խոստովան եղիցուք և կարդասցուք զանուն քո։

Պատմեցից զամենայն սքանչելիս քո. յորժամ ժամանեցից՝ ես ուղիղ դատեցից։

Մաշեցաւ երկիր՝ և ամենայն բնակիչք նորա. ես հաստատեցի զսիւնս նորա։

Ասացի անօրինաց, թէ մի՛ անօրինիք և մեղաւորաց, թէ մի՛ բարձրացուցանէք զեղջիւրս ձեր։

Մի՛ համբառնայք ի բարձունս զեղջիւրս ձեր. և մի՛ խօսիք զԱստուծոյ անիրաւութիւն։

Զի ոչ յարևելից՝ և ոչ յարևմտից, և ոչ յանապատէ լերանց. այլ Աստուած դատաւոր է.

Զոյս խոնարհ առնէ, և զոյն բարձրացուցանէ. բաժակ ի ձեռին Տեառն՝ գինի լի անապականի արբեցեալ. և խոնարհեցուցանէ յայսմանէ յայս։

Սակայն՝ մրուր նորա ոչ սպառեսցի. և արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի։
Ես ցնծացայց յաւիտեան. սաղմոս ասացից Աստուծոյ Յակոբայ։
Զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեսցես. և բարձր եղիցի եղջիւր արդարոյ։
Ի կատարած. ընդ օրհնութեան. Գ՛ ապաշխանեք.
Սաղմոս Ասափայ։ ՀԵ
Յայտնի է ի Հրէաստանի Աստուած. և յԻսրայէլ մեծ է անուն նորա։
Եղև ի խաղաղութեան տեղի նորա. և բնակութիւն նորա ի Սիոն։
Անդ խորտակեաց Տէր զզօրութիւն աղեղանց. զզէն՝ զսուր՝ և զճակատամարտս։
Լուսաւոր ես դու զարմանչելապէս լերանցն յաւիտենից. խռովեցան ամենայն որք անմիտք են սրտիւք. ննջեցին զքունս իւրեանց՝ և ինչ ոչ գտին։
Ամենայն արք՝ ի մեծութեան ձեռաց իւրեանց. ի սաստէ քումմէ Աստուած Յակոբայ ննջեցին, և որք հեծեալ էին ի ձիս։
Դու ահաւոր ես՝ և ո՞վ կարէ կալ առաջի քո. ո՞վ երևեցար դու յերկնից, յայտնի եղև բարկութիւն քո։

Երկիր երկեաւ և սարսեցաւ ընդ յառա-
նելն այ ՚ի դատաստան. ընդ ապրեցու-
ցանել զամ հեզս երկրի։
Խորհուրդք մարդկան խոստովան առ-
նին առ քեզ. և ծաղկեայք իմաստութ-
օրհնեսցեն զքեզ։
Ուխտս դիք և կատարեցէք տն այ մե-
րոյ, ամէն որք շուրջ էք զնովաւ.
Մատուցէք պատարագս ահաւորին.
որ քաղէ զհոգիս իշխանաց, ահաւոր է
նա քան զամ թագաւորս երկրի։
՚Ի չորրդ. ՚ի Իդիթովմայ. Ասափայ սաղմոս։
Ձայնիւ իմով առ տր կարդացի. ձայ-
նիւ իմով առ այ, և նայեցաւ առ իս։
Յաւուր նեղութե իմոյ զայ խնդրեցի
ձեռօք իմովք. և ՚ի գիշերի առաջի նր
ոչ խաբեցայ։
Ոչ կամէր մխիթարել անձն իմ, յիշեցի
զայ՝ և ուրախ եղէ. հոգացայ՝ և նուա-
ղեաց յիս հոգի իմ։
Ժամանեցին պահուց աչք իմ. խռովե-
ցայ և ոչ խօսեցայ. խորհեցայ զաւուրսն
զառաջինս. և զամսն յաւիտենից յիշեցի.
Խօսեցայ ՚ի գիշերի ընդ սիրտ իմում.
հոգայի՝ և տատանէր յիս հոգի իմ։

Մի՛ թէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս տէր. եւ ոչ եւս յաւելցէ՞ ՚ի հաճել եւ եւս.

Կամ իսպառ արգելցէ՞ զողորմութի̄ն իւր յինէն. կամ կատարեսցէ՞ զբան իւր ազգէ մինչեւ յազգ.

Կամ մոռասցի՞ գթալ ա̄ծ իմ եւ եւս. կամ արգելցէ՞ զգթութի̄ն իւր՝ բարկութեամբ իւրով:

Ասացի՝ եւ այժմ սկսայ. այս է նորոգումն աջոյն բարձրելոյ:

Յիշեցի զգործս Տ̄ն ՚ի սկզբանէ. յիշեցից զսքանչելիս քո:

Խորհեցայ յա̄մ գործս քո, եւ ՚ի ձեռաց գործս քո խորհեցայ:

Ա̄ծ՝ ՚ի սրբութեան են ճանապարհք քո. ո՞վ է ա̄ծ մեծ՝ որ̄պ զա̄ծ մեր. դու ես ա̄ծ, որ առնես զսքանչելիս:

Ցուցեր ժողովրդեան քում զզօրութի̄ն քո. փրկեցեր բազկաւ քով զժողովուրդս քո՝ զորդիսն յակոբայ եւ յովսեփու:

Տեսին զքեզ ջուրք ա̄ծ, տեսին զքեզ ջուրք՝ եւ երկեան. եւ խորք խռովեցան ՚ի ձայնէ ջուրց բազմաց:

Զայն ետուն ամպք. քանզի եւ նետք քո



գնան

գնան 'ի ձայնէ որոտմանց քո անուի•
Երեւեցան փայլատակմունք քո տիեզե-
րաց, խռովեցաւ եւ դողաց երկիր։
'Ի ծովու են ճանապարհք քո, եւ շա-
ւիղք քո 'ի ջուրս բազումս • եւ հետք
քո ոչ երեւին։
Առաջնորդեցեր որպէս խաշինս ժողովր-
դեան քո, 'ի ձեռն Մովսիսի եւ Ահարոնի։

'Ի չորրդ • Իմաստութ Ասափ• ՀԷ

Նայեցարուք ժողովուրդք յօ-
րէնս իմ • խոնարհեցուցէք
զունկն ձեր 'ի բանս բերանոյ
իմոյ։
Բացից առակաւ զբերան իմ, եւ խօսե-
ցայց զառակս 'ի սկզբանէ։
Որ լուաք եւ ծանեաք զայս, եւ հարքն
մեր պատմեցին մեզ։
Ոչ ինչ ծածկեցաւ յորդւոց նց յազգ
յայլ, պատմել զօրհնութիւնս տն՝ զզօրութի
եւ զսքանչելիս իւր զոր արար։
Հաստատեաց զվկայութիւն իւր առ յա-



կոբ

կօք , և օրհնեմ եզ ՚ի մէջ խաղաղութեան.
Որ ինչ միանգամ պատուիրեաց հարցն
մերոց , ցուցանել զայս որդւոց իւրեանց.
զի ծանիցեն յազգ յազգ:
Որդիք որք ծնանիցին՝ յարիցեն և պատ-
մեսցեն զայս որդւոց իւրեանց . զի դի-
ցեն առ այ զյոյս իւրեանց , և մի՛ մո-
ռասցին զգործս այ:
Զպատուիրանս նր խնդրեսցեն խորհր-
դեսցեն . և մի՛ եղիցին որպէս և հարքն
իւրեանց:
Ազգ չար և դառնացօղ . ազգ՝ որ ոչ
ուղղեաց զսիրտ իւր , և ոչ հաստա-
տեաց առ այ զհոգի իւր:
Որդիք եփրեմի լարաձիգք և աղեղնաձիգք ,
յաւուր պատերազմի՝ կատարածս դար-
ձուցին.
Ոչ կացցեն նոքա յուխտի այն . և ըստ
օրինաց նր ոչ կամեցան գնալ:
Մոռացան զերախտիս նր , և զսքանչե-
լիսն՝ զոր եցոյց նց.
Առաջի հարց նց՝ զոր արար զսքանչե-
լիս իւր , յերկրին եգիպտացւոց՝ և ՚ի
դաշտին տանեոսու:



Հերձ

Հերձ զծով՝ և անցոյց զնոսա. և կացոյց զջուրսն որպէս ի տիկս։

Առաջնորդեաց նոցա ամպով ի տուէ. և զամենայն գիշեր ի լոյս հրոյ։

Հերձ զվէմս յանապատին, և ետ ըմպել նոցա որպէս ի խորոց մեծէ։

Եհան զջուրսն ի վիմէն. և հոսեաց որպէս զգետս զջուրսն։

Սակայն յաւելին ի մեղանչել. և ևս դառնացուցին զբարձրեալն յանջրդի։ Փորձեցին զԱստուած ի սիրտս իւրեանց, ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց։ Տրտնջեցին զնմանէ և ասացին. մի՞թէ կարող իցէ Աստուած պատրաստել սեղան յանապատի։

Քանզի հարկանէր զվէմն և հոսէին ջուրք, և վտակք խաղային ի նմանէ։ Մի՞թէ հաց ևս կարասցէ տալ նա մեզ. կամ պատրաստեսցէ սեղան ժողովրդեան իւրոյ։

Վասն այսորիկ լուաւ Տէր, և յապաղեաց. հուր բորբոքեցաւ ի Յակոբ, և բարկութիւն ել ի վերայ Իսրայէլի։

Զի ոչ հաւատացին յԱստուած, և ոչ յուսացան ի փրկութիւն նորա։

Հրաման ետ ամպոց ՚ի վերուստ, և ըղ-
դրունս երկնից եբաց. և տեղեաց ՚ի նս
զմանանայ ՚ի կերակուր.
Զ հաց երկնից ետ նց, զհաց հրեշտա-
կաց կերին մարդիկ. և ճշոյց ՚ի նս զկե-
րակուր ՚ի լիութի.
Եհան զհողմն հարաւոյ, և էած զօրութե
իւրով զհիւսիսի.
Տեղեաց ՚ի նս միս ոպ զհող. ոպ զաւազ
ծովու զթռչունս թևաւորս. Անկան ՚ի
մէջ բանակի նց, և շուրջ զվրանօք նց.
Կերին և յագեցան յոյժ. և զցանկութի
նց ետ նց. և ոչ ինչ կարօտ եղեն ՚ի ցան-
կութե իւրեանց.
Մինչդեռ կերակուրք ՚ի բերանս իւր-
եանց էին, բարկութի այյ ել ՚ի վր նց.
Սպան զպարարտս ՚ի նոցանէ. և զընտիր
ընտիրս իսրայէլի սատակեաց.
Յայսմ ամի մեղան և ևս, և ոչ հաւա-
տացին սքանչելեաց նր.
Պակասեցան յունայնութե աւուրք նց.
և ամք նց փութապէս անցին.
Յորժամ սպանանէր զնս, խնդրէին ըզ-
նա. դառնային և առաւօտ առնէին առ
ած.



Յե

Յիշեցին՝ զի ա՛ծ օգնական էր նց. ա՛ծ
բարձրեալ փրկիչ էր նց.
Սիրեցին զնա բերանովք իւրեանց, և
լեզուօք իւրեանց ստեցին նմա. և
սիրտք նց ո՛չ էին ուղիղք ընդ նմա. և
ո՛չ հաւատացին ուխտի նր.
Բայց նա ինքն գթած էր, քաւէր ըզ
մեղս նց՝ և ո՛չ ապականէր.
Յաճախէր դարձուցանել զբարկութի
իւր, և ո՛չ բորբոքէր զամենայն սրտ֊
մտութի իւր.
Յիշեաց՝ թէ մարմին են նոքա. հոգի
որ երթայ՝ այլ ո՛չ եւս դառնայ.
Քանիցս անգամ դառնացուցին զնա
յանապատի. և բարկացուցին զբարձ֊
րեալն յանջրդի.
Դարձան՝ և փորձեցին զա՛ծ, և զսուրբն
իսրայէլի զայրացուցին.
Ո՛չ յիշեցին զձեռն նր. յաւուր յո֊
րում փրկեաց զնս ՚ի ձեռաց նեղչաց նց.
Որ արար զնշանս և զսքանչելիս իւր՝
յերկրին եգիպտացւոց, և ՚ի դաշտին
տանեոս.
Դարձոյց յարիւն զգետս նոցա. և



զանձ

զանձրեւս նոցա, զի մի՛ արբցեն։

Առաքեաց ՚ի նոսա շանաճանճ՝ եւ եկեր զնոսա. եւ գորտոյն ապականեաց զնոսա։

Ետ ժանկոյ զպտուղս նոցա. եւ զվաստակս նոցա՝ մարախոյ։

Եհար կարկտիւ զայգիս նոցա. եւ զթզե-նիս՛ նոցա՝ եղեամամբ։

Մատնեաց ՚ի կարկուտ զանասունս նոցա. եւ զստացուածս նոցա՝ հրով դատեաց։

Առաքեաց ՚ի նոսա զսրտմտութիւն բար-կութեան իւրոյ. զսրտմտութիւն՝ զբար-կութիւն՝ եւ զնեղութիւն։

Առաքեաց ՚ի նոսա տանջանս՝ ՚ի ձեռն հրեշտակի չարի. եւ դիմեցոյց ՚ի նոսա զսրտմտութիւն բարկութեան իւրոյ։

Ոչ անխնայեաց ՚ի մահուանէ զանձինս նոցա. եւ զանասունս նոցա ՚ի մահ մատնեաց։

Եհար զամենայն անդրանիկս եգիպ-տացւոց, զսկիզբն ամենայն վաստակոց նոցա ՚ի յարկս քամայ։

Չոգան եւ որպէս խաշինս ժողովրդեան իւրոյ. եւ եհան զնոսա որպէս զհօտ յանապատ։

Առաջնորդեաց նոցա յուսով, եւ ոչ եր-

կեան. և զԹշնամիս նոցա ծով ծածկեաց.
Եհան զնոսա ՚ի լեառն սրբութեան իւրոյ.
՚ի լեառն յայն՝ զոր ստացաւ աջ նորա.
Մերժեաց յերեսաց նոցա զհեթանոսս. և վիճակեցոյց ՚ի նոսա զվիճակ ժառանգութեան իւրոյ. և բնակեցոյց ՚ի յարկս նոցա զազգն իսրայէլի.
Փորձեցին՝ դառնացուցին զած բարձրելոյն, և զվկայութիւն նորա ոչ պահեցին.
Դարձան խոտորեցան որպէս և հարքն իւրեանց, դարձան՝ և եղեն որպէս զաղեղն Թիւր.
Դարձեալ բարկացուցին զնա ՚ի բագինս իւրեանց. և դրօշելովք իւրեանց նախանձ արկին նմա.
Լուաւ ած, և արհամարհեաց զնոսա. և անարգեաց յոյժ զիսրայէլ.
Մերժեաց յերկրէ զխորանն ՚ի սելովմ. զխորանն՝ զոր բնակեցոյց ՚ի մէջ մարդկան.
Մատնեաց ՚ի գերութիւն զզօրութիւն նոցա. և զգեղ նոցա ՚ի ձեռս Թշնամեաց նոցա.
Արգել ՚ի սուր զժողովուրդ իւր. և զժառանգութիւն իւր անտես արար.

Զերիտասարդս նց եկեր հուր. և զկու-
սանաց նց ոչ ոք սգացաւ։
Քահանայք նոցա անկան ՚ի սուր. և
զայրիս նց ոչ ոք էր որ լայր։
Զարթեաւ ոպս ՚ի քնոյ տր, ոպս հզօր
[illegible] թափէ զգինին։
Եհար յետս զթշնամիս իւր, և նախա-
տինս յաւիտենից արար զնս։
Մերժեաց նա զխորանն յովսեփու, և
զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց։
Այլ ընտրեաց նա զազգն յուդայ. զլ
լեառն սիոն, զոր և սիրեաց։
Շինեաց ոպս միեղջերուի զսրբութի
նորա. յերկրի հաստատեաց զնա յա-
ւիտեան։
Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր, և
ընկալաւ զնա ՚ի հօտէ խաշանց. ՚ի մէջ
ջին ծնելոցն ընկալաւ զնա։
Հովուել զյակոբ ծառայ իւր, և զիս-
րայէլ ժառանգութի իւր։
Արածէր զնոսա խմաստութբ սրտի իւ-
րոյ. յանդորրութի ձեռաց իւրոց առաջ-
նորդէր նց։



Սաղ

Աստուած մտին հեթանոսք ՚ի ժառանգութիւն քո. պղծեցին զտաճար սուրբ քո:

Արարին զերուսաղէմ որպէս զհիւղս մրգապահաց. արկին զդիակունս ծառայից քոց՝ կեր թռչնոց երկնից, եւ զմարմինս սրբոց քոց՝ գազանաց երկրի:

Հեղին զարիւն նոցա որպէս զջուր՝ շուրջ զերուսաղէմաւ, եւ ոչ ոք էր՝ որ թաղէր զնոսա:

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր եւ այպն կատականաց այնոցիկ, որք շուրջ էին զմեօք:

Մինչեւ յերբ տէր՝ բարկանաս դու ի սպառ. բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո:

Հեղ զբարկութիւն քո ՚ի վերայ ազգաց՝ որք զքեզ ոչ ճանաչեցին. ՚ի վերայ թագաւորաց որք զանուն քո ոչ կարդացին. զի կերին զյակոբ, եւ զտեղի նորա աւերեցին:

Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղ վաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո տէր, զի աղքատացաք յոյժ:

Օգնեա մեզ Ած փրկիչ մեր, վն փա-
ռաց անուան քո:

Տր փրկեա զմեզ՝ և քաւեա զմեղս մեր վասն անուան քո:

Մի՛ երբեք ասասցեն 'ի հեթանոսս, թէ ուր է Ած նոցա:

Եւ յայտնի լիցի 'ի վերայ հեթանոսաց, առաջի աչաց մերոց. առ 'ի խնդրել զվրէժ արեան ծառայից քոց՝ որ և հեղաւ:

Մտցէ առաջի քո հեծութիւն կապելոյ. ըստ մեծութեան բազկի քո՛ շահեա՛ զորդիս սպանելոց:

Հատո՛ դրացեաց մերոց եօթնպատիկ 'ի ծոց նց, զնախատինս իւրեանց զոր նախատեցին զքեզ Տր:

Մեք ժողովուրդք և խաշն արօտի քոյ, խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան, ազգէ յազգ պատմեսցուք զօրհնութիւնս քո:

'Ի կատարած 'ի վե՛ր փոփոխելոցն վկայութիւն.
Սաղմոս ասափայ: ՀԹ

Որ հովուեսդ իսրայէլի՝ նայեաց, որ առաջնորդես ոպս խաշին յովսեփու:

Որ նստիս ի քրովբէս՝ յայտնեաց առա-
ջի Եփրեմի, Բենիամինի և Մանասէի։
Զարթո զզօրութ՟ի քո, և եկ ի կեցու-
ցանել զմեզ։
Տ՟ր զօրութ՟եց դարձո զմեզ, երևեցո
զերեսս քո ի մեզ՝ և կեցցուք։
Տ՟ր ա՟ծ զօրութ՟եց՝ մինչև յե՞րբ բարկա-
նաս յաղօթս ծառայից քոց։
Ջամբեցեր մեզ հաց արտասուաց. և
արբուցեր մեզ արտասուս չափով։
Եդեր զմեզ նախատինս դրացեաց մե-
րոց, այպն կատականաց թշնամեաց մերոց
Տ՟ր զօրութ՟եց դարձո զմեզ, երևեցո
զերեսս քո ի մեզ՝ և կեցցուք։
Այգի յեգիպտոսէ փոխեցեր. հաներ
զհեթանոսս՝ և զն՟ս տնկեցեր, և առաջ-
նորդեցեր նմա։
Հաստատեցեր զարմատս նորա՝ և էլից
զերկիր. ծածկեաց զլերինս հովանի
ն՟ր, և բարունակ ն՟ր զմայրս ա՟յ։
Ձգեաց զորթ իւր մինչև ի ծով. մինչև
ի գետս են շառաւիղք ն՟ր։
Ընդէ՞ր քակեցեր զցանկ ն՟ր, և կթեն
զնա անցաւորք ճանապարհի։

Ապականեաց զնա խոզ անտառի, և
երէվայրի արածեցաւ ՚ի նմա.
Ա͞Ծ զօրութ͞ց՝ դարձ, հայեաց յերկնից
և տես. այց արա այգւոյս այսմիկ, և
կատարեա զսա, զոր տնկեաց աջ քո:
՚Ի վ͞ր որդւոյ մարդոյ՝ զոր զօրացու-
ցեր զնա ՚ի քեզ. այրեցեալ ՚ի հուր և
աւերեալ՝ ՚ի սաստէ քումմէ կորիցէ.
Եղիցի ձեռն քո ՚ի վերայ առն, աջ քո
՚ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացու-
ցեր զնա ՚ի քեզ.
Մի ևս ՚ի բացեայ եղիցուք մեք ՚ի քէն.
կեցուսցես դու զմեզ, և զանուն քո
տ͞ր կարդասցուք:
Ա͞Ծ զօրութեց դարձո զմեզ, երևեցո
զերեսս քո ՚ի մեզ՝ և կեցցուք.
՚Ի կատարած. վ͞ն հնձանաց. Սաղմոս ասափայ:

Ձ

Ցնծացէ՛ք առ ա͞ծ, օգնական է մեր.
աղաղակեցէ՛ք առ ա͞ծ յակոբայ:
Առէ՛ք սաղմոս, և տուք օրհնութի. սաղ-
մոս ասացէք նմա ՚ի ձայն քաղցրութե͞ն:
Փո՛ղ հարէք ՚ի գլուխս ամսոց. յաւուր
նշանաւորի տարեկանաց մերոց:



Հրա-

Հրաման է այս Իսրայէլի, և իրաւունք
են այ̃ յակոբայ։

Վկայութիւն յովսեփու՝ զոր եդ ը̃ նմա
ժմ̃ ելանէր նա յերկրէն եգիպտացւոց,
լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։

Ի բաց արար ի բեռանց զթիկունս նր̃.
և զձեռս նր̃ յորթ և ի թթի ծառայելոյ։

Ի նեղութեան կարդացեր առ իս՝ և փրկե
ցի զքեզ, լուայ քեզ ի գաղտնութե̃
մրրկին, և փորձեցի զքեզ ի վր̃ ջուրցն
հակառակութե̃։

Լուր ժողովուրդ իմ՝ և վկայեմ քեզ.
և Իսրայէլ՝ թէ լուիցես ինձ։

Մի՛ եւս եղիցին քեզ ած̃ք առ ժամայնք.
և մի երկիրպագանիցես դու այ̃ օտարի։

Զի ես եմ տէր ած̃ քո՝ որ հանի զքեզ
յերկրէն եգիպտացւոց. բաց զբերան
քո՝ և լցից զնա։

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում
և Իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ։

Բարձի թողի զնս̃ երթալ զհետ կամաց
սրտից իւրեանց. զի գնասցին նոքա ըստ
կամս անձանց իւրեանց։

Օ՜հ թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր


ինձ

ինձ, կամ իէլ ի ճնպրհս իմ գնացեալ էր.
Որպէս զոչինչ խոնարհ արարեալ էր իմ
զթշնամիս նց, և ՚ի վերայ նեղչաց նց
արկեալ էր զձեռն իմ։
Թշնամիք տն ստեցին նմա, և եղիցին
ժամանակք նց յաշխարհի։
Կերակրեաց զնս ՚ի պարարտութէ ցորե_
նոյ, և ՚ի վիմէ մեղր յագեցոյց նց։

Սաղմոս ասափայ. ՁԱ

Ած եկաց ՚ի ժողովս աստուծոց, և ՚ի
մէջի նց դատէր զնս։
Մինչև յե՞րբ դատէք անիրաւութբ, և
ակն առնուք մեղաւորաց։
Դատ արարէք որբոյն և այրւոյ. իրա_
ւունս արարէք տնանկին և խոնարհի։
Փրկեցուցէ՛ք զաղքատն և զտնանկն,
՚ի ձեռաց մեղաւորի փրկեցէ՛ք զնս։
Ո՛չ իմացին և ո՛չ ՚ի միտ առին, ՚ի խաւարի
գնացին, և շարժեցին ամ հիմունք երկրի
Ես ասացի՝ թէ աստուածք իցէք, կամ
որդիք բարձրելոյն ամենեքեան։
Դուք աչաւադիկ ոպ զմարդիկ մեռա
նիք. և ոպ զմի յիշխանաց անկանիք.
Արի՛ ած, և դատեա՛ զերկիր. զի դու
ժառանգեսցես զամ հեթանոս։

Օրհնութիւն · Սաղմոս Ասափայ ·

ՁԲ

Ա՛ծ ո՛ քեզ նմանեսցի · մի՛ լռեր և մի՛ դադարեր ա՛ծ ։

Զի ահա թշնամիք քո գոչեցին, և ատելիք քո համբարձին զգլուխս իւրեանց ։

Ի վերայ ժողովրդեան քո խորամանկեցին զխորհուրդ · խորհեցան ի վերայ սրբոց քոց, և ասացին ·

Եկայք սատակեսցուք զնոսա յազգաց, և մի՛ յիշեսցի անուն իսրայէլի և ևս ։

Խորհեցան միաբանութեամբ ի միասին · և վասն քո ուխտ արարին ·

Բնակիչք եդովմայեցւոց՝ և իսմայէլացիք, մովաբ և հագարացիք ·

Գեբաղ՝ ամոն՝ ամաղէկ, և այլազգիքն ընդ բնակչօքն համդերձ ծուրայ ·

Նաև ասուր եկեալ էր ընդ նոսա · ամենեքեան սոքա՝ զօրավիգն էին որդւոցն ղովտայ ·

Արա զնոսա որպէս զմադիամ, որպէս զսիսարայ, և որպէս զաբին՝ ի ծործորան կիսոնի ։

Սատակեցան նոքա յԱենդովր. և
եղեն որպէս զաղբ երկրի.
Արա զիշխանս նոցա որպէս զՈրեբն. զԶեբն,
զԶեբէէ, զՍաղմանա, և զամենայն իշխանս նոցա.
Որք ասացին՝ ժառանգեսցուք ի մեզ
զսրբութիւն Աստուծոյ.
Աստուած իմ՝ արա զնոսա որպէս զանիւ, և որպէս
զեղեգն առաջի հողմոյ.
Որպէս հուր՝ որ այրէ զանտառս, որպէս
բոց՝ որ կիզու զլերինս.
Նոյնպէս հալածեսցես զնոսա մրրկաւ
քով. և բարկութեամբ քով խռովեցուս-
ցես զնոսա.
Լից զերեսս նոցա անարգանօք, և խնդ-
րեսցեն զանուն քո Տէր.
Ամաչեսցեն և խռովեսցին յաւիտեանս
յաւիտենից, և ամօթալից կորիցեն.
Ծանիցեն զի անուն քո Տէր է. և դու
միայն բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի.

Ի կատարած. վասն հնձանացն. որդւոցն Կորխայ.

Սաղմոս. ՁԳ.

Որպէս սիրելիք են յարկք քո Տէր զօ-
րութեանց. ցանկայ և փափագէ անձն իմ
ի գաւիթս քո.



Սիրտ

Սիրտ իմ և մարմին իմ՝ ցնծասցեն առ ա̅ծ կենդանի։

Քանզի ճնճղուկ եգիտ իւր տուն. և տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր։

Զսեղան քո տ̅ր զօրութե̅ց, թագաւոր իմ և ա̅ծ իմ.

Երանի ամենեցուն՝ որ բնակեալ են ՚ի տան տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

Երանեալ է այր՝ որոյ օգնութի̅ իւր ՚ի քէն է. ելս եդ ՚ի միտ իւրում ՚ի հովտէս տրամութե̅ ՚ի տեղւոջ՝ յորում ուխտեաց.

Օրհնութի̅ տասցէ՝ որ զօրէնս դնէ. գնասցէ նա ՚ի զօրութէ̅ ՚ի զօրութի̅. և երևեսցի ա̅ծ հրեշտակաց ՚ի սիոն։

Տ̅ր ա̅ծ զօրութե̅ց՝ լուր աղօթից իմոց. ունկն դիր ա̅ծ յակոբայ։

Ընդունող ես դու մեր. տես ա̅ծ և նայեաց յերեսս օծելոյ քո.

Վասն զի լաւ է ինձ մի օր ՚ի գաւիթս քո, քան զհազարս.

Ընտրեցի ես ընդ աղբ դալ ՚ի տան ա̅յ առաւել, քան բնականալ ՚ի յարկս մեղաւորաց.

Ողորմութիւն և ճշմարտութիւն սիրէ Տէր
Աստուած մեր. զշնորհս և զփառս տացէ.
Տէր ոչ պակասս առնէ զողորմութիւն իւր
յայնցանէ, որ գնան յամբծութեան.
Տէր Աստուած զօրութեանց, երանեալ է այր՝ որ
յուսայ ի քեզ.

Ի կատարած. որդւոյն Կորխայ. Սաղմոս Դաւթի:

## ՁԴ.

Հաճեցար Տէր ընդ երկիր քո, և դար-
ձուցեր զգերութիւն Յակոբայ.
Թողեր զանօրէնութիւն ժողովրդեան
քո, և ծածկեցեր զամենայն մեղս նոցա.
Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս քո, և
դարձար ի բարկութենէ սրտմտութեան քո:
Դարձո՛ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դար-
ձո՛ զսրտմտութիւնս քո ի մէնջ.
Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տէր. և մի՛
ձգեր բարկութիւն քո ազգէ մինչև յազգ:
Աստուած դու դարձեալ կեցուսցես զմեզ
և ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:
Ցո՛յց մեզ Տէր զողորմութիւնս քո, և զփր-
կութիւն քո տո՛ւր մեզ.
Լուայց զինչ խօսի Տէր Աստուած մեր. խօսես-
ցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ



առ

առ ժողովուրդ իւր՝ և առ սուրբս իւր, որք դարձեալ են առ նա սրտիւք։

Այլ այն՝ մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. բնակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին. արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ. արդարութիւն յերկնից երևեցաւ։

Տէր տացէ զքաղցրութիւն, և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ. դիցէ ի ճանապարհի զգնացս իւր։

## Սաղմոս Դաւթի. Աղօթք Խոնարհի։

## ՁԵ

Խոնարհեցո Տէր զունկն քո՝ և լուր ինձ. զի աղքատ և տնանկ եմ ես։

Պահեա զանձն իմ Տէր. և փրկեա զծառայս քո Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ։

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօր համայն. ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Զի դու Տր՛ քաղցր եւ ուղիղ ես. բա_
զումողորմ առ ամենեսեան, որք կար_
դան առ քեզ:
Ունկն դիր Տր աղօթից իմոց, եւ նայեա՛
ի ձայն խնդրուածոց իմոց.
Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ
քեզ, եւ լուար ինձ:
Ոչ ոք է նման քեզ յաստուածս Տր.
եւ ոչ ոք է ըստ գործս քո:
Ամ ազգս զոր արարեր՝ եկեսցեն եւ
երկիրպագեսցեն առաջի քո, եւ փառաւոր
արասցեն զանուն քո յաւիտեան:
Զի մեծ ես դու Տր՝ եւ առնես սքանչե_
լիս. եւ դու միայն ես ած:
Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում,
եւ գնացից ի ճշմարտութեան քում, եւ ու_
րախ եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուա_
նէ քումմէ:
Խոստովան եղէց առ քեզ Տր ած իմ
բոլորով սրտիւ իմով. փառաւոր արա_
րից զանուն քո յաւիտեան:
Զի մեծ եղեւ ի վր իմ ողորմութի քո Տր. եւ
փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց
Ած, անօրէնք յարեան ի վր իմ. եւ ժո_

ղովք

ղովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ոչ
համարեցան զքեզ ա̄ծ առաջի իւրեանց:
Եւ դու տ̄ր ա̄ծ գթած ես և ողոր
մած, երկայնամիտ բազումողորմ և
ճշմարիտ. նայեաց առ իս և ողորմեա ինձ.
Տուր զօրութի ծառայից քո. կեցո զորդի
աղախնոյ քոյ. և արա առ իս նշան բարուէ
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի
դու տ̄ր օգնեցեր ինձ, և մխիթարե_
ցեր զիս:

Սաղմոս օրհնուե. որդւոցն կորխայ: ՁԶ.

Հիմունք ն̄ր 'ի լեառն ս̄բ ն̄ր. սիրէ
տ̄ր զդրունս սիոնի՝ առաւել քան
զա̄մ յարկսն յակոբայ:
Փառաւորեալ խօսեցաւ վ̄ս քո, ա_
հաւադիկ քաղաքդ ա̄յ:
Յիշեցի զռահաբ և զբաբելոն՝ որք ճա_
նաչեն զիս. ահա այլազգիք և տիւր՝ և
ժողովուրդք եթովպացւոց, սոքա եղեն անդ.
Սիոնի ասէ մայր, և մարդ ծնաւ 'ի նմա.
և ինքն հիմնեաց էարկ 'ի նմա բարձրեալն.
Տէր պատմեսցէ դպրովք ժողովրդեան,
իշխանացս այսոցիկ՝ որք եղեն անդ.
Ո՜վ զի ուրախ լիցին 'ի քեզ ա̄մքն. որոց
բնակութի 'ի քեզն է:

Ի կատարած. վն̃ մաղաղեթայ իպատասխանի. վն̃ եւ
պատասխանի եմանայ իմաստութ̃ Իէլի․ ՁԷ.

Տ̃ր ա̃ծ փրկութեան իմոյ 'ի տուէ կարդա
ցի և գիշերի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̃ր, խոնար
հեցո ունկն քո 'ի խնդրուածս իմ։
Զի լցաւ չարչարանօք անձն իմ, և
կեանք իմ 'ի դժոխս մերձեցան. և համ
արեցայ ես ընդ իջանողսն, որք իջանեն
'ի գուբ։ Եղէ ես որպ̃ս մարդ առանց
օգնականի, և 'ի մեռեալս ազատ։
Որպէս վիրաւորս, որք ննջեն 'ի գե
րեզմանս։
Զորս դու ոչ յիշեցեր, նոքա 'ի ձեռա
նէ քումմէ մերժեցան։
Եդին զիս 'ի գուբ ներքնում, 'ի խաւ
արի և 'ի ստուերս մահու։
Յիս հաստատեցաւ սրտմտութի̃ քո.
զամ̃ զբօսանս քո ածեր 'ի վ̃ր իմ.
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ.
և եդին զիս նշաւակ իւրեանց.
Մատնեցայ՝ և ոչ ելանէի. աչք իմ տ
կարացան յաղքատութ̃է։
Կարդացի առ ք̃ եզ զօրհանապազ, և

Համբարձի առ քեզ զձեռս իմ·
Մի թէ մեռելոց առնիցես սքանչելիս
քո· կամ բժիշկք յարուցեալ, խոստո_
վան առնիցին առ քեզ:
Մի թէ պատմեսցէ ոք երբէք 'ի գե_
րեզմանի զողորմութիս քո, կամ զճշմար_
տութիս քո 'ի կորստեան·
Մի թէ ծանիցին 'ի խաւարի սքան_
չելիք քո, կամ արդարութի քո յեր_
կիր մոռացեալ:
Եւ ես առ քեզ տր աղաղակեցի, առաւօ_
տու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:
Ընդէր տր մերժես զանձն իմ, կամ
դարձուցանես զերեսս քո յինէն:
Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի ման_
կութենէ իմմէ· 'ի բարձրութէ խոնար_
հեցայ և ափշեցայ:
Յիս հաստատեցաւ բարկութի քո· ար_
հաւիրք քո խռովեցուցին զիս·
Շրջեցան զինև որպ ջուր, զօր ամ
պաշարեցին զիս 'ի միասին·
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ
և զծանօթս իմ, վասն թշուառութե
իմոյ·

## ՁԸ

1 Ողորմութիւնս քո տէր յաւի-
տեան օրհնեցից ազգէ յազգ
պատմեցից զճշմարտութիւն քո
բերանով իմով։
Ասացեր թէ աշխարհս ողորմութ͞ շի-
նեսցի, յերկինս պատրաստ եղիցի ճշ-
մարտութիւն քո։
Ուխտ եդի ընտրելոց իմոց, երդուայ
Դաւթի ծառայի իմոյ։
Յաւիտեան հաստատեցից զզաւակ քո,
և շինեցից ազգէ յազգ զաթոռ քո։
Խոստովան եղիցին երկինք զսքանչե-
լեաց քոց տր, և ճշմարտուի քո յեկե-
ղեցիս սրբոց։
Ով է յամպս որ հաւասարի քեզ կամ
ով նմանիցի տն յորդիս այ։
Այ փառաւորեալ է ի խորհուրդս սրբց
իւրոց, մեծ և ահաւոր ի վր ամենեցուն
որք շուրջ են զնովաւ։
Տր այ զօրութեանց ո՞ նման է քեզ. հզօր
ես դու տր՝ և ճշմարտուի քո շուրջ է
զքև։

Դու տիրես զօրութեց ծովու. և զխռով
ութի ալեաց նր դու ցածուցանես։
Դու խոնարհեցուցանես որպէս վիրա
ւորս զամբարտաւանս, 'ի զօրութի բազ
կի քո ցրուեցեր զթշնամիս քո։
Քո են երկինք և քո է երկիր, զաշ
խարհս լրիւ իւրով դու հաստատեցեր,
զհիւսիս և զհարաւ դու արարեր, թա
բօր և հերմոն յանուն քո ցնծասցեն։
Քո է բազուկ և քո է զօրութի, զօրաս
ցի աջ քո՝ և բարձր եղիցի ձեռն քո։
Արդարութի և իրաւունս հաստատէ
է աթոռ քո, ողորմութի և ճշմարտութի
գնասցեն առաջի երեսաց քոց։
Երանի՛ ժողովրդեան, որ գիտէ զօրհ
նութիս քո տր. 'ի լոյս երեսաց քոց գնաս
ցեն, և յանուն քո ցնծասցեն զօրհա
նապազ, և յարդարութե քում բարձ
եղիցին։
Պարծանք զօրութեց մերոց դու ես տր, և
'ի կամս քո բարձր եղիցի եղջիւր մեր։
'Ի տեառնէ է օգնութիւն սրբոյն իսրայէլի
թագաւորին մերոյ։
Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ որ


դիս

դիս քո, և ասացեր եդից զօգնութիւն իմ
'ի վր̅ հզօրին, և բարձր արարից զընտ-
րեալն 'ի ժողովրդենէ իմմէ։
Գտի զդաւիթ ծառայ իմ, և իւղով
սրբով իմով օծի զնա։
Զի ձեռն իմ ընկալցի զնա, և բազուկ իմ
զօրացուսցէ զնա։
Մի՛ մեղիցէ նմա թշնամի, և որդի ա-
նօրէնութե̅ն մի՛ չարչարեսցէ զնա։
Հարից առաջի նորա զթշնամիս նր̅, և
զատելիս նր̅ 'ի պարտութի̅ մատնեցից։
Ճշմարտութի̅ իմ և ողորմութի̅ իմ ը̅ նմա,
և յանուն իմ բարձր եղիցի եղջիւր նր̅։
Եդից 'ի ծովու զձեռն նր̅, և 'ի վերայ
գետոց զաջ նորա։
Նա կարդասցէ առ իս՝ հայր իմ ես
դու, ա̅ծ ընդունող փրկութե̅ իմոյ։
Ես անդրանիկ արարից զնա, և բարձր
քան զա̅մ թագաւորս երկրի։
Յաւիտեան պահեցից նմա զողորմութի̅
իմ, և ուխտ իմ հաւատարիմ ընդ նմա։
Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից
զզաւակ նորա, և զաթոռ նորա որպէս
զաւուրս երկնից։



Թէ

Եթէ թողցեն որդիք նր զօրէնս իմ, և
յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ։
Եթէ զարդարութիւս իմ անարգեսցեն, և
զպատուիրանս իմ ոչ պահեսցեն։
Հարից գաւազանաւ զանօրէնութիւս նց,
և տանջանօք զանիրաւութիւս նց։
Բայց զողորմութի իմ ոչ արգելից ՚ի
նոցանէ, և ոչ նենգեցից ճշմարտուե
իմում, և ոչ անարգեցից զուխտ իմ, և
ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ, զայն
ոչ արհամարհեցից։
Միանգամ երդուայ ՚ի սրբութի իմ,
թէ դաւթի ես ոչ ստեցից։
Զաւակ նր յաւիտեան կացցէ, և ա
թոռ նր որպս զարեգակն առաջի իմ. և որպս
զլուսին, զի հաստատեալ է յաւիտեան
վկայ հաւատարիմ յերկինս։
Իսկ արդ դու մերժեցեր և անարգե
ցեր, և ընդ վայր հարեր զօծեալ քո։
Խարձուցեր զուխտ ՚ի ծառայէ քում
մէ, պղծեցեր յերկիր զսրբութի նորա։
Քակեցեր զամ պարիսպս նր, և եդեր
զամուրս նորա ՚ի դողումն։
Յափշտակեցին զնա անցաւորք ճնպրհի.
և եղև նա նախատ դրացեաց իւրոց։

Բարձր արարեր զաջ նեղչաց նր, եւ ու-
րախ արարեր զամ թշնամիս նորա։
Դարձուցեր զօգնութիւն ՚ի սրոյ նր, եւ
ոչ ընկալար զնա ՚ի պատերազմի։
Անարգեցեր զսրբութիւն նր, եւ զաթոռ
նորա յերկիր կործանեցեր։
Նուազ արարեր զաւուրս ժամանակաց
նորա, եւ հեղեր զնովաւ զամօթ.
Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո
իսպառ, բորբոքեսցի ոպ հուր բարկութի
քո։ Իսկ արդ յիշեա՛ եւ տես, թէ ով է
իմ հանգիստ. մի թէ ՚ի զուր ինչ ստեղ-
ծեր զամ որդիս մարդկան։
Ո՞վ է մարդ որ կեցցէ եւ ոչ տեսցէ ըզ-
մահ, կամ փրկեսցէ զանձն իւր ՚ի ձե-
ռաց դժոխոց։
Ո՞ւր են ողորմութիւնք քո տր առաջինք,
զոր երդուար դաւթի ճշմարտութբ քում։
Յիշեա՛ զնախատինս ծառայի քո, զոր
ընկալայ ՚ի ծոց իմ յազգաց բազմաց.
Զոր նախատեցին թշնամիք քո տէր,
նախատեցին փոխանակ օծելոյ քո։
Օրհնեալ տէր ած յաւիտեանս յաւի-
տենից. եղիցի եղիցի։

## Օրհնութիւն Եսայեայ որդւոյն Ամովսայ։
### Եսայ. ԻԶ.

Ի գիշերոց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ քեզ Աստուած։

Զի լոյս են հրամանք քո ի վերայ երկրի. ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի։

Կարկեցի ամբարիշտն, և այլ ոչ ևս ուսցի առնել յերկրի զարդարութիւն ճշմարտութեան։

Բարձցի ամբարիշտն յերկրէ, և մի՛ տեսցէ զփառս Տեառն։

Տէ՛ր բարձր ես, և բազուկ քո հզօր. և նոքա ոչ գիտացին։

Գիտասցեն՝ ամաչեսցեն, և նախանձ առցէ անխրատ ժողովրդեան. և արդ՝ հուր զթշնամիս քո կերիցէ։

Տէր Աստուած մեր՝ տուր մեզ զխաղաղութիւն քո. զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցես մեզ։

Տէր Աստուած մեր՝ ստացիր զմեզ. զի բաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. և զանուն քո անուանեմք զօրհանապազ։

 Իսկ

Իսկ արդ՝ մեռեալք զխնդրուածս մեր ոչ անսանիցեն. և ոչ բժիշկք յարուցանիցեն։

Մ̃ յայսորիկ ածեր հարեր սատակեցեր և ջնջեցեր զա̃մ արու մանուկ նց̃։

Յաւել տ̃ր զձեռ ՚ի վ̃ր չարի նց̃. և ած զձեռ ՚ի վ̃ր անօրինաց երկրի։

Տ̃ր՝ ՚ի նեղութեան յիշեցաք զքեզ. զի փոքր մի նեղութ̃ն է խրատ քո ՚ի վ̃ր մեր։

Որպ̃ երկունք յղւոյ՝ զի հասանել իցէ ժամանակ ծննդեան, և առ ցաւս իւր ճչիցէ։

Նոյնպէս եղաք սիրելւոյ քում տ̃ր. յահ և յերկիւղ քո յղացեալ երկնեցաք, և ծնաք զհոգի փրկութ̃ քո։

Ո՛չ եւս կործանիցուք մեք, այլ կործանեսցին անօրէնք երկրի։

Յարիցեն մեռեալք. և կենդանասցին ամենեքեան, որք եղեալ են ՚ի գերեզմանս։

Զարթիցեն ննջասցեն, և ուրախ եղիցին դադարեալք յերկրի։

Վասն զի՝ ցօղդ որ ցօղէ ՚ի քէն, այդ բժշկութիւն է նոցա. բայց երկիրն

 ամ

## Աղօթք Մովսէսի Մարդոյն Այ·
## ՁԹ



ՏՐ ԱՊԱՒԷՆ եղեր մեր ազգէ մինչեւ յազգ· մինչչեւ լերինք հաստատեալ էին, եւ մինչչեւ ստեղծեալ էր երկիր եւ զաշխարհ տիեզերս·

Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու ես· մի դարձուցաներ զմարդ ի տառապանս· եւ ասացեր, դարձարուք որդիք մարդկան·

Հազար ամ յաչս տն որպէս օր երեկին զոր
էանց · որպէս պահ մի գիշերոյ · և ամք նոցա
անարգութիւն եղիցին :

Ընդ առաւօտս որպէս դալար բուսցին,
Ընդ առաւօտս որպէս դալար զուարձա-
ցին և ծաղկեսցին, ընդ երեկոյս թար-
շամեսցին չորասցին և անկցին :

Սպառեցաք մեք ի բարկութենէ քումմէ,
և ի սրտմտութենէ քումմէ խռովեցաք :

Եդեր զմեղս մեր առաջի քո, և զկեանս
մեր ի լոյս երեսաց քոց :

Ամենայն աւուրք մեր նուաղեցան, և
ի բարկութենէ քումմէ խռովեցաք ·

Ժամանակք ամաց մերոց անդադար որպէս
սարդի · և թիւ աւուրց ամաց մերոց
ի նոսա եօթանասուն ամ :

Ապա թէ առաւել ևս՝ ութսուն ամ.
և որ ինչ աւելի է քան զայն՝ ցաւք և
հեծութեանք :

Եկն ի վերայ մեր հեծութիւն, և խրատեցաք ·
Իսկ արդ ո՞ գիտասցէ զզօրութիւն բարկու-
թեան քո, և կամ յահէ քումմէ զսրտմ-
տութիւն քո համարեսցի :

Այնպէս ցոյց ինձ զաջ քո · և որ խոնարհ
են սրտիւք, զիմաստութիւն քո · 

Դարձ Տէր մինչև յերբ, մխիթարեաց ի ծառայս քո։

Լցաք առաւօտու ողորմութեամբ քով. ցնծացաք և ուրախ եղաք զամենայն աւուրս կենաց մերոց։

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս խոնարհ արարեր զմեզ, և ամացն յորս տեսաք զչարչարանս։

Հայեաց Տէր ի ծառայս քո և ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա. եղիցի լոյս Տեառն ի վերայ մեր։

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ։

## Օրհնութիւն օրհնութեան Դաւթի. Ղ

Որ բնակեալն է յօգնութիւն Բարձրելոյն, ի հովանի Աստուծոյ երկնից հանգիցէ։

Ասասցէ Տեառն ընդունող իմ ես. ապաւէն իմ Աստուած, և ես յուսամ ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և ի բանիցն ի խռովութեանց։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ, և ի հովանի թևոց նորա յուսասցիս։

Որպէս զէն շուրջ եղիցի զքև ճշմարտութիւն

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի,
և ո՛չ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ :
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթակ-
ղութէ դիւէն 'ի հասարակ աւուր :
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք,
և բիւրք ընդ աջմէ քումմէ. և առ քեզ
ինչ ո՛չ մերձեսցին :
Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու
և զհատուցումն մեղաւորաց տեսցես.
զի դու Տէր յոյս իմ ես :
Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն,
զի ո՛չ հասցեն առ քեզ չարք, և տան-
ջանք մի՛ մերձեսցին 'ի յարկս քո :
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն
քո, 'ի պահել զքեզ յամ ճանապարհս քո
'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի
մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո :
'Ի վերայ իժից և քարբից գնասցես դու. և
առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն.
Քանզի յիս յուսացաւ, և փրկեցից
զնա. հովանի եղէց նմա, զի ծանեաւ
զանուն իմ :
Աղաղակեսցէ առ իս՝ և ես լուայց նմա,
և առ նմա եղէց 'ի նեղութեան.

փրկեցից և փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Օրհնութիւն Սաղմոս դաւթի. ՂԱ.

Բարի է խոստովան լինել Տեառն, և սաղմոս ասել անուան քում բարձրեալ.

Պատմել յառաւօտու զողորմութիւն քո. և զճշմարտութիւն քո ի գիշերի.

Տասնաղեաւ սաղմոսարանաւ, ի ձայն օրհնութեան գովել.

Ուրախ արարեր զիս Տէր յարարածս քո, և ի գործս ձեռաց քոց ցնծացայց։

Որչափ մեծ են գործք քո Տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո.

Այր անզգամ զայս ոչ ծանիցէ, և անմիտն զայս ոչ առնու ի միտ.

Ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ, ի ծաղկել ամենեցին՝ որք գործեն զանօրէնութի

Սատակեսցին յաւիտեանս յաւիտենից. և դու բարձրեալ ես յաւիտեանս Տէր.

Զի ահա թշնամիք քո Տէր զի ահա թշնամիք քո կորիցեն, ցրուեսցին ամենեքին՝ որք գործեն զանօրէնութիւն.

Բարձր եղիցի որպէս միեղջերուի եղջիւր իմ, և ծերութիւն իմ ի ձէթ պարարտութե.

Ետես ակն իմ 'ի թշնամիսն իմ, որք յա-
րուցեալ են 'ի վերայ իմ չարութեամբ, 'ի նոսա
լուիցէ ունկն իմ.

Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին. որպէս զմայրսն Լիբանանու բազումք եղիցին

Տնկեալք եղիցին 'ի տան Տեառն, և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ ծաղկեսցին.

Եւս և բազումք եղիցին 'ի ծերութեան պարարտութեամբ, դալարք և փափուկք եղիցին 'ի պատմել յուղիղ է Տէր Աստուած մեր, և ոչ գոյ 'ի նմա անիրաւութիւն.

## Օրհնութիւն Դաւթի Դաւթի.

## ՂԲ

ՏԷՐ թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած.

Հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի. պատրաստ է աթոռ քո 'ի սկզբանէ յաւիտենից դու ես.

Ամբարձան գետք Տէր, և ամբարձին գետք զձայնս իւրեանց. և յարիցեն գետք 'ի գնացս իւրեանց.

'Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի եղեն զբօսանք ծովու.

Սքանչելի ես դու տէր 'ի բարձունս. վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք. Տան քում վայել է սրբութիւն տր՝ ընդ երկայն աւուրս.

Սաղմոս դաւթի. Չորեքշաբաթի. ՂԳ.

Տր ած վրէժխնդիր, տր ած՝ վրէժխընդիր յայտնեցար.

Բարձրացի՛ր որ դատես զերկիր. հատո՛ զհատուցումն ամբարտաւանից.

Մինչեւ յե՞րբ մեղաւորք տէր, մինչեւ յե՞րբ մեղաւորք պարծեսցին.

Բարբառեսցին խօսեսցին զանիրաւութիւն. խօսեսցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութիւն.

Զժողովուրդ քո տէր խոնարհ արարին, եւ զժառանգութիւն քո չարչարեցին.

Զայրին եւ զպանդուխտն սպանին. զորբսն կոտորեցին. եւ ասացին՝ ոչ տեսանէ զայս տր. եւ ոչ 'ի միտ առնու ած յակոբայ

Իմացարո՛ւք անզգամք ժողովրդեան՝ եւ անմիտք, մինչեւ յե՞րբ ոչ առնուք 'ի միտ.

Որո՞չ զի թէ որ տնկեաց զունկն՝ ինքն ոչ լուիցէ. կամ որ ստեղծ զակն՝ ինքն ոչ տեսանիցէ.

Որ խրատէ զաղինս՝ ո՞չ թէ ոչ յանդի-
մանեսցէ. որ ուսուցանէ մարդոյ գի-
տութի. Տր ճանաչէ զխորհուրդս մարդ-
կան՝ զի են ընդունայնք.

Երանի մարդոյ՝ զոր խրատես դու Տր.
և յօրինաց քոց ուսուցանես դու նմա.

Յածուցանես դու նմա զաւուրս չա-
րութե, մինչև փորեսցի խորխորատ մե-
ղաւորի.

Ո՛չ մերժէ Տր զժողովուրդ իւր, և ըզ-
ժառանգութի իւր ոչ առնէ անտես.

Մինչև դարձցին իրաւունք յարդա-
րութի. ընկալցին զնա ամենեքեան որք
ուղիղ են սրտիւք.

Ո՞վ յարիցէ ընդ իս ՚ի վր չարաց. կամ
ո՞վ հաստատեսցի ինձ ՚ի վր այնոցիկ,
որք գործեն զանօրէնութի.

Եթէ ո՛չ Տն օգնեալ էր ինձ, փոքր մի
ևս բնակեալ էր անձն իմ ՚ի դժոխս.

Թէ ասէի՝ թէ սասանեցան ոտք
իմ, ողորմութի քո Տր օգնէր ինձ.

Ըստ բազմութեան ցաւոց սրտի իմոյ՝ մխիթա-
րութի քո ուրախ առնէր զանձն իմ.

Մի՛ հաստատեսցի քեզ աթոռ անօ-



րէ

րհնութն. ո՛ պատմեսցէ զհրաշալիս ընդ-
դէմ հրամանի.

Արասցին զանձն որդւոյ, և զարիւն
անմեղին պարտաւոր առնէին.

Եղև տր ապաւէն իմ, ած օգնական
յուսոյ իմոյ.

Հատուսցէ նց տր ըս անօրէնութե նց.
և ըստ չարութե նց՝ կործանեսցէ զնս
տր ած մեր:

Օրհնութն տաղի. ՂԴ

Եկայք ցնծասցուք ՚ի տր. աղաղակեսցուք առ ած փրկիչ մեր:

Կանխեսցուք առջի նր խոստովանութբ.
և սաղմոսիւք աղաղակեսցուք առ նա:

Զի ած մեծ է տր. թագաւոր մեծ ՚ի վր
ամ երկրի.

Ի ձեռս նր են ամ անեզերք երկրի,
և բարձրութիք լերանց նր են:

Նորա է ծով՝ և նա արար զնա. և զցա-
մաք՝ ձեռք նր ստեղծին.

Եկայք երկիրպագցուք նմա. անկցուք
և լացցուք առաջի տն արարչին մերոյ.

Նա ինքն է տր ած մեր. մեք ժողո-
վուրդք ձեռին նր, և խաշն արօտի նր:



Այսօր

Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք, մի՛ խըս
տացուցանէք զսիրտս ձեր՝ որպէս ՚ի դառնութեան
Ըստ աւուրն փորձութեան յանապատին. ուր փոր
ձեցին զիս հարքն ձեր, քննեցին զիս՝ և
տեսին զգործս իմ զքառասուն ամ։
Զանացի ընդ ազգին ընդ այնմիկ՝ և
ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք. և
նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ։
Որպէս երդուայ ՚ի բարկութեան իմում, թէ
մտցեն ՚ի հանգիստ իմ։

Սաղմոս Դաւթի. ՚ի ժամանակին շէ տաճարն
շինեցաւ յետ գերութեանն։ ՂԵ

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն
նոր. օրհնեցէք զՏէր ամենայն
երկիր. Օրհնեցէք զՏէր՝
և օրհնեցէք զանուն նորա.
աւետարանեցէք օրըստօրէ զփրկութիւն
նորա։
Պատմեցէք ՚ի հեթանոսս զփառս նորա.
յամենայն ժողովուրդս զսքանչելիս նորա։
Մեծ է Տէր՝ և օրհնեալ է յոյժ. ահա-
ւոր է նա ՚ի վերայ ամենայն կռոց։



Զի

Ամենայն կուռք հեթանոսաց դևք են. այլ Տէր զերկինս արար։

Խոստովանութիւն և վայելչութիւն առաջի նորա. սրբութիւն և մեծ վայելչութիւն ի սրբութեան նորա։

Մատուցէք Տեառն ազգք ազանց. մատուցէք Տեառն զփառս և զպատիւ. մատուցէք Տեառն զփառս անուան նորա։

Առէք պատարագս՝ և մտէք ի սրահս նորա. երկիր պագէք Տեառն ի գաւիթս սրբութեան նորա. և խռովեսցի յերեսաց նորա ամենայն երկիր։

Ասացէք ի հեթանոսս՝ թէ Տէր թագաւորեաց. հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի. և դատէ զժողովուրդս իւր ուղղութեամբ։

Ուրախ եղիցին երկինք՝ և ցնծասցէ երկիր. զուարճասցի ծով լրիւ իւրով. ցնծասցեն դաշտք՝ և ամենայն որ է ի նմա։

Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք անտառի յերեսաց Տեառն՝ զի գայ, և գայ նա ի դատել զերկիր։

Դատէ զաշխարհս իրաւամբք, և զժողովուրդս ամենայն՝ ճշմարտութեամբ իւրով։



Սաղ

Սաղմոս դաւթի · ՚ի ժամանակի ուր երկիրն հաստատեցաւ ։ ՂԶ.

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ երկիր · ուրախ եղիցին կղզիք բազումք ։
Ամպ եւ մէգ շուրջ են զնովաւ · յիրաւունս եւ յարդարութին ուղղեալ է աթոռ նր ։
Հուր առաջի նր գնասցէ, եւ այրեսցէ շուրջ զթշնամիս նր ։
Երեւեցան փայլատակմունք նր տիեզերաց · ետես եւ սասանեցաւ երկիր ։
Լերինք որպս մոմ հալեցան յերեսաց տն · յերեսաց տն ամ երկիր ։
Պատմեցեն երկինք զարդարութին նր · եւ տեսցեն ամ ժողովուրդք զփառս նր ։
Ամաչեսցեն ամենեքեան որք երկիր պագանեն կռոց, եւ որք պարծին ՚ի դրօշեալս իւրեանց ։
Երկիրպագեցեն նմա ամ հրեշտակք նր, զի լուաւ եւ ուրախ եղեւ սիոն · եւ ցնծացեն դստերք յուդայ վասն իրաւանց քոց տր ։
Զի դու բարձրեալ ես ՚ի վր ամ երկրի · յոյժ բարձրացար ՚ի վր ամ կռոց ։

 Սիք

Որք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն. պահէ Տէր զանձինս սրբոց իւրոց. ՚ի ձեռաց մեղաւորի փրկեսցէ զնոսա:
Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից՝ եղև ուրախութիւն:
Ուրախ եղերուք արդարք ՚ի Տէր. և խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա:

Սաղմոս դաւթի. ՂԷ

Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, զի սքանչելիս արար.
Փրկեաց զնա աջ իւր, և բազուկ սուրբ իւր.
Ցոյց Տէր զփրկութիւն իւր. առաջի ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր.
Յիշեաց ողորմութիւն իւրում Յակոբայ. ճշմարտութեան իւրում զտանն Իսրայէլի. և տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:
Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. օրհնեցէք՝ ցնծացէք՝ և սաղմոս ասացէք:
Սաղմոս ասացէք Աստուծոյ մերոյ օրհնութեամբ. օրհնութեամբ և ՚ի ձայն սաղմոսաց:
Ի ձայն օրհնութեան կառածոյ փողոյ. օրհնութեամբ ցնծութեամբ՝ և ՚ի ձայն եղջերեայ փողոյ,


առաջ

աղաղակեցէք առաջի Թագաւորին Տեառն.
Խռովեսցի ծով լրիւ իւրով, տիեզերք
և ամենայն բնակիչք նորա. և գետք ծափս հար
ցեն ի միասին ձեռամբ.
Լերինք ցնծասցեն առաջի Տեառն զի գայ.
զի հասեալ է Տէր ի դատել զերկիր.
Դատէ զաշխարհս արդարութեամբ, և զժո
ղովուրդս իւր ուղղութեամբ.

Սաղմոս Դաւթի. Ղ Ը.



Տէր թագաւորեաց, բարկա
ցան ժողովուրդք՝ որ նստի
ես ի քրովբէս, սասանես
ցաւ երկիր.
Տէր ի Սիոն մեծ է, և բարձր ի վերայ ամենայն
ժողովրդոց.
Խոստովան եղիցուք անուան քում մե
ծի, զի ահաւոր և սուրբ է. և պատիւ
Թագաւորի զիրաւունս սիրէ.
Դու պատրաստեցեր զուղղութիւն. զի
րաւունս և զարդարութիւն յակոբայ դու
արարեր.
Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր


պա

պագէք պատուանդանի ոտից նորա՝ զի սուրբ է։

Մովսէս և Ահարոն երիցունք նորա. Սամուէլ ընդ այնոսիկ, որք կարդան զանուն նորա։

Կարդային առ Տէր, և նա լսէր նոցա. և ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա։

Պահէին զվկայութիւնս նորա, և զհրամանս զոր ետ նոցա։

Տէր Աստուած մեր՝ դու լսէիր նոցա, Աստուած՝ դու քաւիչ լինէիր նոցա. և վրէժխնդիր ի վերայ ամենայն գործոց նոցա։

Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք ի լեառն սուրբ նորա. զի սուրբ է Տէր Աստուած մեր։

Սաղմոս դաւթի։ Ղ.Թ.

Ողորմեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծանիրուք՝ զի նա է Տէր Աստուած մեր։

Նա արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք ժողովուրդ և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի գաւիթս նորա։

Խոստովան եղերուք տն, և օրհնեցէք զանուն նորա:
Քաղցր է տր՝ յաւիտեան է ողորմութի նր. առ ազգէ մինչև յազգ է ճշմարտութի նորա:

Սաղմոս դաւթի: Ճ

Զողորմութի և զիրաւունս օրհնեցից ըզ քեզ տր. սաղմոս ասացից, և ՚ի միտ առից: Ճանապարհ անբիծ մինչև եկեսցէ ու ղիղ, գնայի ես յամբծութե սրտի իմոյ ՚ի մէջ տան իմոյ:
Ոչ եդի առաջի աչաց իմոց զիրս անօ րէնութե. զոյք առնէին զանօրէնութի, ատեցի:
Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր սըր տիւ. խոտորեալ յինէն անզգամին, և ես ինչ ոչ գիտէի ատենէի:
Որ խօսէր դաւաճան զընկերէ իւրմէ, զնա բացէ ՚ի բաց հալածէի:
Որ ամբարտաւան էր աչօք՝ և առատաց սըր տիւ, ընդ նմա և հաց ոչ ուտէի:
Աչք իմ ՚ի հաւատացեալս երկրի, զի նստուցին նոքա ընդ ինս:
Որ գնայր ՚ի ճանապարհ անբիծ, նա պաշտէր զիս:

Ո՛չ բնակէր 'ի մէջ տան իմոյ՝ որ առ-
նէր զամբարտաւանութիւն. որ խօսէր զա-
նիրաւութիւն, չէր յաջողեալ նմա առաջի
աչաց իմոց։

Ընդ առաւօտս սպանանէի զա՟մ մեղա-
ւո՟րս երկրի. զի սատակեցից 'ի քաղաքէ
Տ՟ն զա՟մն՝ որք գործեն զանօրէնութիւն։

**********************

Աղօթք աղքատի. Երբ ջանջրտայր՝ առաջի Տ՟ն
հեղուցու զխնդրուածս իւր։

## ՃԱ

Տր՝ լո՛ւր աղօթից իմոց. աղա-
ղակ իմ առ քեզ եկեսցէ. և
մի՛ դարձուցաներ զերեսս
քո յինէն։

Յաւուր նեղութեան իմոյ՝ խոնարհեցո՛ ա-
կանջս զունկն քո. յորում աւուր կարդամ
առ քեզ՝ վաղվաղակի լո՛ւր ինձ։

Սպառեցան որ՟պ ծուխ աւուրք իմ. և
ոսկերք իմ ո՟պ խարիւ՟ չորացան։

Հարայեալ ո՟պ խոտ՝ և ցամաքեցաւ սիրտ
իմ. մոռացայ ուտել զհաց իմ 'ի ձայնէ
հեծութեան իմոյ։



Կցե

Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմնի իմ. Նմանե-
ցայ ես հաւալուսան անապատի։
Եղէ ես որպէս բու յաւերակի. տքնեցայ՝
և եղէ ես որպէս ճնճղուկ միայն ՚ի տանիս։
Նախատեցին զիս թշնամիք իմ զօր հա-
նապազ, և գովիչք իմ ինև երդնուին։
Զի մոխիր որպէս զհաց կերի. և զըմպելին
իմ արտասուօք խառնեցի։
Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո,
զի դու բարձրացուցեր և խոնարհե-
ցուցեր զիս։
Աւուրք իմ որպէս հովանի անցին. և ես
որպէս խոտ ցամաքեցայ։
Դու տէր յաւիտեան կաս, և յիշատակ
քո ազգէ մինչև յազգ։
Դու յարուցեալ գթասցիս ՚ի վերայ սիոնի.
Ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։
Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նորա,
և ՚ի հողս նորա գթասցին։
Երկիւղեն հեթանոսք յանուանէ քումմէ.
և ամենայն թագաւորք երկրի ՚ի փառաց քոց։
Զի շինեսցէ տէր զսիոն, և երևեսցի փառօք
իւրովք ՚ի նմա։
Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց, և ոչ



ար

արհամարհեաց զխնդրուածս նոցա։
Գրեսցի այս յազգ այլ․ ժողովուրդ
զոր ստացեալ է, օրհնեսցէ տր․
Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութենէ
իւրմէ․ տր յերկնից յերկիր հայեցաւ․
Լսել զհեծութիւն կապելոց, և արձակել
զորդիս մահապարտաց․
Պատմել ՚ի Սիոն զանուն տն, և զօրհ֊
նութիւն նր յերուսաղէմ․
Ժողովել ժողովրդոց ՚ի միասին, և թա֊
գաւորաց ծառայել տն․
Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի
զօրութեան իւրոյ․ զնուաղութիւն աւուրց իմոց
ասա ինձ, և մի՛ հաներ զիս ՚ի կէս աւուրց
իմոց․ զի ազգէ յազգս են ամք քո․
Ի սկզբանէ տր զհիմունս երկրի հաստա֊
տեցեր․ և գործք ձեռաց քոց երկինք են․
Նոքա անցանեն, և դու կաս՝ և մնաս
յաւիտեան․
Ամենեքին ոպ զհանդերձ մաշեսցին․ և ոպ զվեր֊
արկու փոխեսցես զնսա, և փոխեսցին․
Բայց դու նոյն ինքն ես, և ամք քո ոչ ան֊
ցանեն․ որդիք ծառայից քոց բնակեսցին
՚ի նմա․ և զաւակի նց յաւիտեան յաջո֊
ղեսցի․

Օրհնեա՛ անձն իմ զՏէր, եւ ամենայն ոսկերք իմ՝ զանուն սուրբ նորա։
Օրհնեա՛ անձն իմ զՏէր, եւ մի՛ մոռանար զամենայն տուրս նորա։
Ո՛ քաւէ զմեղս քո. բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո։
Ո՛ փրկէ յապականութենէ զկեանս քո. պսակէ զքեզ ողորմութեամբ եւ գթութեամբ։
Ո՛ լնու ՚ի բարութենէ զցանկութիւն քո. նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո։
Առնէ ողորմութիւնս Տէր, եւ իրաւունս ամենայն զրկելոց։
Եցոյց Տէր զճանապարհս իւր Մովսիսի, եւ որդւոցն Իսրայէլի զկամս իւր։
Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազումողորմ։
Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր, եւ ո՛չ յաւիտեան պահէ ոխս։
Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր, եւ ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։
Ըստ որում բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց Տէր զողորմութիւն իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց։



Որ

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնչափ հեռաւ տարար ’ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ’ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, եւ յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։

Շնչէ ’ի նմա հողմ, եւ ոչ է՝ եւ ոչ եւս երեւի տեղի նորա։

Բայց ողորմութիւն տեառն մնայ յաւիտեանս յաւիտենից ’ի վերայ երկիւղածաց իւրոց, եւ արդարութիւն նորա յորդւոց մինչեւ յորդիս։

Որք պահեն զուխտս նորա, յիշեն զպատուիրանս նորա՝ եւ առնեն զնոսա։

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայութիւն նորա ամենայն տիրէ։

Օրհնեցէք զտէր ամենայն հրեշտակք նորա՝ հզօրք զօրութեամբ. որք առնէք զբանս նորա ’ի լսել ձայնի պատգամաց նորա։

Օրհնեցէք զտէր ամենայն զօրութիւնք նորա, պաշտօնեայք եւ արարողք կամաց նորա։

Օրհնեցէք զտէր ամենայն գործք նորա. ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա. օրհնեա անձն իմ զտէր

Սաղմոս Դաւթի. ՚ի վերայ աշխարհագործ արարածոց: ՃԳ

Օրհնեա անձն իմ զՏ̅ր. Տ̅ր ա̅ծ իմ մեծ եղեր յոյժ.
Խոստովանութ̅ի և մեծ վայելչութ̅ի զգեցար. արկեալ զլոյս որ̅պ զօթոց. ձգեալ զերկինս որ̅պ զխորան, և արկեալ ՚ի վե̅ր ջուրց զվերնայարկս նր̅ա.
Որ դնէ յամպս զգնացս իւր, և շրջի նա ՚ի վերայ թևոց հողմոց.
Որ առնէ զհրեշտակս իւր հոգիս. և զպաշտօնեայս իւր ՚ի հուր կիզելոյ.
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան.
Խորք որ̅պ զգեստ վերարկու է նր̅ա. ՚ի վերայ լերանց կացցեն ջուրք.
՚Ի սաստէ քումմէ փախիցեն. և ՚ի ձայնէ որոտալոյ քումմէ զարհուրեսցին.
Ելանեն լեռնանան, և իջանեն դաշտանան, ՚ի տեղի յոր հաստատեցեր զն̅ս.

Սահման եդեր և ոչ անցանեն. և ոչ
եւս դառնան ՚ի ծածկել զերկիր։
Առաքեցեր զաղբիւրս ընդ ձորձորս.
՚ի մէջ լերանց գնասցեն ջուրք։
Արբուցանել զամ̃ գազանս վայրի. յա-
գեսցին ցիռք ՚ի ծարաւս իւրեանց։
Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն. և
՚ի մէջ վիմաց տացեն զձայնս իւրեանց։
Արբուցանէ զլերինս ՚ի շտեմարանաց
իւրոց. ՚ի պտղոյ գործոց իւրոց լցցի
երկիր։
Բուսուցեր զխոտ ՚ի լերինս, զդալար
՚ի ծառայութ̃ի մարդկան։
Հաներ զհաց յերկրէ. գինի ուրախ առ-
նէ՝ իւղ զուարթ, և հաց հաստատէ
զսիրտ մարդոյ։
Յագեսցին ծառքն անտառի, և մայրքն
լիբանանու՝ զորս դու տնկեցեր։
Անդ թռչունք երկնից ձագս հանիցեն.
և բոյն արագլի առաւել է նց̃։
Լերինք բարձունք են եղջերուաց, և
վէմք ապաւէնք նապաստակաց։
Արարեր զլուսին վս̃ ժամանակի. արե-
գակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ։

Արարեր զխաւար՝ և եղև գիշեր. 'ի
նմա գնասցեն ամ̃ գազանք անտառի։
Կորիւնք առիւծուց մռնչեն՝ և յափշ-
տակեն. և խնդրեն յայ̃ զկերակուրս
իւրեանց։
Ծագել արևու ժողովեցին, և 'ի մորիս
իւրեանց դադարեցին։
Ելանէ մարդ 'ի գործս իւր, և 'ի վաս-
տակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ։
Որչափ զի մեծ են գործք քո Տր̃. զամ̃
ինչ իմաստութ̃բ արարեր. և լցաւ երկիր
ստեղծուածովք քովք։
Այս ծով՝ մեծ և անդորր. 'ի նմա են
սողունք՝ որոց ո՛չ գոյ թի՛ւ, գազանք
մեծամեծք և մանունք. 'ի նմա և նաւք
գնան. վիշապն զոր ստեղծեր խաղալ
նովաւ։
Ամենեքեան քեզ սպասեն. և դու տաս
զկերակուր նց̃ 'ի ժամու։
Տաս դու նց̃՝ և կերակրին. բանաս
զձեռն քո՝ և կերակրես զամենեսեան
կամօք քովք։
Դարձուցանես զերեսս քո 'ի նոցանէ՝
և խռովին. հանես զոգի 'ի նոցանէ,
պակասին և 'ի հող դառնան։

Առաքես զոգի քո՝ և հաստատեսցին. և նորոգես զերեսս երկրի։

Եղիցին փառք Տն յաւիտեան. և Տր ուրախ եղիցի յարարածս իւր։

Ո՛ հայի յերկիր, և տայ դողալ նմա. մերձեսցի 'ի լերինս՝ և ծխեսցին։

Օրհնեցից զՏր 'ի կեանս իմ. սաղմոս ասացից Այ իմ մինչև եմ ես։

Քաղցր եղիցի նմա օրհնութի իմ. և ես ուրախ եղէց 'ի Տր։

Պակասեսցին մեղաւորք 'յերկրէ, և անօրէնք մի՛ ևս գտցին 'ի նմա. օրհնեա՛ անձն իմ զՏր։

## Ալէլուիա։ ՃԴ

Խոստովան եղերուք Տն՝ և կարդացէք զանուն նր. և պատմեցէք 'ի հեթանոսս զգործս նորա։

Օրհնեցէք՝ և սաղմոս ասացէք նմա. պատմեցէք զամ սքանչելիս նր. և պարծեցարուք յանուն սբ նորա։

Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ որք խնդրեն զՏր. խնդրեցէք զՏր և հզօրք եղերուք. և խնդրեցէք զերեսս նորա յամ ժամ։

Յիշեցէք զսքանչելիս նորա՝ զորս արար.
զարուեստս և զիրաւունս բերանոյ նորա։
Զաւակք Աբրահամեան՝ ծառայք նորա.
որդիք Յակոբայ՝ ընտրեալք նորա։
Նա ինքն է տր ած մեր, յամ երկրի
են իրաւունք նորա։ Յիշեաց յաւիտենից
զուխտ իւր. և զբանն՝ զոր պատուիրեաց
մինչ ՚ի հազար ամ։
Զուխտն զոր եդ ընդ Աբրահամու.
և զերդումն իւր ընդ Իսահակայ։
Հաստատեաց առ Յակոբ զհրամանս իւր,
և առ իէլ զուխտ իւր յաւիտենից։
Ասէ՝ քեզ տաց զերկիրն Քանանու,
զվիճակ ժառանգութեան ձերոյ։
Զի էին նոքա թուով սակաւուք, նուազք՝
և պանդուխտք ՚ի նմա։
Անցին նոքա ազգէ յազգ. ՚ի թագաւո-
րութենէ ՚ի ժողովուրդ այլ։
Ոչ եթող մարդկան մեղանչել նմա. և
կշտամբեաց զթագաւորս վս նց։
Մի՛ մերձենայք առ՝ օծեալս իմ, և
՚ի մարգարէս իմ մի՛ մեղանչէք։
Կոչեաց սով յերկիր նց. և զամ զօրութի
հացի եբեկ։

 Յա

Առաքեաց առաջի նց այր․ ՚ի ծառայ-
ութն վաճառեցաւ յովսէփ։
Խոնարհ արարին ՚ի կապանս զոտս նր․
և էանց ընդ երկաթ անձն նր։
Մինչև եկեսցէ բան նր․ և բան տն
փորձեաց զնա։
Առաքեաց թագաւորն՝ և լոյծ զնա․
իշխան ժողովրդեան եթող զնա։
Կացոյց զնա տր տան իւրոյ․ իշխան ՚ի
վր ամ ստացուածոց իւրոց։
Խրատել զիշխանս նոցա որպ զինքն․ և
զծերս նց իմաստունս արասցէ։
Եմուտ իսրայէլ յեգիպտոս․ և յակոբ
պանդխտեցաւ յերկիր քամայ։
Աճեցոյց զժողովուրդ իւր յոյժ, և զօ-
րացոյց զնս քան զթշնամիս իւր։
Դարձոյց զսիրտ նոցա ատել զժողո-
վուրդ իւր, և ՚ի նենգել զծառայս իւր։
Առաքեաց զմովսէս ծառայ իւր, և զա-
հարոն ընտրեալ իւր։
Եդ նոցա զբան նշանաց իւրոց, և զար-
ուեստս իւր յերկիր քամայ։
Առաքեաց զխաւար՝ և խաւարեցոյց
զնս․ զի դառնացուցին զբան նր։


Դար

Դարձոյց յարիւն զգետս նր̃, և սպան
զամ̃ ձկունս նր̃։
Եռաց յերկիր նր̃ գորտ, և ՚ի շտեմա_
րանս թագաւորաց նր̃։
Ասաց՝ և եկն շանաճանճ, և մժեխս ընդ
ամ̃ սահմանս նր̃։
Դարձոյց զանձրևս նր̃ ՚ի կարկուտ. և
հուր յերկիր նր̃ բորբոքեցաւ։
Եհար զայգիս և զթզենիս նոցա. և
փշրեաց զամ̃ ծառս սահմանաց նր̃։
Ասաց՝ և եկն մարախ, և խառնիճ՝ զի
ոչ գոյր նր̃ թիւ։
Եկեր զամ̃ խոտ երկրի նր̃, և սպառեաց
զամ̃ պտուղ անդոյ նր̃։
Եհար զամ̃ անդրանիկս եգիպտացւոց,
զսկիզբն ամ̃ վաստակոց նր̃։
Եհան զնս̃ ոսկւով և արծաթով. և ոչ
գոյր յազգս նր̃ հիւանդ։
Ուրախ եղև եգիպտոս ընդ ելանելն նր̃.
զի անկաւ ահ նց̃ ՚ի վր̃ նր̃։
Սփռեաց ամպ՝ հովանի տանել նր̃ ՚ի
տուէ, և հրով լոյս տալ նր̃ ՚ի գիշերի։
Խնդրեցին՝ և եկն լորամարգի. և հա_
ցիւ երկնից լցոյց զնս̃։


Եհար

Եհար զվէմն՝ և բղխեցին ջուրք, և
գնացին գետք ընդ անջրդիս:
Յիշեաց զբան իւր սբ, որ ընդ աբրա-
համու ծառայի իւրոյ:
Եհան զժողովուրդ իւր ցնծութեամբ, և
զընտրեալս իւր ուրախութեամբ:
Ետ նց զգաւառս հեթանոսաց. ի վաս-
տակս ժողովրդոց ժառանգեցոյց զնս:
Զի պահեսցեն զվկայութիւնս նր. և զօ-
րէնս նր խնդրեսցեն:

## Օրհնութի Սաղմոսաց Դաւթի:

## ՃԵ



Խոստովան եղերուք տն՝ զի
քաղցր է. զի յաւիտեան է
ողորմութի նր:
Ո՞ խօսեսցի զզօրութիս տն. լսելի ա-
րասցէ զամ օրհնութիս նր:
Երանի՝ որք պահեն զիրաւունս, և առ-
նեն զարդարութի յամ ժամ:
Յիշեա՛ զմեզ տր ընդ հաճոյս ժողովրդ-
եան քո. և այց արա մեզ ի փրկութե-
քում:

Տեսցուք մեզ զքաղցրութիւն ընտրելոց
քոց. ուրախ եղիցուք մեզ յուրախութիւն
ազգի քո. և գովեսցուք մեզ 'ի ժառան~
գութեն քում.
Մեղաք մեք ընդ հարսն մեր, անօրինե
ցաք և յանցեաք։
Հարքն մեր յեգիպտոս ոչ իմացան զս
քանչելիս քո. և ոչ յիշեցին զբազում
ողորմութիւնս քո.
Դառնացուցին զքեզ յանցանելն իւր~
եանց ընդ ծով կարմիր. փրկեաց զնս
վն անուան իւրոյ՝ զի ծանուսցէ զզօ~
րութիւն նորա.
Սաստեաց 'ի ծով կարմիր՝ և ցամաքե~
ցաւ. առաջնորդեաց նոցա ընդ ան~
դունդս ոպ ընդ անապատ.
Կեցոյց զնս 'ի ձեռաց ատելեաց նց, և
փրկեաց զնս 'ի ձեռաց թշնամեաց նց։
Ծածկեաց ծով զնեղիչս նց. և մի 'ի
նոցանէ ոչ ապրեցաւ.
Հաւատացին բանի նորա. և օրհնեցին
զօրհնութիւնս նորա.
Վաղվաղեցին և մոռացան զգործս նր,
և ոչ անսացին խորհրդոց նր.

 Յան

Ցանկացան զցանկութի յանապատի ·
և փորձեցին զած յանջրդի ։
Եւ նոցա զխնդրուածս նց · առաքեաց
զլիութի յանձինս նց ։
Բարկացուցին զմովսէս 'ի բանակի, և
զահարոն սբ տն ։
Բացաւ երկիր՝ և եկուլ զդաթան · և
ծածկեաց զբանակն աբիրոնի ։
Հուր վառեցաւ 'ի ժողովս նց · և բոց
մաշեաց զմեղաւորս ։
Արարին զորթ 'ի քորեբ՝ և երկիր պա-
գին պատկերի · և փոխեցին զփառս իւ-
րեանց՝ 'ի նմանութի որթու խոտակերի ։
Մոռացան զած կենարարն իւրեանց · որ
արար զմեծամեծս յեգիպտոս, և զս-
քանչելիս իւր յերկիր քամայ, և զահ
իւր 'ի վր կարմիր ծովուն ։
Ասաց սատակել զնս · եթէ ոչ մովսէս
ընտրեալն կայր առաջի նր ։
Դարձաւ աստ՝ և անցոյց զբարկութի
նր · զի մի՛ սատակեսցին նոքա ։
Անարգեցին զերկիրն ցանկալի · և ոչ
հաւատացին բանի նորա ։
Տրտնջեցին 'ի բանակս իւրեանց · և
ոչ լուան ձայնի տն ։

Համբարձ զձեռն իւր ՚ի վերայ նոցա,
հարկանել զնս յանապատի։
Ցրուեսցէ զզաւակ նց ընդ հեթանոսս.
ցրուեսցէ զզաւակ նց ընդ գաւառս։
Զոհեցան նոքա ՚ի բէելփեգովր. զի կե–
րին զզոհեալ եւ զմեռելոտի։
Բարկացուցին զնա ՚ի գործս իւրեանց
եւ յաճախեաց ՚ի մջ նց բեկումն։
Ապա եկաց ՚ի մէջ փենեհէս, քաւեաց՝
եւ արգելաւ մահ. համարեցաւ նմա
յարդարութի ազգէ յազգ մինչեւ
յաւիտեան։
Բարկացուցին զնա ՚ի վր ջուրցն հա–
կառակութե. չարչարեցաւ մովսէս վասն
նց, զի դառնացուցին զհոգի նր։
Հրամայեաց շրթամբք իւրովք. եւ ոչ
սատակեցին զազգսն՝ զոր ասաց նց տր։
Խառնակեցան ընդ հեթանոսս, եւ ու–
սան զգործս նց. ծառայեցին կռոց նց,
եւ եղեւ նոցա ՚ի գայթակղութի։
Զոհեցին զուստերս եւ զդստերս իւր–
եանց դիւաց, եւ հեղին զարիւն անբիծ.
Զարիւն ուստերաց եւ դստերաց իւր–
եանց՝ զոր զոհեցին կռոցն քանանու։


Եւ

Շաղախեցաւ երկիր յարենէ նց, և սրբեցաւ ՚ի գործոց նց. զի պոռնիկեցան ՚ի գնացս իւրեանց:

Բարկացաւ սրտմտութբ տր ՚ի վր ժողովրդեան իւրոյ. և գարշեցոյց զժառանգութի իւր յոյժ:

Մատնեաց զնս ՚ի ձեռս հեթանոսաց. տիրեցին նց ատելիք իւրեանց, և թշնամիք իւրեանց նեղեցին զնս. և խոնարհ եղեն ՚ի ներքոյ ձեռաց նց:

Բազում անգամ փրկեաց զնս, և նոքա դառնացուցին զնա ՚ի խորհուրդս իւրեանց. և կորացան յանօրէնութե իւրեանց:

Հայեցաւ տր ՚ի նեղութիս նց, ՚ի լսել ձայնի աղօթից նց:

Յիշեաց զուխտ իւր՝ և զղջացաւ ըստ բազում ողորմութե իւրում. և ետ զնս ՚ի գթութիս առաջի ամ գերչաց նց:

Փրկեա զմեզ տր ած մեր. և ժողովեա զմեզ ՚ի հեթանոսաց:

Խոստովան եղիցուք անուան քում սբյ. և պարծեսցուք յօրհնութիս քո:

Օրհնեալ տր ած իսրլի. յաւիտեանս յաւիտենից: Եւ ասասցէ ամ ժողովուրդն. եղիցի եղիցի:

## Աղօթք Եզեկիայ Արքայի Հրէաստանի։ Եսայ . ԼԸ։

Ես ասացի ՚ի վերջանալ կենէն ա-
ւուրց իմոց, թէ գնասցի ես ՚ի
դրունս դժոխոց։

Թողի զա̃մ կեանսն իմ, և ասացի՝ թէ ոչ
ոչ ևս տեսից զփրկութի̃ն ա̃յ յերկրին
կենդանեաց . և ոչ ևս տեսից զմարդ-
բնակչօք իւրովք հանդերձ։

Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ . այ-
սուհետև թողի լքի զա̃մ զկեանս իմ։

Ել գնաց՝ մեկնեցաւ յինէն հոգի իմ, որ̃պ
զայն որ քակէ զտաղաւար . և եղէ ես որ̃պ
զոստայն սատարաց՝ մերձ ՚ի հատանիլ։

Յաւուր յայնմիկ՝ մատնեցայ ես յաւա-
ւօտէ որ̃պ ՚ի ձեռս առիւծու . այնպէս
խորտակեաց մանրեաց զոսկերս իմ . զի
յաւաւօտէ մինչ ՚ի գիշեր մատնեցայ։

Որպէս ծիծառն՝ այնպէս ճչեցի, որ̃պ
զաղաւնի՝ այնպէս մնչեցի . զի նուաղե-
ցան աչք իմ ՚ի տեսանելոյ։

Հայեցայ ՚ի բարձունս առ տ̃ր ա̃ծ իմ, որ
փրկեաց զիս . և փարատեցոյց յինէն
զցաւս անձին իմոյ։



## Ալէլուիա: ՃԶ.

ԽՈՍՏՈՎԱՆ եղերուք Տեառն՝ զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ասասցեն փրկեալք Տեառն, զորս փրկեաց ի ձեռաց թշնամւոյն։

Յամ գաւառաց ժողովեաց զնոսա. յարեւելից և յարեւմտից՝ ի հիւսիսոյ և ի ծովէ։

Մոլորեցան նոքա յանապատի յանջրդի ճանապարհի. և քաղաք բնակութեան ոչ գտին։



Քաղ

Քաղցեան եւ ծարաւեցան. եւ անձինք նոցա ՚ի նոսին նուաղեցան։

Աղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան իւրեանց, եւ ՚ի վշտաց նոցա փրկեաց զնոսա։

Առաջնորդեաց նոցա ՚ի ճանապարհ ուղիղ, զի երթիցեն ՚ի քաղաք բնակութեան իւրեանց։

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց նորա. եւ սքանչելեաց նորա որդւոց մարդկան։

Զի յագեցոյց զանձինս քաղցեալս, եւ զանձինս կարօտեալս՝ լի՛ արար բարութեամբ։

Որք նստէին ՚ի խաւարի եւ ՚ի ստուերս մահու, կապեալ էին յաղքատութեան եւ յերկաթս։

Զի դառնացուցին զբանս Աստուծոյ, եւ ըզխորհուրդս բարձրելոյն բարկացուցին։

Խոնարհ եղեն ՚ի ցաւոց սրտից նոցա. տկարացան, եւ ոչ ոք էր՝ որ օգնէր նոցա։

Աղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան իւրեանց. ՚ի վշտաց նոցա եհան զնոսա։

Փրկեաց զնոսա ՚ի խաւարէ՝ եւ ՚ի ստուերաց մահու, եւ խզեաց զկապանս նոցա։

Խոստովան եղիցին տեառն ողորմութեանց նորա. եւ սքանչելեաց նորա որդւոց մարդկան։

Զի փշրեաց զդրունս պղնձիս, եւ ըզ

նիգս երկաթիս խորտակեաց։
Օգնեաց նոցա ՚ի ճանապարհի անօրէ
նութե̅ իւրեանց. զի վս̅ մեղաց իւր–
եանց խոնարհ եղեն յոյժ։
Զամ̅ կերակրոց գարշէին անձինք նց̅.
մերձեցան մինչեւ ՚ի դրունս մահու։
Աղաղակեցին առ տ̅ր ՚ի նեղութե̅ իւր–
եանց, ՚ի վշտաց նց̅ ապրեցոյց զն̅ս։
Առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զն̅ս.
եւ փրկեաց զն̅ս յապականութենէ իւրեանց։
Խոստովան եղիցին տն̅ ողորմութե̅ց նր̅.
եւ զքանչելեաց նր̅ որդւոց մարդկան։
Մատուսցեն նմա պատարագ օրհնութե̅.
եւ պատմեսցեն զգործս նր̅ ցնծութե̅։
Որք իջանէին ՚ի ծով նաւուք. եւ առ–
նէին զգործս ՚ի ջուրս բազումս։
Նոքա տեսին զգործս տն̅. եւ զսքանչե–
լիս նր̅ ՚ի խորս անդնդոց։
Ասաց՝ եւ յարեաւ հողմ եւ մրրիկ. եւ
բարձրացան ալիք նր̅։ Ելանէին յեր–
կինս՝ եւ իջանէին յանդունդս. եւ անձինք
նց̅ յանձկութենէ իւրեանց մաշեցան։
Խռովեցան՝ տատանեցան որպէս արբեալք.
եւ ամ̅ իմաստութիւն նց̅ ընկղմեցաւ։

Աղաղակեցին առ Տէր ՚ի նեղութեան իւր-
եանց, ՚ի վշտաց նոցա կեցոյց զնոսա։
Դարձոյց զմրրիկն յօդս՝ և դադարե-
ցան ալիք նորա. ուրախ եղեն՝ զի դադա-
րեցան. և առաջնորդեաց նոցա ՚ի նաւա-
հանգիստ կամաց իւրեանց։
Խոստովան եղիցին Տեառն ողորմութեանց նորա.
և սքանչելեաց նորա որդւոց մարդկան։
Բարձր արասցեն զնա ՚ի ժողովս ժողովր-
դոց. և յաթոռս ծերոց օրհնեսցեն զնա։
Զի դարձոյց զգետս ՚ի ցամաք. և զըն-
թացս ջուրց՝ յերկիր ծարաւուտ։
Արար զերկիրն պտղաբեր՝ յաղաղ-
տուկս, վասն չարութեան բնակչաց նորա։
Արար զանապատն ՚ի ձմահիձս ջուրց,
և զերկիրն ծարաւուտ ՚ի գնացս ջուրց։
Բնակեցոյց ՚ի նմա քաղցեալս. և շինե-
ցին քաղաքս բնակութեան իւրեանց։
Վարեցին արտս՝ և տնկեցին այգիս. և
արարին պտուղ արմտեաց իւրեանց։
Օրհնեաց զնոսա՝ և բազմացան յոյժ. և
անասունք նոցա ոչ նուաղեցան։
Նուաղեցան նոքա՝ և չարչարեցան, ՚ի
նեղութեան չարեաց և ՚ի վշտաց։

 Եհեղ

Լինին անարգութի 'ի մէջ իշխանաց նոցա. մոլորեցոյց զնոսա յանապատի՝ և ոչ 'ի ճանապարհի:

Օգնեաց աղքատին յաղքատութենէ. և առաջնորդեաց ոպ̃ խաշինս ազգս նց̃:

Տեսցեն ուղիղք, և ուրախ եղիցին. և ամ̃ անօրէնք խցցեն զբերան իւր:

Ո՞վ է իմաստուն, որ պահեսցէ զայս. և 'ի միտ առցէ զողորմութիս Տն̃:

## Օրհնութ̃ի Սաղմոսաց Դաւթի: ՃԷ



ատրաստ է սիրտ իմ Այ̃, պատրաստ է սիրտ իմ օրհնել՝ և սաղմոս ասել քեզ փառօք իմովք:

Զարթիր փառք իմ, զարթիր՝ սաղմոսիւք և օրհնութեամբ, և ես զարթեայց առաւօտուց:

Խոստովան եղէց քեզ 'ի ժողովուրդս Տր̃. և սաղմոս ասացից քեզ յազգս:

Մեծ եղև մինչև յերկինս ողորմութի քո, մինչև յամպս ճշմարտութի քո:



Բարձ

Բարձրեալ ես դու յերկինս Ած, և յամ երկրի են փառք քո:

Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո աջով քով և լուր մեզ:

Ած խօսեցաւ 'ի սրբութե իւրմէ. բարձր եղէց՝ բաժանեցից զսիւքէմ, և զհովիտն յարկաց չափեցից:

Իմ է գաղաադ՝ և իմ է մանասէ. եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ:

Յուդա թագաւոր իմ. մովաբ՝ աւազան յուսոյ իմոյ:

Յեդովմէ ուղղեցից զգնացս իմ, և ինձ այլազգիք հնազանդք եղեն:

Ո տարցէ զիս 'ի քաղաք ամուր. կամ ով առաջնորդեսցէ ինձ մինչև յեդովմէ:

Ոչ թէ դու Ած, որ մերժեցեր զմեզ. և ոչ ելեր Ած ընդ զօրս մեր:

Տուր մեզ օգնութի 'ի նեղութե, զի սուտ է փրկութի մարդոյ:

Աստուծով արասցուք զօրութի. և նա յամօթ արասցէ զթշնամիս մեր:

'Ի կատարած. Սաղմոս դաւթի: ՃԸ.

Ած օրհնութե իմոյ մի լռեր. զի բերան մեղաւորի՝ բերան նենգաւորի բացաւ 'ի վե իմ:

Խօսեցան զինէն լեզուաւ նենգաւո-
րաւ. և բանիւ՟ ատելութե՟ պաշարեցին զիս։
Մարտեան ընդ իս ՚ի տարապարտուց.
փոխանակ սիրոյ իմոյ՝ մատնէին զիս,
այլ ես յաղօթս կայի։
Հատուցին ինձ չար փոխանակ ը՟ բար-
ւոյ. ատելութի՟ փոխանակ սիրոյ իմոյ։
Կացո ՚ի վր՟ նորա մեղաւոր. սատանայ
կացցէ ընդ աջմէ նորա։
՚Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատապար-
տեալ. և աղօթք նր՟ ՚ի մեղս դարձցին։
Եղիցին աւուրք նր՟ նուազք. և զայցե-
լութի՟ նր՟, զայն այլ առցէ։
Եղիցին որդիք նր՟ որբք, և կին նր՟ այրի.
տատանեսցին՝ փոփոխեսցին. որդիք նորա
մուրօղք եղիցին. և ելցեն ՚ի բնակութե՟
իւրեանց։
Քննեսցէ փոխատու զամ՟ ինչս նր՟, և
յափշտակեսցեն օտարք զվաստակս նր՟։
Մի՛ գտցի օգնական նմա. և մի՛ ոք ողոր-
մեսցի ՚ի վր՟ որբոց նր՟։
Եղիցին որդիք նր՟ ՚ի սատակումն, և
յազգէ ջնջեսցի անուն նր՟։
Յիշեսցին մեղք հօր նորա առաջի տն՟.

 և

և մեղք մօր նորա մի՛ ջնջեսցին. և եղիցին
առաջի Տեառն յամենայն ժամ։

Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա. փոխանակ զի ոչ յիշեաց առնել զողորմութիւն։
Հալածեաց զայր աղքատ և զտնանկ. սպանանել զայն, որ խոնարհն է սրտիւ։
Սիրեաց զանէծս՝ և եկեսցէ նմա. ոչ կամեցաւ զօրհնութիւն, հեռի եղիցի 'ի նմանէ։
Զգեցաւ զանէծս որպէս հանդերձ. մտցէ որպէս ջուր 'ի փոր նորա. և որպէս ձէթ
ընդ ոսկերս նորա։

Եղիցի նմա որպէս հանդերձ զոր ագանի. որպէս գօտի՝ որ ածի հանապազ ընդ մէջ։
Այս գործ է այնոցիկ, ոյք չարախօս կային զինէն առ Տէր. և ոյք խօսէին
չար զանձնէ իմմէ.

Այլ դու Տէր Տէր՝ արա՛ ընդ իս վասն անուան քում, զի քա՛ղցր է ողորմութիւն քո. և փրկեա՛ զիս՝ զի աղքատ և տնանկ եմ ես։
Սիրտ իմ խռովեցաւ 'ի փորի իմում. և ես որպէս ստուեր 'ի խուսափել իւրում պակասեցայ. և թօթափեցայ որպէս մարախ։
Ծունկք իմ տկարացան 'ի պահոց. և
մարմին իմ այլայլեցաւ յիւղոյ.

Եղէ ես նախատ նոցա . տեսին զիս՝ և
շարժեցին զգլուխս իւրեանց:

Օգնեա՛ ինձ տր̅ ած̅ իմ, և փրկեա՛ զիս՝
ըստ ողորմութե̅ քում:

Ծանիցեն զի ձեռն քո այս է . և դու
տր̅ արարեր զայս:

Նոքա անիծանեն՝ և դու օրհնեսցես .
որք յարուցեալ են ՚ի վր̅ իմ, զամօթ կրես
ցեն . այլ ծառայ քո ուրախ եղիցի ՚ի քեզ:

Զգեցցին զամօթ՝ որք չարախօս կային
զանձնէ իմմէ . և արկցեն որպ̅ կրկնոց՝
զամօթ իւրեանց զիւրեամբք:

Գովլ ես խոստովան եղէց առ տր̅ յոյժ
բերանով իմով . և ՚ի մէջ բազմաց օրհնե
ցից զքեզ:

Զի եկաց նա ընդ աջմէ տնանկիս . ՚ի
փրկել զիս յայնցանէ՝ որք հալածեն
զանձն իմ:

Ի կատարած . Սաղմոս դաւթի: ՃԹ

Ասաց տր̅ ցտր̅ իմ, նիստ ընդ աջմէ իմ
մէ, մինչև եդից զթշնամիս քո պատ
ուանդան ոտից քոց:

Զգաւազան զօրութե̅ առաքեսցէ քեզ
տր̅ ՚ի սիօնէ . և տիրեսցես դու ՚ի մէջ
թշնամեաց քոց:

Ընդ քեզ է սկիզբն աւուր զօրութեան.
'ի վայելչութեան սրբոց քոց՝ յարգանդէ յա-
ռաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:
Երդուաւ տէր՝ և ոչ զղջասցի, թէ
դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին
Մելքիսեդեկի. և տէր ընդ աջմէ քումմէ.
Խորտակեաց յաւուր բարկութեան զթա-
գաւորս. դատէ զհեթանոսս, և բազում
առնէ զհարուածս. և խորտակեսցէ ըզ-
գլուխս բազմաց յերկրի:
Ջուղխս 'ի ճանապարհի արբուսցէ. վա-
սն այսորիկ և բարձր արասցէ զգլուխս:

Ալէլուիա: ՃԺ



Խոստովան եղէց քեզ տէր՝ բոլորով
սրտիւ իմով. 'ի խորհուրդս ուղ-
ղոց՝ 'ի ժողովուրդս, մեծ են գործք
տեառն. և քննեալ են յամենայն կամս նորա:
Խոստովանութիւն և վայելչութիւն են գործք
նորա. արդարութիւն նորա մնայ յաւիտեանս
յաւիտենից:
Յիշատակ արար զսքանչելեաց իւրոց.
ողորմած գթած է տէր, կերակուր ետ
երկիւղածաց իւրոց:

Յիշեաց յաւիտենից զուխտ իւր. զզօ-
րութիւն գործոց իւրոց պատուիրեաց ժո-
ղովրդեան իւրում:

Տալ նոցա զժառանգութիւն հեթանոսաց.
գործք ձեռաց նորա՝ արդարութիւն և
իրաւունք են:

Հաւատարիմ են ամենայն պատուիրանք
նորա. հաստատեալ են յաւիտեանս յաւ-
իտենից. արարեալ են ճշմարտութեամբ
և ուղղութեամբ.

Փրկութիւն առաքեաց տէր ժողովրդեան իւ-
րում. պատուիրեաց յաւիտենից զուխտ
իւր. սուրբ և ահեղ է անուն նորա.

Սկիզբն զգօնութեան երկիւղ տեառն. իմաս-
տութիւն բարի ամենեցուն՝ որք առնեն
զնա. և օրհնութիւն նորա մնայ յաւիտեանս
յաւիտենից:

Լ. ձեռնկա. Դ վէ ապաշխարութեան, ահնգեաց և
պաղատեաց: ՃԺԱ.

Երանեալ է այր՝ որ երկնչի ՚ի տեառնէ.
զպատուիրանս նորա նա կամի յոյժ.

Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա. և
յազգ ուղղոց օրհնեսցի:

Փառք և մեծութիւն ՚ի տան նորա. արդա-
րութիւն նորա մնայ յաւիտեանս յաւիտենից:

Ծագեցաւ ՚ի խաւարի լոյս ուղղոց․ ո_
ղորմած գթած և արդար է տր̄․

Քաղցր այր՝ ողորմի և տայ փոխ․ յօրի_
նէ զբանս իւր ՚ի դատաստանի․ զի յաւի_
տեան նա մի՛ սասանեսցի․

Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն․
՚ի համբաւէ չարէ նա մի՛ երկիցէ․

Պատրաստ է սիրտ նր̄ յուսալ առ ած̄․

Հաստատեալ է սիրտ նր̄, և նա մի՛ երկի_
ցէ մինչև տեսցէ ՚ի թշնամիս իւր․

Սփռեաց՝ և ետ աղքատաց․ արդարու_թի̄
նորա մնայ յաւիտեանս յաւիտենից․ և
եղջիւր նր̄ բարձր եղիցի փառօք․

Մեղաւորն տեսցէ՝ և բարկասցի․ զա_
տամունս իւր կրճտեսցէ, և հալեսցի․
և ցանկութի̄ մեղաւորաց կորիցէ․

Ալէլուիա․ ՃԺԲ․

Օրհնեցէ՛ք մանկունք զտր̄․ և օրհնե_
ցէ՛ք զանուն տեառն․

Եղիցի անուն տն̄ օրհնեալ, յայսմհետէ
մինչև յաւիտեան․

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու՝ օրհ_
նեալ է անուն տն̄․

Բարձր է ՚ի վերայ ամ̄ ազգաց տր̄․ և
յերկինս են փառք նր̄․

Ո՞վ է ոպ տր ած մեր ՚ի բարձունս բնա
կեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս
և յերկրի.

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և
բարձրանէ զտառապեալս յաղբեաց։

Նստուցանէ զնա իշխանս ընդ իշխանս
ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրա
խութեան, ոպ մայր որդւովք բերկրեալ։

Ալէլուիա. ՃԺԳ.

Յելանելն Իէղի յեգիպտոսէ. տանն Յա
կոբայ ՚ի ժողովրդենէ այլազգեաց։

Եղև Հրէաստան սրբութի նորա, և Իս
րայէլ իշխանութի նորա.

Ծով ետես և փախեաւ, և Յորդանան
անդրէն դարձաւ.

Լերինք ցնծացեն ոպ խոյք. և բլուրք
ոպ գառինք մաքեաց։

Զի՞ է քեզ ծով զի տեսեր և փախեր.
և դու Յորդանան զի դարձար անդրէն։

Լերինք ցնծացէք ոպ խոյք, և բլուրք
ոպ գառինք մաքեաց։

Յերեսաց տն սասանեցաւ երկիր. յե
րեսաց այ Յակոբայ։

Ողորմեայց զկենաց ՚ի վտանգէ ձեռաց, և
զապաստանութիւն յաղթերպակութեան։
Ո՛չ մեզ Տէր՝ մի՛ մեզ. այլ անուան քում
տուր զփառս, վա՛ն ողորմութեան և ճշմար
տութեան քո։ Մի՛ երբէք ասասցեն ՚ի հե
թանոսս, թէ ուր է Ած նց։
Ած մեր յերկինս և յերկրի, զամ զոր
ինչ կամեցաւ՝ և արար։
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են.
ձեռագործ են որդւոց մարդկան։
Բերան ունին՝ և ոչ խօսին. աչս ունին՝
և ոչ տեսանեն։
Ականջս ունին՝ և ոչ լսեն. ռունգս ունին՝
և ոչ հոտոտեն։
Ձեռս ունին՝ և ոչ շօշափեն. ոտս ու-
նին՝ և ոչ գնան. և ոչ գոյ բարբառ ՚ի
կոկորդս նոցա։
Նման նոցա եղիցին, որք արարին զնս.
ամենքն որք յուսացեալ են ՚ի նս։
Տուն Իսրայէլի յուսացաւ ՚ի Տր. օգ-
նական և ընդունող է նց։
Տուն Ահարոնի յուսացաւ ՚ի Տր. օգ-
նական և ընկերող է նց։
Երկիւղածք Տն յուսացան ՚ի Տր. օգ-
նական և փրկիչ է նց։

Յիշեաց զմեզ Տէր և օրհնեաց զմեզ. օրհնեաց Տէր զտունն Իսրայէլի. օրհնեաց Տէր զտունն Ահարոնի։

Օրհնեաց Տէր զերկիւղածս իւր, ըզ փոքրկունս և զմեծամեծս։

Յաւելցէ ի ձեզ Տէր, ի ձեզ՝ և յորդիս ձեր։ Օրհնեալ էք դուք ի Տեառնէ, որ արար զերկինս և զերկիր։

Երկինք երկնից Տեառն. և զերկիր ետ որդւոց մարդկան։

Ոչ եթէ մեռեալք օրհնեսցեն զքեզ Տէր, և ոչ ամենեքին՝ որք իջանեն ի դժոխս։

Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ Տէր՝ յայսմհետէ մինչև յաւիտեան։

## Սաղմոս. ՃԺԴ

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ կարդացի առ նա։

Շրջեցան զինեւ երկունք մահու. և վտանգք դժոխոց գտին զիս։



Օ. Նե

Զնեղութիւն և զանձկութիւն գտի, և զա-
նուն տն կարդացի:
Ո՛ տր՝ փրկեա՛ զանձն իմ. ողորմած տծ
մեր ողորմի՝ և պահէ զտղայս տր:
Ես խոնարհ եղէ՝ և տր կեցոյց զիս.
դարձ անձն իմ՛ի հանգիստ քո, զի տր
օգնեաց քեզ:
Փրկեաց զանձն իմ՛ի մահուանէ. զաչս
իմ յարտասուաց. և զոտս իմ՛ի գայ-
թակղութենէ. հաճոյ եղէց առաջի տն
յերկրին կենդանեաց:
Ալէլուիա: ՃԺԵ
Հաւատացի զոր և խօսեցայ. և ես խո-
նարհ եղէ յոյժ:
Ես ասացի՛ի զարմանալ իմում, թէ
ամ մարդ սուտ է:
Զինչ տաց արիտուր տն՝ ընդ ամի
զոր և ետ ինձ:
Զբաժակ փրկութեն ընկալայց, և զա-
նուն տն կարդացից:
Զաղօթս իմ տն տաց՝ առաջի ամ ժո-
ղովրդեան նորա:
Պատուական է առաջի տն մահ որց ի-
րոց. ո՛վ տր՝ ես ծառայ քո եմ, ծառայ և
որդի աղախնոյ քո:

Հատեր զկապանս իմ. քեզ մատուցից պատարագ օրհնութե, և զանուն տն կարդացից:

Զուխտս իմ տն տաց՝ առաջի ամ ժողովրդեան նորա. ՚ի գաւիթս տան տն, և ՚ի մէջ քո երուսաղէմ:

Ալէլուիա: ՃԺԶ.

Օրհնեցէք զտր ամ ազգք. գովեցէք զնա ամ ժողովուրդք:

Զօրացաւ ողորմութի նորա ՚ի վր մեր. և ճշմարտութի տն մնացէ յաւիտեան.

Ալէլուիա: ՃԺԷ.

Խոստովան եղերուք տն՝ զի քաղցր է. զի յաւիտեան է ողորմութի նր:

Ասասցէ տուն իսրայէլի՝ զի յաւի":

Ասասցէ տուն ահարոնի՝ զի յաւի":

Ասասցեն երկիւղածք տն՝ զի յաւի":

՚Ի նեղութե խնդրեա առ տր կարդա ցի. և լուաւ ինձ յանդորր:

Տր է իմ օգնական, և ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ.

Տէր է իմ օգնական, և ես տեսից ՚ի թշնամիս իմ:

Բարի է յուսալ ՚ի տր՝ քան յուսալ



՚ի

'ի մարդկին. բարի է յուսալ 'ի տր՝ քան
յուսալ յիշխանս:

Ամենայն ազգք շրջեցան զինեւ, եւ անուամբ տն յաղթեցի նց:

Շրջելով շրջեցան զինեւ, եւ պաշարեցին զիս 'ի միասին. եւ անուամբ տն վանեցի զնս:

Շուրջ եղեն զինեւ որպ մեղուք, վառեցան բորբոքեցան որպ փուշ 'ի հուր. եւ անուամբ տն՝ մերժեցի զնս:

'Ի մերժելն դղրդեցայ, եւ եղէ մերձ 'ի գլորել. եւ տր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ՝ եւ օգնութիւն իմ տր, եւ եղեւ ինձ 'ի փրկութիւն:

Ձայն ցնծութեան փրկութեան՝ 'ի յարկս արդարոց:

Աջ տն արար զօրութիւն. աջ տն բարձր արար զիս. եւ աջ տն արար զօրութիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից՝ եւ պատմեցից զգործս տն:

Խրատելով խրատեաց զիս տր, եւ 'ի մահ ոչ մատնեաց:

Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն՝ եւ խոստովանեցայց տն:

Այս դուռն տն է, և արդարք մտա–
նեն ընդ սա։

Խոստովան եղէց քեզ տէր, զի լուար
ինձ. և եղեր ինձ 'ի փրկութի։

Վէմն՝ զոր անարգեցին շինողքն, նա
եղև գլուխ անկեան։

'Ի տնէ եղև այս. և է սքանչելի առա–
ջի աչաց մերոց։

Այսօր է՝ զոր արար տր. եկայք ցն–
ծացուք և ուրախ եղիցուք 'ի սմա։

Ով տր փրկեա, ով տր առաջնորդեա.
օրհնեալ որ գալոց ես յանուն տն. և
օրհնեցաք զքեզ 'ի տանէ տն։

Տր ած մեր երևեցաւ մեզ. արարէք
տօնս ուրախութե կանխաւ, մինչև յան–
կիւնս սեղանոյ։

Ած իմ ես դու՝ և խոստովան եղէց
քեզ. ած իմ ես դու՝ և բարձր արա–
րից զքեզ։

Խոստովան եղէց քեզ տր՝ զի լուար
ինձ, և եղեր ինձ 'ի փրկութի։

Խոստովան եղերուք տեառն, զի բա–
րի է. զի յաւիտեան է ողորմութիւն
նորա։

## Ալէլուիա։ ՃԺԸ

Երանեալ են ամբիծք ՚ի ճանա-
պարհի, և որք գնան յօրէնս տն։
Երանի, որք քննեն զվկայութիս նորա.
բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն
զնա։
Մի թէ որք գործեն զանօրէնութի,
՚ի ճանապարհս նր գնացին։
Դու պատուիրեցեր զպատուիրանս
քո՝ ՚ի պահել իմ յոյժ։
Երանի թէ յաջողէին ինձ ճանապարհք
իմ, ՚ի պահել ինձ զարդարութիս քո։
Յայնժամ ես ոչ ամաչէի, ՚ի զգուշանալ
ինձ ՚ի պատուիրանս քո։
Խոստովան եղէց քեզ տր յուղղութի
սրտի իմոյ. մն ուսայց զիրաւունս ար-
դարութե քո։
Զիրաւունս քո պահեցի, մի թողուր
զիս մինչ իսպառ։
Իւ ուղղեսցէ երիտասարդ զճանա-
պարհս իւր. այլ ՚ի պահել զբանս քո։
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ.


մի

մի՛ մերժեր զիս 'ի պատուիրանաց քոց։
'Ի սրտի իմում թագուցի զբանս քո,
որպէս զի մի՛ մեղայց քեզ։
Օրհնեալ ես դու տէր․ ուսո՛ ինձ զար-
դարութիւնս քո։
Շրթամբք իմովք պատմեցից զա̃մ իրա-
ւունս բերանոյ քո։
'Ի ճանապարհս վկայութեանց քոց զուար-
ճացայ, որպէս յա̃մ 'ի մեծութեան։
'Ի պատուիրանս քո հոգացայ, և զգու-
շացայ 'ի ճանապարհս քո։
Զիրաւունս քո խօսեցայ, և ոչ մոռա-
ցայ զբանս քո։
Հատո՛ ծառայի քում, զի կեցից և պա-
հեցից զբանս քո։
Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց 'ի սքան-
չելիս օրինաց քոց։
Պանդուխտ եմ ես յերկրի․ մի՛ թագու-
ցաներ յինէն զպատուիրանս քո։
Փափագեաց անձն իմ, 'ի ցանկալ ինձ
յիրաւունս քո յա̃մ ժամ։
Սաստեցեր ամբարտաւանից․ անիծեալ՝
որք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց։
'Ի բաց արա յինէն զնախատինս և զարհա


մար

մարհանա. զի զվկայութիւն քո խնդրեցի.
Բազմեցին. նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրա-
ւունս քո:
Զի վկայութիւնք քո խօսք իմ էին. և խորհուրդք իմ յարդարութիւն քո:
Մերձեցաւ անձն իմ ի հող. տէր կեցո՛ զիս ըստ բանի քում:
Զճանապարհս իմ պատմեցի քեզ՝ և լուար ինձ. ուսո՛ ինձ զարդարութիւն քո:
’Ի ճանապարհս արդարութեանց քոց խրատեա՛ զիս. և քննեցից զսքանչելիս քո:
Տքնեցաւ անձն իմ առ ’ի ձանձրանալ. հաստատեա՛ զիս ’ի բանս քո:
Զճանապարհս մեղաց ’ի բաց արա յէ-
նէն. և յօրէնս քո ողորմեա՛ ինձ:
Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրե-
ցի. և զիրաւունս քո ոչ մոռացայ:
Մերձեցայ ես ’ի վկայութիւնս քո, տէր մի՛ յամօթ առներ զիս:
’Ի ճանապարհս պատուիրանաց քոց ըն-
թացայց. զի անձուկն ազատեցեր սրտի իմոյ:
Օրէնսդրեա՛ տուր զիս տէր, ’ի ճանապարհս իրաւանց քոց. և խնդրեցից զնոյն յամ
ժամ:



Խնա...

Իմաստուն արա զիս. և քննեցից զօ-
րէնս քո, և պահեցից զնա բոլորով սըր-
տիւ իմով։

Առաջնորդեա՛ ինձ 'ի շաւիղս պատուի-
րանաց քոց. զի ընդ նոյն հաճեցայ։

Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո,
և մի՛ յագահութիւն։

Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից զնանրութիւն. 'ի ճանապարհս քո կեցո՛ զիս։

Հաստատեա՛ ծառայի քում՝ զբան քո
յերկիւղ քո։

Հա՛ն յինէն զնախատինս, զոր և կարծե-
ցի. զի դատաստանք քո քաղցր են։

Ահա՛ ցանկացայ պատուիրանաց քոց,
յարդարութեան քում կեցո՛ զիս։

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութիւն քո տէր. և
փրկութիւն քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս
բանիւք. զի ես 'ի բանս քո յուսացայ։

Մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ
զբան ճշմարտութեան մինչև յոյժ. զի յի-
րաւունս քո յուսացայ։

Պահեցից զօրէնս քո յամենայն ժամ, յաւի-
տեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

 Գնայի

Գնայի ես յանդորրու. զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։

Խորհէի ՚ի պատուիրանս քո, զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում։

Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։

Սա մխիթարեաց զիս ՚ի խոնարհութեան իմում. զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց, և ոյք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո, ՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Ութերորդն։

Բաժին իմ ես դու տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում։

Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ ՚ի վկայութիւնս քո։

Պատրաստեցայ՝ և ոչ խռովեցայ. զի պահեցից զպատուիրանս քո։

Տուունք մեղաց պատեցան զինև. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

՚Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել առ քեզ վասն իրաւանց և արդարութեան քո։

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց. որոց պահեալ էին զպատուիրանս քո։

Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր. զարդարութիւնս քո ուսո ինձ։

Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի քում տէր, ըստ բանի քում։

Զքաղցրութիւն, զխրատ, և զգիտութիւն ուսո ինձ. զի ՚ի պատուիրանս քո ես հաւատացի։

Մինչև խոնարհեալ էի ես՝ մեղայ. վասն



այսր

այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։
Քաղցր ես դու տէր, և քաղցրութեամբ քով
ուսո ինձ զարդարութիւնս քո։
Բազմացան յիս անիրաւութիւնք ամբար-
տաւանից. այլ ես բոլորով սրտիւ իմով
քննեցի զպատուիրանս քո։
Մածան որպէս կաթն սիրտք նոցա. այլ ես
զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս.
որպէս ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան
զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին՝ և ստեղծին զիս իմաս-
տուն արա զիս և ուսայց զպատուիրանս քո։
Երկիւղածք քո տեսցեն զիս՝ և ուրախ
եղիցին. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Ծանեայ տէր՝ զի արդարութիւն են դատաս-
տանք քո, յիրաւի խոնարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութիւն քո ՚ի մխիթարել զիս.
ըստ բանի քում, ծառայի քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ և կեցից.
զի օրէնք քո խօսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք ՚ի տա-
րապարտուց անիրաւեցան յիս. այլ ես
հօգացայ ՚ի պատուիրանս քո։

Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և
ոյք ճանաչեն զվկայութի՟ս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութե՟ն
քում. զի մի՛ ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ ՚ի փրկութի՟ն քո.
զի ես ՚ի բանս քո յուսացայ.
Սպառեցին աչք իմ բանի քում. ասացի
Երբ մխիթարեսցես զիս.
Եղէ ես որպ՟ տիկ ՚ի պաղեղի. զի զարդա-
րութի՟ս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո.
Երբ արասցես ինձ իրաւունս ՚ի հալած-
չաց իմոց։ Պատմեցին ինձ անօրէնք ըղ-
խորհուրդս. այլ ոչ որպ՟ զօրէնս քո։
Ամ՟ պատուիրանք քո ճշմարիտ են. ՚ի նա-
նիր հալածեցին զիս, օգնեա՛ ինձ.
Փոքր մի ևս՝ և կորուսանէին զիս յերկ-
րի. այլ ես ոչ թողի զպատուիրանս քո։
Ըստ ողորմութե՟ քում կեցո՛ զիս. և պա-
հեցից զվկայութի՟ս բերանոյ քո։
Յաւիտեան տ՟ր՝ բանն քո կայ յերկինս.
ազգէ մինչև յազգ է ճշմարտութի՟ քո.
Հաստատեցեր զերկիր՝ և կայ։
Հրամանի քում մնայ տիւ՟ . զի ամ՟քն
ծառայք քո են։

Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին, կան-
խաւ ես արդեօք կորուսեալ էի ՚ի խո-
նարհութեան իմում։
Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս
քո. զի նոքօք կեցուցեր զիս։
Քո եմ ես, և կեցո զիս. զի զարդա-
րութիւնս քո խնդրեցի։
Ինձ ապասեցին մեղաւորք ՚ի կորուսա-
նել. զի զվկայութիւնս քո ես ՚ի միտ առի։
Ամենայն կատարածի տեսի զվախճան. յոյժ
անդորր էին ինձ պատուիրանք քո։
Որպէս սիրեցի զօրէնս քո. զօր հանապազ
խօսք իմ էին։
Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր
զիս ՚ի պատուիրանս քո. զի յաւիտեան
իմ էին։
Քան զամենայն ուսուցիչս իմ իմաստուն ե-
ղէ. զի վկայութիւնք քո խօսք իմ էին։
Քան զծերսն իմաստուն եղէ. զի ըզ
պատուիրանս քո քննեցի։
Ամենայն ճանապարհաց չարաց արգելի զոտս
իմ. որպէս զի պահեցից զբանս քո։
Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ. զի
դու օրէնսդէր արարեր զիս։

Ո՜պ զի քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո
քան զմեղր՝ բերանոյ իմոյ։
Ի պատուիրանաց քոց իմացայ՝ ատեցի
զա̃մ ճնպ̃րհս չարաց. զի դու օրէնսդրեա
արարեր զիս։
Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս
տան շաւղաց իմոց.
Երդուայ և հաստատեցի. զի պահեցից
զա̃մ իրաւունս արդարութ̃ե քո։
Խոնարհ եղէ մինչև յոյժ. տր̃՝ կեցո
զիս ըստ բանի քում.
Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեսցիս տր̃.
և զիրաւունս քո ուսո ինձ։
Անձն իմ ՚ի ձեռս քո է յա̃մ ժամ. և
զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Եդին ինձ մեղաւորք զորոգայթ. ՚ի
պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։
Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան.
զի ցնծութի̃ է սրտի իմոյ։
Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդա
րութիս քո յաւիտեան, վս̃ հատուցման։
Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սի
րեցի.
Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես
՚ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք. և քննե
ցից զպատուիրանս այ իմոյ:
Օգնեա՛ ինձ ըս բանի քում, և կեցո՛ զիս.
և մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ:
Օգնեա՛ ինձ, և ապրեցո՛ զիս. և խորհե
ցայց յիրաւունս քո յամ ժամ:
Անարգեցեր զամենսին՝ որք ապստամբք
եղեն յարդարութեց քոց. զի անիրաւու
թե էին խորհուրդք նց:
Զանցաւորս համարեցայ զամ մեղա
ւորս երկրի. վս այսորիկ՝ սիրեցի ըզ
պատուիրանս քո:
Բևեռեա՛ ըս երկիւղ քո զմարմինս իմ.
զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ:

Ային:

Արարի իրաւունս և արդարութի.
մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղ
չաց իմոց:
Ընկա՛լ զծառայս քո ՚ի բարի. զի մի՛
ամբարտաւանք զրկեսցեն զիս.
Ակնատեցին աչք իմ փրկութե քում տր.
և բանից արդարութե քո.

Արա՛ ընդ ծառայի քում տէր ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո՛ ինձ։

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա զիս, եւ ծանեայց զվկայութիւնս քո։

Ժամ է պաշտել զտէր. խափանեցին զօրէնս քո։

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո, քան զոսկի եւ զտպազիոն։

Ամենայն պատուիրանօք քո յաջողեցայ ինձ. զի ատեցի ես զճանապարհս չարաց։

Սքանչելի են վկայութիւնք քո, վասն այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։

Յայտնութիւն բանից քոց լուսաւոր է, եւ իմաստուն առնէ զտղայս։

Զբերան իմ բացի, եւ առի զհոգի. ի պատուիրանս քո փափագեաց անձն իմ։

Նայեա՛ առ իս եւ ողորմեա՛ ինձ, ըստ իրաւանց սիրողաց անուան քո։

Զճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում. եւ մի՛ տիրեսցեն ինձ ամ մեղք։

Փրկեա՛ զիս ի զրպարտութենէ մարդկան. եւ պահեցից զպատուիրանս քո։

Երեւեցո՛ զերեսս քո ի ծառայս քո, եւ ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։



Աչ

Առուակք ջուրց իջին յաչաց իմոց. զի ոչ պահեցին զօրէնս քո։

Արդա՛ր ես դու Տէր, և ուղիղ են դատաստանք քո։

Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց. և ճշմարիտ են յոյժ։

Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ։

Ընտրեալ է բան քո յոյժ, և ծառայ քո սիրեաց զսա։

Մանուկ եմ ես և արհամարհեալ. և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։

Արդարութիւն քո՝ արդարութիւն յաւիտենից. և օրէնք քո ճշմարիտ են։

Նեղութիւնք և վիշտք գտին զիս. և պատուիրանք քո խօսք իմ էին։

Արդարութիւն են վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն արա և կեցո զիս։

Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով. լո՛ւր ինձ Տէր, զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա զիս. և պահեցից զվկայութիւնս քո։

Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի. և ես ի բանս քո յուսացայ։

Կանխեցին աչք իմ առաւօտու, ՚ի խօ-
սել ինձ զբանս քո։
Զձայնի իմում լուր Տէր՝ ըստ ողորմութե-
քում. և յիրաւունս քո կեցո զիս։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ զանօ-
րէնութիւն. զի յօրինացս քոց հեռի եղեն։
Մերձ ես դու Տէր. և ամենայն պատուի-
րանք քո ճշմարիտ են։
՚Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց քոց.
զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։
Տես զխոնարհութիւն իմ, և փրկեա զիս.
զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։
Դատեա զդատաստանս իմ, և փրկեա
զիս. և ըստ բանի քում կեցո զիս։
Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն, զի
զիրաւունս քո ոչ պահեցին։
Գթութիւնք քո բազում են Տէր, ըստ
իրաւանց քոց կեցո զիս։
Բազում են, որք հալածեն և նեղեն զիս.
՚ի վկայութեանց քոց ես ոչ խոտորեցայ։
Հայէի յանզգամսն՝ և մաշէի, զի ըզ-
պատուիրանս քո ոչ պահեցին։
Տես՝ զի զպատուիրանս քո սիրեցի.
Տէր՝ ողորմութեամբ քով կեցո զիս։

 Սկիզբն

Սկիզբն բանից քոց ճշմարտութի է. յաւիտեան են ամ իրաւունք արդարութե քո։

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր. և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ։

Ցնծացայ ես 'ի բանս քո, որպ այն՝ որ գտանէ աւար բազում։

Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի։

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ վս իրաւանց և արդարութե քո։

Խաղաղութի բազում է այնոցիկ՝ ոյք սիրեն զօրէնս քո. և ոչ գոյ 'ի նս գայթակղութի։

Սպասեցի փրկութե քում տր, և զպատուիրանս քո սիրեցի։

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զնս յոյժ։

Պահեցից զպատուիրանս՝ և զվկայութիւնս քո. զի ամ ճնպրհք իմ առջի քո են։

Մերձեսցին խնդրուածք իմ առջի քո տր. ըս բանի քում իմաստունս արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տր. և բանիւ քով փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս

քո, յորժամ ուսուսցես ինձ զարդա-
րութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ
պատուիրանք քո արդարութիւն են։
Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։
Յանկացայ փրկութե քում տր. և օրէնք քո խօսք իմ էին։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։
Մոլորեցայ ես որպ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Օրհնութիւն Եսայեայ՝ կայծակնաճաճանչոյ որ Աստուածայինն. Եսայայ. իէ։

Օրհնեցէ՛ք զած յօրհնութիւն նոր. զի իշխանութիւն նր 'ի բարձունս փառաւորի։
Եւ անուն նր փառաւորեալ է՝ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի։
Որք իջանէին 'ի ծով նաւուք. կղզիք և ամ բնակիչք նոցա ընդ նմա։

Ուրախ եղիցի անապատն՝ և ամ բնակիչք նորա. ուրախ եղիցին բանակք և բակք կեդարու. և ուրախ եղիցին բնակիչք վիմին. Ի գլխոց լերանց գոչեսցեն, տասցեն զփառս այ. և զքաջութի նորա կղզիք պատմեսցեն։

Տր ած զօրութեանց դիմեալ գայ. զարթուցանել զպատերազմ, յարուցանել զնախանձ, փող հարկանել՝ և գոչել ի վր թշնամեաց իւրոց զօրութբ բազմաւ. Ուրախ եղիցին երկինք ի վերուստ. և ամպք ցօղեսցեն զարդարութի։ Բղխեսցէ երկիր զողորմութի և զարդարութի՝ առ հասարակ բղխեսցէ։

## Աղօթք Յովնանու Մարգարէին։

Ի նեղութեան իմում եւ առ տր կարդացի. և լուաւ ած յանդնդոց դժոխոց աղաղակի իմում։ Լուր տր ձայնի իմում, զի ընկեցեր զիս ի խորս ծովու. և շրջանք գետոց պաշարեցին զիս. Ամենայն զբօսանք քո և ալիք քո՝ անցին ի վր իմ. և ասացի, թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց։

Օրհնութիւն աստիճանաց։

ՃԺԹ

Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ
իմում ես առ տէր կարդա-
ցի, եւ լուաւ ինձ տէր։
փրկեայ զանձն իմ ի շըր-
թանց նենգաւորաց, եւ ի
լեզուէ չարէ։
Զի՞ տացի քեզ կամ զի՞նչ
յաւելցի, լեզու նենգաւոր։
Որպէս նետք հզօրի, զի սրեալ են կայ-
ծակամբք կաղնոյ։
Վայ ինձ զի ը երկար եղեւ պանդխը-
տութիւն իմ. եւ բնակեցայ ես ի վրանս կե-
դարու։

Բազում անգամ բնակեցաւ անձն իմ ընդ այնոսիկ, որք ատէին զողջոյն։
Ես էի խաղաղարար. յորժամ խօսէի, մարտնչէին ընդ իս։

Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻ

Համբարձի զաչս իմ ՚ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։
Օգնութիւն ինձ ՚ի տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս և զերկիր։
Մի՛ տար ՚ի սասանումն զոտն քո. և մի՛ ննջեսցէ պահապան քո։
Ահա ոչ ննջէ՝ և ոչ ՚ի քուն երթայ պահապանն իսրայէլի։
Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալցի աջոյ ձեռամբն իւրով։
Արեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և մի՛ լուսինն ՚ի գիշերի։
Տէր պահեսցէ զքեզ յամ չարէ. պահեսցէ տէր զանձն քո։
Տէր պահեսցէ զմուտ և զել քո՝ յայսմ հետէ մինչև յաւիտեան։

Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻԱ

Ուրախ եղէ ես՝ որք ասէին ցիս, ՚ի տուն տեառն երթիցուք մեք։

Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ։

Երուսաղէմ շինեալ ո՟րպ քաղաք. և բնակութի նորա շուրջ զնովաւ։

Անդ ելանէին ազգք՝ ազգք տ՟ն. ՚ի վկայութի Իսրայէլի, խոստովան լինել անուան տ՟ն։

Անդ արկեալ են աթոռք դատաստանի. աթոռս արկեալ են ՚ի տան դաւթի։

Հարցէք զողջունէ Երուսաղէմի, և ըղձ շինութենէ՝ ոյք սիրէք զ՟նա։

Եղիցի խաղաղութի ՚ի զօրութե քում, և շինութի յաշտարակս յամուրս քո։

Վ՟ն եղբարց և ընկերաց իմոց խօսեցայ զխաղաղութի. վ՟ն քո և վ՟ն տան տ՟ն ա՟յ մերոյ խնդրեցաք զբարութի ՚ի քէն։

Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻԲ

Առ քեզ տ՟ր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես ՚ի յերկինս։

Ո՟պ աչք ծառայի ՚ի ձեռս տ՟ն իւրոյ, և ո՟պ աչք աղախնոյ ՚ի ձեռս տիկնոջ իւրոյ։

Նոյնպէս են աչք մեր առ քեզ տ՟ր ա՟ծ մեր, մինչև ողորմեսցիս ՚ի մ՟զ մեր։

Ողորմեա՛ մեզ տէր՝ ողորմեա՛ մեզ. զի
բազում լցաք արհամարհանօք։
Յոյժ առաւել լցան անձինք մեր նա-
խատանօք, որք նախատէին զմեզ. և ար-
համարհանօք ամբարտաւանից։

Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻԳ.

Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասասցէ իսրայէլ
եթէ ոչ տէր էր առ մեզ։
Ընդ յառնել մարդկան ի վերայ մեր, կեն-
դանւոյն կամեցան կլանել զմեզ։
Ի բարկանալ սրտմտութեան նոցա ի վերայ մեր.
ապա և ջուրք ուրեմն ընկղմեցին զմեզ։
Ընդ ուղխս անցին անձինք մեր. անցին
անձինք մեր՝ ընդ ուղխս անդադարս.
Օրհնեալ է տէր՝ որ ոչ ետ զմեզ յորս
ատամանց նոցա։ Անձինք մեր ապրեցան
որպէս ճնճղուկք՝ յորոգայթէ որսողաց.
Որոգայթք նոցա փշրեցին, և մեք ապրեցաք.
Օգնութիւն է մեզ յանուանէ տեառն, որ
արար զերկինս և զերկիր.

Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻԳ.

Որ յուսայ ի տէր, որպէս լեառն սիոն, մի
սասանեսցի յաւիտեան՝ որ բնակեալն է
յերուսաղէմ։

Լերինք շուրջ են զնովաւ. Տր շուրջ է զժողովրդեամբ իւրով՝ յայսմհետէ մինչև յաւիտեան։

Ոչ թողու Տր զգաւազան մեղաւորաց ի վիճակս արդարոց. և արդարք մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէնութի։

Բարի առնէ Տր բարեաց. և այնոցիկ, որք ուղիղ են սրտիւք։

Իսկ զթիւրեալսն ի յափշտակութի, տանի զնս Տր ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութի. խաղաղութի ի վր իսլի։

Օրհնութի աստիճանաց։

ՃԻԵ

Դարձուցանել Տն զգերութի Սիոնի, և եղաք մեք մխիթարեալք։

Յայնժամ լցան բերանք մեր խնդութբ, և լեզուք մեր ցնծութբ։

Յայնժամ ասասցեն ի հեթանոսս, մեծ արար Տր զառնելն իւր ընդ մեզ. և մեք եղաք բերկրեալք։



Դար

Դարձո՛ տէր զգերութիւն մեր՝ որպէս զուղիս
ի հարաւոյ. որք վարէին արտասուօք,
ցնծութեամբ հնձեսցեն։
Երթալով երթային՝ և լային, որք բար-
ձեալ տանէին զսերմանիս իւրեանց։
Գալով եկեսցեն՝ և ցնծասցեն, որք
առեալ բերցեն զորայս իւրեանց։

## Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻԶ.

Եթէ ոչ տէր շինէ զտունն, ՚ի նանիր
վաստակեն շինողք նորա։
Եթէ ոչ տէր պահէ զքաղաքն, ընդու-
նայն տքնին պահապանք նորա։
՚Ի նանիր է ձեզ յառնել կանխաւ.
արդ՝ արիք մինչև էք նստեալք, որք
ուտէք զհաց ցաւոց։
՚Ի ժամանակի, որպէս տացէ քուն սիրե-
լեաց իւրոց. ժառանգութիւն տեառն՝ որդիք
են. որոց վարձք իւր են, այն է պտուղ
որովայնի իւրոյ։
Որպէս նետք ՚ի ձեռս հզօրի, այնպէս են
և որդիքն թօթափելոց։
Երանի, որ էլից զցանկութիւն իւր ՚ի նոցանէ.
մի՛ ամաչեսցեն՝ յորժամ խօսեսցին թշ-
նամիք նոցա ընդ նոսա առ դրանն։

## Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻԷ

Երանի ամ՟ն ոյք երկնչին ՚ի տ՟նէ,
և գնան ՚ի ճանապարհս ն՟ր։
Զվաստակս ձեռաց քոց կերիցես. ե-
րանի է քեզ, և բարի եղիցի։
Կին քո ո՟պ այգի վայելուչ յանկիւնս
տան քո. որդիք քո ո՟պ նորատունկ ձի-
թենւոյ շուրջ զսեղանով քով։
Այսպ՟ս օրհնեսցի ամ՟ն մարդ, որ երկնչի
՚ի տ՟նէ. օրհնեսցէ զքեզ տ՟ր ՚ի սիոնէ։
Եւ տեսցես դու զբարութի երուսա-
ղէմի զամ՟ն աւուրս կենաց քոց։
Տեսցես դու զորդիս որդւոց քոց.
խաղաղութի ՚ի վ՟ր ի՟էլի։

## Օրհնութիւն աստիճանաց։ ՃԻԸ

Բազում անգամ մարտեան ընդ իս ՚ի
մանկութէ իմմէ, ասասցէ ի՟էլ։
Բազում անգամ մարտեան ը՟ իս ՚ի ման-
կութէ իմմէ, և ինձ ոչ յաղթեցին։
Զթիկունս իմ հարին մեղաւորք. ընդ
երկար արարին զանօրէնութիս իւրեանց։
Տ՟ր արդար է, և խորտակէ զուլն մեղա-
ւորաց։ Ամաչեսցեն և յետս դարձցին
ամ՟քն ոյք ատեն զսիոն։

Եղիցին նոքա որպէս խոտ տանեաց. որ մինչ չեւ ի բուռն եկեալ՝ չորասցի.
Որով ոչ լցից զբուռն իւր հնձօղն, եւ ոչ զգիրկս՝ որ զորայն ժողովէր.
Ոչ ասացին անցաւորքն՝ ովք անցանէին առ նոքօք, թէ օրհնութիւն Տեառն ընդ ձեզ. եւ օրհնեցաք զձեզ յանուն Տեառն.

## Օրհնութիւն աստիճանաց. ՃԻԹ

Ի խորոց կարդացի առ քեզ Տէր՝ Տէր՝ լուր ձայնի իմում.
Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց.
Թէ զանօրէնութիւնս իմ քննես Տէր Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո. զի ի քէն է քաւութիւն.
Վասն անուան քո համբերի Տէր. համբերեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ի Տէր.
Ի պահէ առաւօտու՝ մինչեւ յերեկոյ. Ի պահէ առաւօտու՝ յուսասցէ Իսրայէլ ի Տէր.
Ի Տեառնէ է ողորմութիւն բաղում. ի նմանէ է փրկութիւն. եւ նա փրկեսցէ զԻսրայէլ յամենայն անօրէնութեանց նորա.

Անդ ծաղկեցից եղջիւր 'ի դաւիթ. պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ։
Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ. այլ 'ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Աստիճանաց. ՃԼԲ

Զի՞նչ բարի, կամ զի՞նչ վայելուչ, զի բնակեն եղբարք 'ի միասին։
Որպէս իւղ զի իջանէ 'ի գլուխ՝ և 'ի մօրուսն Ահարօնի. և 'ի մօրուացն իջանէ 'ի գրապանս զգեստու նորա։
Որպէս ցօղ՝ զի ցօղէ 'ի Հերմոնէ 'ի վերայ լերին Սիոնի։
Տէր անդ պատրաստեաց զօրհնութիւն, և զկեանսն յաւիտենից։

Աստիճանաց. ՃԼԳ

Աստ օրհնեցէք Տէր ծառայք Տեառն զՏէր. ո՛ կայք 'ի տան Տեառն, և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ։
'Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր 'ի սրբութիւն. և օրհնեցէք զՏէր։
Օրհնեսցէ զքեզ Տէր 'ի Սիոնէ. որ արար զերկինս և զերկիր։

Ալէլուիա. ՃԼԴ

Օրհնեցէք զանուն Տեառն. օրհնեցէք



ծա

Ծառայք տն զՏր․ ո կայք 'ի տան տն,
'ի գաւիթս այ մերոյ․
Օրհնեցէք զՏր՝ զի բարի է․ սաղմոս
ասացէք անուան նր՝ զի քաղցր է․
Զյակոբ ընտրեաց իւր Տր, և զԻէլ
ժառանգութի իւր։
Ես ծանեայ՝ զի մեծ է Տր․ և Տր մեծ
է քան զամ կուռս։
Զամ զոր ինչ կամեցաւ՝ և արար Տր․ յեր
կինս և յերկրի՝ 'ի ծով և յամ խորս։
Հանէ զամպս 'ի ծագաց երկրի․ զփայ
լատակունս իւր յանձրևս արար․ և հա
նէ զհողմ 'ի շտեմարանաց իւրոց․
Եհար զամ անդրանիկս եգիպտացւոց,
'ի մարդոյ մինչև յանասուն։
Առաքեաց զնշանս և զարուեստս իւր
'ի մէջ քո եգիպտոս, 'ի փարաւոն՝ և
յամ ծառս իւր։ Եհար զազգս բա
զումս․ և սպան զթագաւորս հզօրս․
Զսեհոն թգւոր ամուրհացւոց՝ զովգ
թագաւոր բասանու, և զամ թագաւո
րութիւնս քանանացւոց․
Ետ զերկիր նց 'ի ժառանգութի․ ժառան
գութի իէլի ժողովրդեան իւրոյ։

Տէ՛ր անուն քո յաւիտեան. Տէ՛ր յիշատակ քո ազգէ մինչեւ յազգ:

Դատէ Տէր զժողովուրդս իւր. եւ ՚ի ծառայս իւր մխիթարի:

Կուռք հեթանոսաց ոսկի եւ արծաթ են, ձեռագործ են որդւոց մարդկան:

Բերան գոյ՝ եւ ոչ խօսին. աչք են՝ եւ ոչ տեսանեն:

Ականջք են՝ եւ ոչ լսեն. եւ ոչ գոյ շունչ ՚ի բերանս նոցա:

Նման նոցա եղիցին որք արարին զնոսա. ամենեքին որք յուսացեալ են ՚ի նոսա:

Տո՛ւն Իսրայէլի օրհնեցէք զՏէր. տո՛ւն Ահարոնի օրհնեցէք զՏէր:

Տո՛ւն Ղեւեայ օրհնեցէք զՏէր. երկիւղածք Տեառն օրհնեցէք զՏէր:

Օրհնեալ Տէր ՚ի Սիոնէ. որ բնակեալն է յԵրուսաղէմ:

## Ալէլուիա: ՃԼԵ

Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Խոստովան եղերուք Տեառն աստուծոց. զի":

Խոստովան եղերուք տեառն տերանց.
զի յաւիտեան է ող''։
Որ արար սքանչելիս մեծամեծս միայն.
զի յաւիտեան է ող''։
Զերկինս արար իմաստութեամբ իւրով.
զի յաւիտեան է ող''։
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց.
զի յաւիտեան է ող''։
Որար զլուսաւորս մեծամեծս. զի յա''։
Զարեգակն արար իշխանութիւն տունջեան.
զի յաւիտեան է ող''։
Զլուսին և զաստեղս իշխանական գի֊
շերոյ. զի յաւիտեան է ող''։
Եհար զերկիրն եգիպտացւոց անդրան֊
կօք իւրովք հանդերձ. զի''։
Եւ եհան զիէլ ՚ի միջոյ նոցա. զի յաւի''։
՚Ի ձեռն բարձր՝ և բազուկ հզօր. զի''։
Եհերձ զծովն մեծ , և բաժանեաց
յերկուս մասունս. զի յաւի''։
Եւ անցոյց զիէլ ընդ մէջ նորա. զի յա''։
Ընկղմեաց զփարաւոն և զզօրս իւր ՚ի
ծովն կարմիր. զի յաւի''։
Եւ եհան զժողովուրդ իւր յանապատ. զի''։
Եհար զազգս մեծամեծս. զի յաւի''։



Եւ

Եւ սպան զԹագաւորս հզօրս. զի յա՛:
Զսեհոն Թագաւոր ամուրհացւոց. զի՛:
Զովգ Թագաւոր բասանու. զի յա՛:
Եւ ետ զերկիր նց՟ ՚ի ժառանգութի՟. զի՛:
Ժառանգութիւն իսրայէլի ծառայի
իւրոյ. զի յաւէ՛:
Յիշեաց զմեզ տր՟ ՚ի խոնարհութեան
մերում. զի յա՛:
Եւ փրկեաց զմեզ ՚ի ձեռաց Թշնամեաց
մերոց. զի յաւէ՛:
Տայ կերակուր ամ՟ կենդանեաց.
զի յաւէ՛:
Խոստովան եղերուք այ՟ն երկնաւորի.
զի յաւէ՛:

Սաղմոս դաւթի. ՚ի ձեռն երեմիայի. անանուն
ձեբրայեցւոց: ՃԼԶ.

Առ գետս բաբելացւոց, անդ նստաք
և լայաք. ու՟ր յիշեցաք մեք անդ ըզ
սիոն:
՚Ի մէջ ուռեաց նց՟ կախեցաք զկտա_
կարանս մեր:
Անդ հարցանէին զերիչք մեր զբանս
օրհնութե՟. զերեվարք մեր առնելեին
զմեզ և ասէին.

Օրհնեցէք մեզ յօրհնութեանն Սիոնի .
իսկ զիարդ օրհնեսցուք զօրհնութիւնս
Տեառն յերկրի օտար ։
Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մո-
ռասցի զիս աջ իմ ։
Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, թէ ոչ յի-
շեցից զքեզ . թէ ոչ նախ նուադեցից
զքեզ Երուսաղէմ, ի սկիզբն ուրախութեան իմոյ ։
Յիշեա Տէր զորդիսն Եդովմայ՝ յա-
ւուրն Երուսաղէմի ։
Որք ասէին՝ քակեցէք քակեցէք, մին-
չեւ ի հիմն հասուցէք ։
Դուստր Բաբելացւոց թշուառական .
երանի որ հատուսցէ զհատուցումն քո ,
զոր դու մեզ հատուցեր ։
Երանի որ կալցի զմանկունս քո , եւ
եհար զքարի ։

Սաղմոս Դաւթի ։ ՃԼԷ ։

Խոստովան եղէց քեզ Տէր՝ բոլորով
սրտիւ իմով . առաջի հրեշտակաց սաղ-
մոս ասացից քեզ ։
Զի լուար զբանս բերանոյ իմոյ . եր-
կիր պագից ի տաճար սուրբ քո . եւ խոստո-
վան եղէց անուան քում, վասն ողորմութեան
եւ ճշմարտութեան քո ։

Մեծ արարեր յամի զանուն ս̃բ քո. յորում աւուր կարդամ առ քեզ, վաղ վաղակի լուր ինձ. և բազում արասցես զօրութիւն յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ա̃մ թագաւորք երկրի, զի լուան զբանս բերանոյ քո. և օրհնեսցեն զճանապարհս քո։

Մեծ են փառք տ̃ն. բարձր է տէր. զխոնարհս տեսանէ, և զբարձունս ՚ի հեռաստանէ ճանաչէ։

Թէ գնացից ես ՚ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս ՚ի բարկութենէ թշնամեացն։

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո. և տ̃ր հատուսցէ ընդ իմ։

Տ̃ր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Ի կ̃տրած. Սաղմոս Դաւթի։

ՃԼԸ

Տէր փորձեցեր զիս՝ և ծանեար զիս. դու ծանեար զնստել իմ, և զյառնել իմ։

Ի միտ առեր զխորհուրդս իմ ՚ի հե-



ռաս

ուսուցանէ. զշաւիղս իմ և զվիճակս իմ դու քննեցեր, և զա՟մ ճանապարհս իմ յառաջագոյն տեսեր. զի ոչ գոյ նենգ գութիւն ՚ի լեզուի իմում:

Ահա դու տ՟ր՝ ծանեար զյետինն իմ, և զառաջինն իմ. դու ստեղծեր զիս. և եդեր զձեռն քո ՚ի վ՟ր իմ:

Սքանչելի եղև գիտութիւն քո յինէն. զօրացաւ, և ոչ հանդարտեմ նմա:

Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ. կամ յերեսաց քոց ես յո՞ փախիցայց:

Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես. և թէ իջանեմ ՚ի դժոխս, և անդ մօտ ես:

Թէ առից զթևս իմ ընդ առաւօտս, և բնակեցայց յեզերս ծովու:

Սակայն և անդ ձեռն քո առաջնորդեսցէ ինձ, և աջ քո ընկալցի զիս:

Ասացի՝ խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս, կամ գիշեր փոխանակ լուսոյ փափկութեան իմոյ:

Խաւարն ՚ի քեզ ոչ խաւարեսցի. և գիշերն որպ՟ տիւ լուսաւոր եղիցի. և խաւար ն՟ր որպ՟ զլոյս ն՟ր:

Դու ստացար զերիկամունս իմ. և ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ:

Խոստովան եղէց քեզ Տր՝ զի ահեղ և
սքանչելի ես. սքանչելի են գործք քո,
և անձն իմ սիրեաց յոյժ։

Ոչ թագեաւ ոսկր իմ ՚ի քէն՝ զոր արա
րեր ՚ի ծածուկ. և կար զօրութեն իմոյ
ընդ ստորինս երկրի։

Զանգործս իմ տեսին աչք քո. և ՚ի
գիրս քո ամենեքեան գրեցան։

Ի տուէ մոլորեցան. և ոչ ոք էր որ ա
ռաջնորդէր նց։

Ինձ յոյժ մեծարու եղեն բարեկամք
քո ած. և յոյժ զօրացան իշխանք նց։

Թուեցի զնս՝ և քան զաւազ բազմեցան.
զարթեայ՝ և արդ ընդ քեզ եմ։

Թէ սպանանես զմեղաւորս՝ ած, արք
արեանց ՚ի բաց եղերուք յինէն։

Ի հակառակութե և ՚ի նախանձ, առցեն
՚ի նանիր զքաղաքս քո։

Զատելիս քո տր՝ ատեցի, և ՚ի վերայ
թշնամեաց քոց մաշեցայ։

Զատելութի կատարեալ ատեցի զնս,
և եղեն ինձ թշնամիք։

Փորձեա զիս ած՝ և ծանիր զսիրտ իմ,
քննեա զիս՝ և ծանիր զշաւիղս իմ. և
տես

տես թէ իցեն անօրէնութիւնք ի ճանա-
պարհս իմ. և առաջնորդեա ինձ ի ճա-
նապարհս քո յաւիտենից։

Ի կատարած. Սաղմոս Դաւթի։ ՃԼԹ.

Փրկեա՛ զիս տէր ի մարդոյ չարէ.
յառնէ անիրաւէ փրկեա զիս։
Որ խորհեցին զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց.
զօր ամ պատրաստեցան ի պատերազմ։
Սրեցին զլեզուս իւրեանց որպ զօձի. և
թոյնք իժից ի ներքոյ շրթանց նց։
Պահեա զիս տր ի ձեռաց մեղաւորի,
և ի մարդոյ չարէ փրկեա զիս։
Որ խորհեցան խափանել զգնացս իմ. թա-
քուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։
Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց.
շուրջ զշաւղօք իմովք եդին ինձ զգայ-
թակղութի.
Ասացի՛ տր ած իմ ես դու. ունկն դիր
տր ձայնի աղօթից իմոց։
Տր տր զօրութի փրկութե իմոյ. հովանի
գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։
Մի՛ մատներ զիս տր ի ցանկութե մեղա-
ւորաց, ոյք խորհեցան վս իմ. մի՛ ընդ-
վայր հարկաներ զիս։

Զի մի՛ երբէք բարձրասցին, և խոր-
հուրդք նցա մի՛ կատարեսցին. փախձան
կատարածի նցա՝ վաստակ շրթանց իւ-
րեանց ծածկեսցէ զնսա:

Արկցես ՚ի վր նցա զկայծակունս հրոյ,
և կործանեսցես զնսա. ՚ի տառապանաց
մի՛ կարասցեն կեալ:

Այր լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ՚ի
վերայ երկրի. զայր մեղաւոր՝ չարիք
իւր որսասցեն ՚ի կորուստ:

Ծանեայ, զի առնես Տր՝ դատաստան
աղքատի, և իրաւունս տնանկի:

Արդարք գոհասցին զանուանէ քում-
մէ. և բնակեսցին ուղիղք առաջի երե-
սաց քոց:

Սաղմոս Դաւթի: ՃԽ

Տէր կարդացի առ քեզ՝ և լուր ինձ.
նայեաց ՚ի ձայն աղօթից իմոց՝ ՚ի
կարդալ իմում առ քեզ:

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ
առաջի քո Տր. համբարձումն ձեռաց
իմոց՝ պատարագ երեկոյի:

Դիր Տր՝ պահապան բերանոյ իմոյ, և
դուռն ամուր շրթանց իմոց. զի մի՛ խո-
տորեսցի սիրտ իմ բանից չարութե.

Ի պատճառել զպատճառս մեղաց ընդ մարդս, որք գործեն զանօրէնութի. եւ ոչ եղէց կցորդ ընտրելոց նց։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութբ՝ եւ յանդիմանեսցէ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, այլ աղօթք իմ ՚ի կամս նր։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նց. լուիցեն բանից իմոց՝ եւ քաղցրասցին։

Ոպ թանձրութի հողոյ՝ զի սփռեալ է ՚ի վերայ երկրի. ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ՚ի դժոխս։

Առ քեզ տր տր են աչք իմ. ՚ի քեզ յուսացայ, մի՛ հաներ զհոգի յինէն։

Պահեա զիս յորոգայթէ՝ որ թագուցաւ ինձ, ՚ի գայթակղութէ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ՚ի ցանցս նր մեղաւորք, միայն եմ ես մինչեւ անցից։

Իմաստութի դաւթի. Աղօթք, ՚ի ժամանակին՝ որ էր նա յայրին անդ։ ՃԽԱ.

Ձայնիւ իմով ես առ տր կարդացի. ձայնիւ իմով զտր աղաչեցի։

Սփռեցից առաջի տն զաղօթս իմ. եւ զնեղութիս իմ առաջի նր պատմեցից։



Ի

’Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու տէր ծանեար զշաւիղս իմ. ’ի ճանապարհ յոր և գնայի, թաքուցին ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ. և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ տէր՝ և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա՛ տէր յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո՛ զիս ’ի հալածչաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս։

Տէր՝ հա՛ն ’ի բանտէ զանձն իմ. գոհանամ զանուանէ քումմէ։

Զքեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես։

Սաղմոս Դաւթի. ’ի ժամանակի՝ զի հալածէր զնա աբիսողոմ որդի նորա։



ԷՐ՝ լո՛ւր աղօթից իմոց. ո՛ւնկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։

Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ’ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։



Հա

Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ
արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս
ի խաւարի ոպ՟ մեռեալ յաւիտենից։
Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ
խռովեցաւ յիս։ Յիշեցի զաւուրսն
զառաջինս. խորհեցայ յա՟մ գործս քո.
յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և
համբարձի առ քեզ զձեռս իմ։
Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ
քեզ. վաղվաղակի լուր ինձ տ՟ր, զի
նուաղեցաւ յինէն հոգի իմ։
Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն.
նմանեցիմ այնոցիկ, որք իջանեն ի գուբ։
Լսելի՛ արա ինձ առաւօտու զողորմու
թիս քո. զի ես ի քեզ տ՟ր յուսացայ։
Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից.
զի առ քեզ տ՟ր համբարձի զանձն իմ։
Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց տ՟ր. զի
զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու
ես ա՟ծ իմ։ Հոգի քո բարի՝ առաջնոր
դեսցէ ինձ ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տ՟ր՝ կեցուսցես զիս.
արդարութե՟ քով հանցես ի նեղութէ՟
զանձն իմ։



Ողոր

Ողորմութ՟ քով սատակեսցես զթշնամիս
իմ. և կորո՛ զա՟մ նեղիչս անձին իմոյ.
զի ես ծառայ քո եմ։

Սաղմոս դաւթի առ գողիաթն։ ՃԽԳ

Օրհնեալ տ՟ր ա՟ծ իմ. որ ուսոյց զձեռս
իմ ՚ի պատերազմ, և զմատունս իմ
՚ի ճակատամարտ։

Ողորմութի՟ իմ և ապաւէն իմ, օգնական
իմ և փրկիչ իմ. ապաւէն իմ, և ես յու-
սամ ՚ի նա. ո՛ հնազանդ առնէ զժողո-
վուրդս ընդ ինև։

Տէր՝ ո՞վ է մարդ՝ զի յայտնեցար դո-
նմա. կամ որդի մարդոյ՝ թէ համարիս
ինչ զնա։

Մ՝արդ նանրոյ նմանեցաւ. և աւուրք
նր՟ ո՟պ հովանի անցին։

Տէր՝ խոնարհեցո՛ զերկինս և էջ. մեր
ձեա՛ ՚ի լերինս և ծխեսցին։

Փայլեա՛ զփայլատակունս քո, և խռովեա՛
զն՟ս. առաքեա՛ զնետս քո՝ և ցրուեա՛ զն՟ս։

Առաքեա՛ զձեռն քո ՚ի բարձանց, և
փրկեա՛ զիս ՚ի ջուրց բազմաց, և ՚ի ձե-
ռաց որդւոց օտարաց։

Որոց բերանք իւրեանց խօսեցան ըղ-
նան

նայնութիւն. և աջ նոցա աջ է մեղաց:

Աստուած՝ օրհնութիւն նոր օրհնեցից զքեզ. տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեզ:

Որ տայցէ զփրկութիւն թագաւորաց մերոց. որ փրկեցեր զԴաւիթ ծառայ իւր ՚ի սրոյ չարէ:

Փրկեա՛ զիս՝ և ապրեցո՛ զիս ՚ի ձեռաց որդւոց օտարաց:

Որոց բերանք իւրեանց խօսեցան ընդունայնութիւն. և աջ նոցա աջ է մեղաց:

Որոց ուստերք իւրեանց որպէս նորատունկ հաստատուն են ՚ի մանկութեան իւրեանց. դստերք նոցա զարդարել և պաճուճեալ ՚ի նմանութիւն տաճարի:

Շտեմարանք նոցա լի՛ են՝ և բղխեն ՚ի միմեանս. խաշինք նոցա բազմածինք են՝ և բազմանան ՚ի գնացս իւրեանց. և անդեայք նոցա պարարտք են:

Ո՛չ գոյ խրամատուածոյ ցանկոյ նոցա. և ո՛չ աղաղակ ՚ի հրապարակս նոցա:

Արդ՝ երանեցին ժողովրդեան՝ որոյ այս այսպէս է. նա երանի ժողովրդեան, որոյ տէր Աստուած է նոցա:

Բարձր առնեմ զքեզ ած իմ, և Թագաւոր իմ. և օրհնեմ զանուն քո յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից:

Զօրհանապազ օրհնեցից զքեզ. և գովեցից զանուն քո, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Մեծ է տր՝ և օրհնեալ է յոյժ. և մեծութեն նր ոչ գոյ չափ:

Ազգք և ազգք՝ գովեսցեն զգործս քո, և զզօրութիւնս քո պատմեսցեն:

Զմեծ վայելչութիւն փառաց սրբութե քո խօսեսցին. և զսքանչելիս քո պատմեսցեն:

Զզօրութի ահի քո ասասցեն. և զմեծութիւնս քո պատմեսցեն:

Զյիշատակ բազում քաղցրութե քո բղխեսցեն. և արդարութե քով ցնծասցեն:

Գթած ողորմած է տր, երկայնամիտ և բազում ողորմ:

Քաղցր է տր ամենեցուն, և գթութի նր ի վր ամ արարածոց իւրոց:

Խոստովան եղիցին առ քեզ տր՝ ամ գործք քո. և սուրբք քո օրհնեսցեն զքեզ:

Զփառս արքայութեն քո ասասցեն, և
զզօրութիւն քո պատմեսցեն։
Ծանուցել որդւոց մարդկան զզօրութիւն
քո. և զփառս մեծ վայելչութեան ար-
քայութե քո։
Արքայութի քո՝ արքայութի ամ յաւիտե-
նից. և տէրութի քո յազգէ մինչև յազգ։
Հաւատարիմ է տր յամ բանս իւր, և
արդար է յամ գործս իւր։
Հաստատէ տր զամ գայթակղեալս. և
կանգնէ զամ գլորեալս։
Աչք ամցուն ՚ի քեզ յուսան, և դու
տաս կերակուր նց ՚ի ժամու։
Բանաս զձեռն քո, և լցուցանես զամն
քաղցրութբ կամօք քովք։
Արդար է տր յամ ճանապարհս իւր.
և սբ է յամ գործս իւր։
Մերձ է տր առ ամենեսեան, որք կար-
դան առ նա. առ ամենեսեան՝ որք կար-
դան առ նա ճշմարտութբ։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տր.
աղօթից նց լսէ՝ և կեցուցանէ զնս։
Պահէ տր զամն որք սիրեն զնա. և
զամ մեղաւորս սատակէ տր։

Որ զգեցոյց զերկինս ամպովք. և պատ-
րաստ արար զանձրև իւր յերկիր:
Բուսոյց զխոտ ի լերինս. և դալարի
ի ծառայութի մարդկան:
Որ տայ անասնոց կերակուր. ձագուց
ագռաւուց. որք կարդան առ նա:
Ոչ եթէ ընդ զօրութիս ձիոյ կամեցաւ
տր, և ոչ ընդ երանս առն հաճոյ հա-
ճեցաւ:
Հաճեցաւ տէր ընդ երկիւղածս
իւր. և ընդ այնոսիկ՝ որք յուսան յո-
ղորմութի նր:
Ալէլուիա. անգէոս և զաքարիաս: ՃԽԷ.
Գովեա երուսաղէմ զտէր :
Եւ օրհնեա զած քո՝ սիոն :
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և
օրհնեաց զորդիս քո ի քեզ:
Որ եդ զսահմանս քո ի խաղաղութի.
պարարտութե ցորենոյ լցոյց զքեզ:
Որ առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ
ընթանան պատգամք նր:
Տնէ զձիւն ոպ զասր, և զմէգ ոպ
փոշի ցանեաց.
Արկանէ զսառն ոպ պատառս. առաջի
ցրտոյ նր ո՞ կարէ կալ:

Առաքէ զբան իւր՝ և հալէ զնս. շնչեսցէ հողմք՝ և գնասցեն ջուրք։

Պատմէ զբան իւր յակոբայ, զարդարութի և զիրաւունս իսրայէլի.

Ոչ այսպէս արար ամ ազգաց տր. և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նց։

Աղօթք Ամբակումայ Մարգարէին. Ամբա՛. գ.

Տ զլուր քո լուայ՝ և երկեայ. Տր՝ նայեցայ ՚ի գործս քո՝ և զարհուրեցայ։

՚Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու. ՚ի մերձենալ ամացն յայտնեսցիս, և ՚ի հասանել ժամանակին երևեսցիս։

՚Ի խռովել անձին իմոյ՝ ՚ի ժամանակի բարկութե, զողորմութի յիշեսցես։

Ած ՚ի հարաւոյ եկեսցէ, և սբն ՚ի փառան լեռնէ։

Յայտնեսցեն երկինք զպայծառութի փառաց նր. և օրհնութք նր լցան տիեզերք.

Ճառագայթք ուստ ՚ի լուսոյ հասանեն ՚ի նմանէ. և եղջիւրք ՚ի ձեռին նր դատան.

և անդ հաստատեցաւ զօրութիւն փա_
ռաց նր։
Յերեսաց նորա ելցեն հարուածք. և
զհետ շաւղաց նորա երթիցեն մեծա_
մեծք ՚ի թռչնոց։
Եկաց՝ և չափեաց զերկիր. հայեցաւ
և դիտեաց զհեթանոսս։
Լերինք հալեցին, և անտառք վատ_
նեցին. ճանապարհք որք ՚ի սկզբանէն
էին, կործանեցին. և ՚ի նմանէ դողացի
ամ երկիր։
Տեսի զվրանակս քուշացւոց. խռովե_
ցան բնակիչք վրանացն մադիամու։
Մի՞ թէ ՚ի վր գետոց բարկացիս դու
տր. կամ սրտմտութի քո ՚ի վր գետոց.
կամ բարկութի քո ՚ի վր ծովու։
Ելեր դու ՚ի կառս քո. հեծելութիւդ
քո՝ փրկութի եղև յելանելն քո։
Զարթեաւ աղեղն քո. զնետս կապար
ճից քոց արբուցեր, զգետս ցրուեցեր.
զերկիր դողացուցեր՝ ՚ի տեսութենէ
անձրևի, որք անցանէին ընդ սա։
Անդունդք աղաղակեցին մեծամեծս, լոյս
փայլման արեգականն արգելաւ, և ծա_
գման լուսնին դադարեցաւ։

Ո՛չ 'ի հնչոյս աղաւթից քոց դնասցես, և
ո՛չ 'ի լոյս փայլատակման սրոյ քոյ։
Բարկութե զարթիցես 'ի վր երկրի. և
դողութե կասցես զհեթանոսս։
Երևեցար 'ի փրկութի ժողովրդեան քո,
'ի փրկել զընտրեալս քո։
Նետաձիգ եղեր 'ի գլուխս մարդկան
ամբարտաւանից. մինչև յանդունդս
ծովու ընկղմեցան։
Խնդրեցեր զվրէժ զօրութե քում՝ 'ի
զօրագլխացն մեղաւորաց, որք յուսա֊
ցեալ էին յանդգնութիս իւրեանց. զի
կերին զաղքատն 'ի գաղտնիս։
Առաքեցեր 'ի վր ծովու զերիվարս քո.
և խռովեցան յաղթ ջուրք անդնդոց։
Կացի ես՝ և դելան աղիք իմ 'ի ձայնէ
բերանոյ իմոյ. եմուտ դողումն յոսկերս
իմ, և ես յանձն իմ խռովեցայ։
Զոյս պահեսցես յաւուր նեղութե.
ածել 'ի վր ազգի իմի, որք մարտնչին
ընդ ժողովրդեան քում։
Թզենիք ոչ տացէ զպտուղ իւր, և յայգ֊
ւոջ բեր մի՛ գտցի. ձիթենիք սնասցին,
և երկիր մի՛ բուսուսցէ զդալարի։

* Երգ աստիճանաց։ (Դաւթի)

Ի խորոց կարդացի առ քեզ տ՟ր տ՟ր՝
լուր ձայնի իմում։
Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն
աղօթից իմոց։
Թէ զանօրէնութիւնս իմ քննես
տ՟ր տ՟ր. իսկ ո՞ կարէ կալ առաջի քո
զի ՚ի քէն է քաւութիւն։
Վասն անուան քո համբերի տ՟ր.
համբեր անձն իմ բանի քում.
յուսացաւ անձն իմ ՚ի տ՟ր։
Ի պահէ առաւօտու մինչև յերե
կոյ. ՚ի պահէ առաւօտու յուսա֊
ցաւ իսրայէլ ՚ի տ՟ր։
Ի տ՟նէ՛ է ողորմութիւն բազում.
՚ի նմանէ՛ է փրկութ՟ի. և նա փրկեսցէ
զիսրայէլ յա՟մ նեղութ՟եց նորա։

* Երգ աստիճանաց։ ՃԼԱ

Տ՟Ր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ.
և ո՛չ զբօսան աչք իմ։
Ո՛չ գնացի ես ընդ մեծամեծս.
և ո՛չ ընդ այնոսիկ որք սքանչելի
եղեն քան զիս։

Նայց թէ խոնարհեցայ եւ ոչ մա
նուկ սարտուցեալ ՚ի ստենէ մօր
իւրոյ. եւ դարձնել անդրէն ՚ի նոյն.
Այլ թէ հպարտացուցի արդեօք
զանձն իմ, այսպէս եղիցի հատու
ցումն անձին իմոյ. յուսասցէ իս
րայէլ ՚ի տէր՝ յայսմհետէ մինչեւ
յաւիտեան.

* Օրհնութիւն երգ աստիճանաց։
(ՃԼԱ)

Յիշեա տէր զդաւիթ. եւ զամենայն
հեզութիւն նորա։
Որպէս երդուաւ տեառն, եւ
ուխտս եդ Աստուծոյ յակոբայ։
Թէ ոչ մտից ՚ի յարկս տան իմոյ.
Թէ ելից յանկողինս մահճաց իմոց
Թէ տաց քուն աչաց իմոց. կամ
նինջ արտեւանաց իմոց. կամ հան
գիստ իրանաց իմոց. մինչեւ գտից
զտեղի յարկի տեառն Աստուծոյ յակոբայ։
Ահա լուաք զնմանէ յեփրաթայ.
եւ գտաք զնա ՚ի դաշտս մայրեաց։
Մտցուք ՚ի յարկս նորա երկիրպագցուք


՚ի

Պակասեսցին հօտք 'ի ճարակաց. և ե֊
զինք մի' գուցին առ մսուրս։

Ես 'ի տր յուսացայ. ցնծացայց և ու֊
րախ եղէց յած փրկիչ իմ։

Տր տր եա յինձ զօրութի, և կացոյց զոտս
իմ 'ի հաստատութե. 'ի վր պարսպանոցի
թշնամւոյն կացոյց զիս, և հանգոյց զիս
երգս երգն։

Փառք հօր և որդ։

---

Սաղմոսն։

Լ[illegible] տր ըստ մեղ, տծացէն ողորմութէ և գը֊
[illegible] Սաղմոս։

Օ[illegible] և [illegible], 'ի վերայ Ս[illegible]
նէն գտցես 'ի 157. երեսն։

Ս[illegible]. անգէտ և [illegible].

ՃԽԸ

Օրհնեցէք զտր յերկնից. օրհնե֊
ցէք զնա 'ի բարձունս.

Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նր. օրհ
նեցէք զնա ամ զօրութիք նր։

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին.



օրհ

օրհնեցէ՛ք զնա ամ աստեղք և լոյս։
Օրհնեցէ՛ք զնա երկինք երկնից. և ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս, օրհնեցէ՛ք զանուն տն։
Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝ և հաստատեցան։
Կացոյց զնս յաւիտեանս յաւիտենից. սահման եդ՝ և ոչ անցանեն։
Օրհնեցէ՛ք զտէր յերկրէ՝ վիշապք և ամ խորք։
Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկ, որք առնեն զբան նր։
Լերինք՝ և ամ բարձունք՝ ծառք պտու-ղաբերք՝ և ամ մայրք։
Գազանք՝ և ամ անասունք. սողունք, և ամ թռչունք թևաւորք։
Թագաւորք երկրի և զօրք իւրեանց. իշխանք և ամ դատաւորք երկրի։
Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք՝ օրհնեցէ՛ք զանուն տն։
Բարձրացաւ անուն նր միայն. խոստո-վանութի նմա յերկինս և յերկրի։
Բարձր առնէ տր զեղջիւր ժողովր-դեան իւրոյ. օրհնութիւն նմա յամ



սրբ

սրբոց նր. յորդւոյն իէլի ժողովրդեան որ
մերձ է առ տր։

Ալէլուիա. անգէաց եւ շարականաց։ Ձ. Ւսէ

Օրհնեցէք զտր յօրհնութի ՚ի նոր. օրհ
նութի նմա յեկեղեցիս սբց։
Ուրախասցի իէլ յարարիչ իւր. որդիք
սիօնի ցնծասցեն ՚ի թգւորն իւրեանց։
Զ անուն նորին օրհնելով սաղմոսիցէք
եւ օրհնութբ՝ սաղմոս երգեսցեն նմա։
Հաճի տր ընդ ժողովուրդ իւր սբ. եւ
բարձր առնէ զհեզս ՚ի փրկութն։
Պարծեսցին սբքն փառօք, եւ ցնծաս
ցեն ՚ի հանգիստ իւրեանց. եւ բարձր
արասցեն զած բերանօք իւրեանց։
Սուր երկսայրի եա ՚ի ձեռս նց, առ
նուլ զհատուցումն ՚ի հեթանոսաց, ՚ի
յանդիմանութի ամ ժողովրդոց։
՚Ի կապել զթգւորս նց կապանօք. զգօ
րաւորս նց ձեռնակապօք երկաթեօք։
Առնել նց դատաստան ըստ գրոց. եւ
փառք այս են ամ սրբոց նր։

Ալէլուիա. անգէաց եւ շարականաց։ Ձ Ը

Օրհնեցէք զած ՚ի սրբութե նր. օրհնե


ցէք

յեցէք զնա ՚ի հաստատութեան ՚ի զօրութեան իւր։

Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան իւր. օրհնե-ցէք զնա ՚ի բազում մեծութեան իւր։

Օրհ՛՛ զնա ՚ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութեամբ։

Օրհնեցէք զնա ցնծութեամբ. գովեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղցր. գովե-ցէք զնա ՚ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհութեան. ամ հոգիք օրհնեցէք զՏէր։

Ա-Ը Կանոն՝ 56 Կուաքղայ է։
150 Փոխ է. և 2460 Տուն է։

******************

Հայս Սաղմոս ինքնագիր Դաւթի՝ է արտաքոյ թուոյ. ՚ի ժամանակի՝ յէ եղ նա նահատակ ընդ դէմ Գողիաթու, յաղթեաց տասն հազարաց, և ամ զօրացն խորտակեաց։

Փոքր էի ես յեղբարս իմ և կրտսեր ՚ի տան հօր իմոյ. արածէի զխաշինս հօր իմոյ։

Ձեռք իմ արարին զսաղմոսարան, և մատունք իմ կազմեցին զգործի օրհ-նութեան։

Իսկ արդ՝ ո՞ պատմեսցէ զայս տեառն իմում. ինքնին տ̃ր ա̃մի լուիցէ զա̃մ։

Նա առաքեաց տէր զհրեշտակ իւր. և համբարձ զիս 'ի հօտէ խաշանց հօր ի-մոյ. և եօծ զիս յօծութեան իւղոյ իւրոյ.

Եղբարք իմ մեծամեծք և գեղեցիկք. և ոչ հաճեցաւ ընդ նո̃ տ̃ր։

Ելի ես ընդ դէմ այլազգւոյն, և նզո-վեցի զկուռս ն̃ր. հանի զսուսերն 'ի նմանէ, և հատի զգլուխ նորին. և բարձի զնախատինս յորդւոցն իսրայէլի։

## Օրհնութիւն Երից Մանկանցն. Դան. Գ.

Օրհնեալ ես Տր Ած հարցն մե-
րոց. օրհնեալ փառաւորեալ
անուն քո յաւիտեանս։
Յիրաւունս ածուցեր զայս ամ ը մեզ. ար-
դար ես դու Տր, և ամ գործք քո ճշմարիտ են։
Ճանապարհք քո ուղիղ են, և ամ դատաս-
տանք քո արդար են։
Դատաստան արդարութե ածեր ՚ի վր մեր. ըստ ամի զոր ինչ ածեր ՚ի վր մեր, և քաղաքի սբյ հարցն մերոց Եղմի։
Արդարութբ և յիրաւի ածեր զայս ամ ՚ի վր մեր՝ վս մեղաց մերոց։
Անօրինեցաք՝ և յանցեաք ապստամբք լինել ՚ի քէն. մեղաք յամի՝ և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։
Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպ պատուիրեցեր դու մեզ զի բարիս գտցուք մեք ՚ի քէն։
Արդ՝ զամ զոր արարեր և զոր ինչ ածեր ՚ի վր մեր, արդար դատաստանաւ արարեր։
Մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնամեաց մերոց. անօրինաց՝ խստաց և ապստամբողաց։
Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի քան զամ երկիր, մատնեցեր զմեզ։

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս
մեր. զի յամօթ և նախատինք եղաք ծառայ
ից քոց պաշտօնէից։

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ՝ վն անուան
քո. մի՛ ցրեր զուխտս քո. և մի՛ 'ի բացեայ
առներ զողորմութիս քո 'ի մէնջ։

Վն աբրահամու սիրելոյ քո, իսահակայ
ծառայի քո, և իսրայելի սրբոյ քո։

Խոստացար նոցա՝ և ասացեր, բազմացուցից
զզաւակ ձեր որպէս զաստեղս երկնից բազմութբ.
և որպէս զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ տէր՝ նուազեցաք մեք քան զամ
ազգս. և եմք տառապեալք յամ երկրի այսօր
վն մեղաց մերոց։

Ոչ գոյ 'ի ժամանակի յայսմիկ՝ իշխան մար
գարէ և առաջնորդ. ոչ ողջակէզ պատարա
գաց, ոչ խունկ օրինաց, և ոչ տեղի պատա
րագս մատուցանել առաջի քո. և զողորմութի
գտանել 'ի քէն։

Այլ անձամբ խոնարհեալ՝ և հոգւով տառա
պանաց, ընդունելի լիցուք մեք որպէս զողջա
կէզս խոյոց և զուարակաց, և որպէս զբիւրա
ւորս գառանց պարարտաց։

Այնպէս ընդունելի լիցին պատարագք մեր
այսօր առաջի քո. զի կատարել գտցուք զկնի
քո. և չիք ամօթ յուսացելոց 'ի քեզ։

Եւ արդ՝ գամք զհետ քո ամ սրտիւք մե
րովք, երկնչիմք 'ի քէն և խնդրեմք զերեսս


քո

քո• Տ͞ր՝ մի՛ յամօթ առներ զմեզ•
Այլ արա ընդ մեզ ըստ հեզութեան քում, և ըստ բազում ողորմութեան քում• փրկեա զմեզ վ͞ս սքանչելեաց քոց Տ͞ր• և փառաւորեսցի անուն քո յաւիտեան•
Յամօթ լիցին ամենեքեան, որք չարչարեն ըզ ծառայս քո• ամաչեցեալ լիցին բռնութիւնք ն͞ց, և ա͞մ զօրութիւնք ն͞ց խորտակեսցին•
Եւ ծանիցեն՝ զի դու ես Տ͞ր ա͞ծ միայն, որ փառաւորեալդ ես ՚ի վ͞ր ա͞մ տիեզերաց•
Օրհնեալ ես դու Տ͞ր ա͞ծ հարցն մերոց• գովեալ՝ և առաւել բարձրացեալ անուն քո յաւիտեան•
Եւ օրհնեալ է անուն ս͞ր փառաց քոց• գովեալ և առաւել՚՚•
Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սրբութեան քո• գովեալ և առա՚՚•
Օրհնեալ ես ՚ի վերայ աթոռոյ արքայութեան քո• գովեալ և առա՚՚•
Օրհնեալ ես որ նայիս ՚ի քրովբէս՝ և հայիս յանդունդս• գովեալ և առա՚՚•
Օրհնեալ ես ՚ի վ͞ր հաստատութեան երկնից• գովեալ և առա՚՚•
Օրհնեցէք ա͞մ գործք Տ͞ն զՏ͞ր• օրհնեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան•
Օրհնեցէք երկինք զՏ͞ր• օրհնեցէք և բար՚՚•
Օրհնեցէք հրեշտակք Տ͞ն, և ջուրք որ ՚ի վերոյ երկնից զՏ͞ր• օրհ՚՚•



Օրհ

Օրհնեցէք զօրութիւնք տն, ամենայն
ամն զՏր · օրհ"։

Օրհնեցէք աստեղք երկնից, անձրեւք և ցօղք զՏր · օրհ"։

Օրհնեցէք ամ հողմք հուր և ջեր զՏր"։

Օրհնեցէք ցուրտ և տօթ, ցօղ և ձիւնաբեր զՏր · օրհ"։

Օրհնեցէք սառն և պարզ, եղեամն և ձիւն զՏր · օրհ"։

Օրհնեցէք տիւք և գիշերք, լոյս և խաւար զՏր · օրհ"։

Օրհնեցէք ամպք և փայլատակունք՝ և երկիր զՏր · օրհ"։

Օրհնեցէք լերինք՝ բլուրք՝ և ամ բոյսք երկրի զՏր · օրհ"։

Օրհնեցէք աղբիւրք՝ ծովք՝ և գետք զ"։

Օրհնեցէք կէտք և ամ կայտառք, որ 'ի ջուրս, և թռչունք երկնից զ"։

Օրհնեցէք գազանք և անասունք, և որդիք մարդկան զՏր · օրհ"։

Օրհնեսցէ Իսրայէլ զՏր · օրհնեսցէ և"։

Օրհնեցէք քահանայք զՏր · օրհ"։

Օրհնեցէք ծառայք տն զՏր · օրհ"։

Օրհնեցէք անձինք, և շունչք արդարոց զ"։

Օրհնեցէք սուրբք՝ և խոնարհք սրտիւք զ"։

Օրհնեցէք Անանիա՝ Ազարիա՝ և Միսայէլ զՏր · օրհ"։

Օրհնութի Մարիամու ածածնի
Գ ձայն. տ.

Մեծացուսցէ անձն իմ զտր. և ցն
ծասցէ հոգի իմ աստուածով փրկ
չաւ իմով.
Ուշ արար'ի վր խոնարհութե աղախնոյ իւրոյ
այսուհետև երանեսցեն ինձ ամ ազգք.
Որ արար ընդ իս մեծամեծս հզօրն. և սբ է ա
նուն նր.
Ողորմութի արար յազգս յազգս երկիւղածաց
իւրոց. և արար զօրութի բազկաւ իւրով.
Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից.
և քակեաց զհզօրս յաթոռոց.
Օ խոնարհս բարձրացոյց, զկարօտս ելից բա
րեօք. և զմեծատունս արձակեաց ունայնս.
Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ, յի
շել զողորմութի իւր.
Որպ խօսեցաւ առ հարսն մեր, ընդ աբրահա
մու, և զաւակի նր յաւիտեան.
Օրհնութի զաքարիայ՝ հօրն Յօհաննու Մկրտչի.
Գ ձայն. տ.
Օրհնեալ տր ած իէլի, որ յայց ել. և արար
փրկութի ժողովրդեան իւրոյ.
Յարոյց մեզ զեղջիւր փրկութե 'ի տանէ դաւ
թի ծառայի իւրոյ. որպ խօսեցաւ բերանով
սրբոցն՝ որք յաւիտենից մարգարէքն էին.
փրկութի 'ի թշնամեաց մերոց, և'ի ձեռաց
Ի ամ ատելեաց մերոց.

Զի՞մ արժանի հայիլ՝ և տեսանել զբարձ-րութիւն երկնից, 'ի բազմութենէ անօրէնութե-անց իմոյ. ամէ՛՛։

Կորացեալ եմ ես 'ի բռնութենէ կապանաց երկա-թից. և ոչ գոյ ինձ հանգիստ. տ՛՛։

Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի քո արարի. կանգնեցի պատկեր՝ և բազմացուցի զղջասումն անձին իմոյ. ամէ՛՛։

Եւ արդ տէր՝ խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ, և հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամենակալ՛՛։

Մեղայ՝ տր մեղայ, և զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամենա՛՛։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թող ինձ տր, թող ինձ. և մի՛ կորուսաներ զիս ընդ անօրէ-նութեան իմոյ. ամենա՛՛։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տր, և մի՛ յի-շեր զչարիսն իմ. և մի՛ պարտաւորեր զիս ը-իջեալսն 'ի ներքոյ երկրի չարեօք. տ՛՛։

Զի դու ած՝ ած ապաշխարողաց ես. և յիս ցոյց զբարերարութիւնդ քո, որ անարժան եմ. ամենակալ՛՛։

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան քում. և ես օրհնեցից զքեզ զամ աւուրս կենաց իմոց. ամենա՛՛։

Զքեզ տր օրհնեն ամ զօրութիւնք երկնից. և քո են փառք յաւիտեանս՝ ամէն։

Փառք հօր, և որդ՛՛։ Յժմ և միշտ և՛՛։



Աղա

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տէր, Թող ինձ զմեղս իմ։

Կազուամ ողորմ տր, ողորմեա ինձ։

Տր՛ քաւեա զիս զմեղաւորս 'ի մեղաց, և կեցո։

Տր՛ գթա յիս 'ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա ինձ բազմամեղիս։

Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս Ածածին մարիամ. բարեխօսեա առ տր վն մեր։

Ամենայն սրբք այ՝ բարեխօսեցէք առ հայր 'ի յերկինս վն մեր մեղաւորացս։

Քս որդի այ անոխակալ. ընկալ զաղաչանս մեր. զի 'ի քեզ են ապաւինեալ անձինք մեր։

Յաղթօղ զօրութբ՝ որ և կենդանարար և պատուական խաչի քո տէր՝ պահպանեա զմեզ։

Առաքեա տր զհրեշտակ խաղաղութե քո. որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի։

Եւ մարդասիրութբ քով յիշեա զմեզ տր՝ յիշեա զմեզ, յորժամ գաս արքայութբ քով, և ողորմեա մեզ։

Նախադրութիւն խրատական՝ յաղագս աղօթիցն, զոր արարեալ է Տեառն Ներսէսի Շնորհալւոյն Պուրէ գօրէ՝ Հայոց Կաթողիկոսէ:

Աղօթք հաւատարմաց քրիստոնէից մեծաց և փոքունց, զոր պարտին ուսանիլ ամենայն՝ և ուսուցանել զմիմեանս. Քահանայք զժողովուրդս. հարք զորդիս. մարք զդստերս. և ընկեր զընկերն իւր: Եւ աղօթեսցեն սովոր յաւուրն՝ հինգ անգամ, երկոտասան ծնրադրութբ ՚ի ժամուն. այս՝ յառաւօտուն, ՚ի ճաշուն, ՚ի հասարակ աւուրն, յերեկոյին, և՚ի հանգստեան: Ապա թէ՝ պղերգ ոք լինիցի և ծուլանայցէ զհինգ ժամ աղօթս կատարել, աղօթեսցէ չորս անգամ. կամ երեք անգամ. կամ երկու անգամ. կամ մի անգամ յաւուրն: Որ միայն ճանաչիցի թէ՝ քրիստոնեայ է, և զինքն ծանիցէ թէ՝ արարած եմ այ՝ և երկրպագու նր: Եւ թէ՝ զամ բանս աղօթիցս հեղգայ ուսանիլ. (որ և զաշխարհական երգս բազում՝ փութով ուսանի) ուսցի զչես մի. կմ այլ նուազ: Ոչ թէ տունս երկս ուսանիցի ՚ի սմանէ, և աղօթեսցէ երկս ծնրադրութբ ՚ի ժամուն, ընդունելի է առաջի այ: Եւ որ անփոյթ առնէ զսա յուսանելոյ և յաղօթելոյ, յանդիմանեսցի և՚ի մոլար ժողովոյն այլազգեաց: Որք զաղօթսն՝ զոր ուսոյց նա, ՚ի պատերազ

մունս

մուտս անգամ ոչ խափանեն, թող թէ ՚ի խա
ղաղութեան. Իսկ մեր ժողովուրդք՝ արտաքոյ
աղօթից տեղւոյ, ընաւ ոչ յիշեն զանուանն Աստուծոյ·
զի ոչ ունին փոյթ ՚ի կարգս աղօթից՝ որպէս
զաստուածպաշտաց, այլ սիրեն զդատարկաբանութիւն՝
քան զաղօթս. Ամենք են՝ թէպէտ գան առ ՚ի
աղօթել յեկեղեցւոջ, սակայն՝ անդ ևս, կամ
փակել բերանով կանգնին, կամ զրուցատրութիւնս
առնեն ընդ միմեանս. Ոչ է ոչ ինքեանք գիտեն
բանս աղօթից, և ոչ՝ քահանայիցն միտ դնեն
սաղմոսաց և պաշտամանց. Վասն այսր պատճա
ռի արարաք զաղօթս զայս՝ պարզ և յստակ
բառիւ. վասն տխմարաց դիւրահաս լինելոյ.
Որ է սակաւ ինչ բանից՝ տունս քսան և չորս,
ըստ ժամուց տուընջեան և գիշերոյ. և ըստ
տառից նբց մրցերգիցն, և զօրաւոր իմաստից.
Ոչ է զժողովագոյն պէտս խնդրուածոց մե-
րոց՝ որ յԱյ, ունի յինքեան. Նաև տուաք ժո-
ղովրդեան մերում յուսումն. զի ամենայն անձն
քրիստոնէի ուսցի զսա. և ուր հանդիպես
ցին ՚ի ժամ աղօթիցն, խօսեսցին սովաւ ընդ Աստուծոյ,
Թէ յեկեղեցի, թէ ՚ի տան, թէ յանդի, թէ
՚ի գործ ինչ, թէ ՚ի ճանապարհի. Նաև որք ուսա
նին զսա, և աղօթեսցեն մտադրութեամբ՝ ջերմե-
ռանդ սրտիւ և արտասուօք, ամենայն խնդրուածք՝
որ գրեալ են ՚ի սմա, կատարեսցին ՚ի կենդանութեան,
և յետ մահուն. Իսկ՝ որք արհամարհեն և ոչ
ուսանին և ոչ աղօթեսցեն, ինքեանք տեսցեն

զմնասս տնձանց ի…
մէնջ զպատճառն, …
զի մի՛ այլ և ս պատա…
բանս աղօթից, վն այ…
Բայց՝ ծանիցեն այնպի…
այնչափ ջանայ զայլ բարեգործութիս …
փանել, որչափ զաղօթս. զի գիտէ որ յաղօ
թիցն միայն՝ ինքն հալածի 'ի մէնջ, և ած բնա
կի 'ի մեզ: Արդ՝ մեք աղաչեսցուք զբարե_
րարն ած, բանալ զաչս մտաց մերոց. յօժա_
րութե ուսանիլ զսա և աղօթել, և այ սիրելի
լինիլ:

Եւ յաղօթելն, զԳրիգորիս կաթուղիկոս
հայոց, և զեղբայրն նորին զՆերսէս՝ զաղօ
թիցս յօրինօղն, յիշեսջիք 'ի քս: Եւ որք ըն
օրինակէք 'ի գիրս զաղօթս, գրեսջիք և զխորա
տական բանս զայսոսիկ: Եւ որք գրեն զսա,
գրեսցին 'ի դպրութն կենացն յաւիտենից: Եւ
որք ուսցին և աղօթեսցեն, ողորմութն ընկալցին
'ի քէ. և որք ուսուցանիցեն զընկերս, վարձս
առցեն յայ: Եւ որք գրեսցեն, մի՛ առաւել քան
զօրինակս՝ բան կամ գիր խառնեսցեն. և մի՛
նուազ գրեսցեն. զի մի՛ այլ և այլ լինիցին բան
քըն, այլ հաւասար լիցին ամէքն՝ ուր և գրեսցին:
Եւ տխմարքն 'ի գիրս, ուղիղ գրողացն տա_
ցեն գիրն. և քի փառք յաւիտեանս.
ամէն:

…ճառ ասացելոյ 'ի սբն
…ն Ներսէսի Հայոց
…ղիկոսի։

…ստովանիմ՝ եւ երկիրպա
գանեմ քեզ, Հայր եւ Որդի եւ Սբ
Հոգի. անեղ եւ անմահ բնութի. արա
րիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամ
եղելոց. եւ ողորմեա քո արարածոց, եւ ինձ
բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ՝ եւ երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միասնական Սբ երրորդութի եւ մի Աստուածութի, արարիչ լուսոյ՝ եւ հալածիչ խաւարի. հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց՝ եւ անգիտութե. եւ լուսաւորեա զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ 'ի հաճոյս, եւ ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. եւ ողորմեա քո արա՛։

Հայր երկնաւոր Ած ճշմարիտ, որ առաքեցեր զորդի քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա քո արա՛։

Որդի Այ Ած ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ՝ եւ առեր մարմին 'ի սբոյ կուսէն Մարիամայ վս մերոյ փրկութե. խաչեցար՝ թաղեցար եւ յարեար 'ի մեռելոց, եւ համ֊

բարձար փառօք առ Հայր. մեղայ յերկինս և
առաջի քո. յիշեա զիս ոպ̃ զաւազակն յոր–
ժամ գաս արքայութ̃ քով և ողոր՛:
Հոգի՛ այ ած̃ ճշմարիտ, որ իջեր ՚ի յորդա–
նան և ՚ի վերնատունն, և լուսաւորեցեր զե–
մկրտութ̃ ու̃ առաքեալսն. մեղայ յերկինս և
առաջի քո. մաքրեա զիս վերստին ած̃ային
հրով քով ոպ̃ հրեղէն լեզուօք ու̃ զառա–
քեալսն, և ողոր՛:
Ո՜ւնեղ բնութի, մեղայ քեզ մտօք իմովք, հո–
գւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ
զառաջինս՝ վն անուան քում՛ սբ̃յ. և՛:
Պետօղ ամի, մեղայ քեզ խորհրդով բանիւ
և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց
իմոց և գրեա զանուն իմ ՚ի դպրութե կենաց.
և ողորմեա:
... ստանեաց. մեղայ քեզ ի

ոչ գտանել ՚ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա՛ զշարժութիւնս սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա:

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում. և ողորմեա:

Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն բարիս խորհել՝ և խօսել՝ և գործել առաջի քո յամենայն ժամ. ՚ի չար խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա:

Կամեցող բարեաց Տէր կամարար, մի՛ թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնոր... լինել միշտ ըստ կամաց քոց բարե-սիրաց. և ողորմեա:

գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել. զի
մի՛ երբէք սասանեցայց. և ո″։

Տ՟ր իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զա՟մ
արարածս ողորմութ՟բ քով. քեզ յանձն ա֊
նեմ զանձն իմ. դո՛ւ հոգա և պատրաստեա
զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ յայսմհետէ
մինչև յաւիտեան. և ողոր″։

Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ զիս 'ի չար սո֊
վորութենէ իմմէ 'ի բարի սովորութի. և բևեռեա
'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ
գեհենին, և զսէր արքայութեան. զի զղջացայց
'ի մեղաց՝ և գործեցից զարդարութի. և″։

Աղբիւր անմահութե, աղբերացո 'ի սրտէ իմ
զարտասուս ապաշխարութե՝ որպէս պոռնկին.
զի լուացից զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան
զելանելն իմ յաշխարհէս. և ո″։

Պարգևիչ ողորմութե, պարգևեա ինձ ուղղա֊
փառ հաւատով և բարի գործով. և ս͞բ մարմնոյ
և արեան քո հաղորդութ͞բն գալ առ քեզ. և″։

Բարերար տ͞ր, հր͞շտակի բարւոյ յանձն ա֊
րասցես զիս՝ քաղցրութ͞բ աւանդել զհոգի իմ,
և անխռով անցուցանել ընդ չարութի այսոցն՝
որք են 'ի ներքոյ երկնից. և ողոր″։

Լոյս ճշմարիտ ք͞ս, արժանաւորեա զհոգի
իմ ուրախութ͞բ տեսանել զլոյս փառաց քոց
'ի կոչման աւուրն, և հանգչիլ յուսով բա֊
րեաց յօթևանս արդարոց՝ մինչև յօր մեծի
գալստեան քո. և″։



Դա

Պատուեր տուր, յորժամ գաս փառօք
հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս՛ մա
ներ 'ի դատաստան ընդ ծառայի քում. այլ
փրկեա՛ զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսել
տուր ինձ զերանաւէտ կոչումն արդարոց՝ յերկ
նից արքայութիդ. և ո՛՛.

Ամենողորմ տէր, ողորմեա՛ ամ հաւատացելոց
'ի քեզ, իմոց և օտարաց՝ ծանօթից և անծա
նօթից՝ կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և
թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ
ատ իս յանցանաց. և դարձո՛ զնս 'ի չարեացն,
զոր ունին ընդ իմ. զի ողորմութեան քում արժա
նի եղիցին. և ո՛՛.

Փառաւորեա՛լ տէր, ընկալ զաղաչանս ծառայիս
քո, և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ.
բարեխօսութե սրբուհւոյ ածածնին, և յօհան
նու մկրտչին, և սբյն ստեփաննոսի նախավկա
յին, և սբյն գրիգորի մերոյ լուսաւորչին.
Եւ սբց առաքելոց՝ մարգարէից՝ վարդապե
տաց՝ մարտիրոսաց՝ հայրապետաց՝ ճգնաւո
րաց՝ կուսանաց՝ միանձանց՝ և ամ սբց քոց,
երկնաւորաց և երկրաւորաց. Եւ քեզ փառք
և երկրպագութի՝ անբաժանելի սբ երրորդու
թեդ՝ յաւիտեանս յաւիտենից.

Ամէն.

## Աղաչանք պահպանութե՝ ընդդէմ արհաւրաց գիշերայնոց. Սբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ. ԾԷ.

Ընկա՛լ քաղցրութե՝ տէր ամ հզօր, զդառնացողիս զաղաչանս. մատո՛ գթութե՝ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամենազօրդ, զամօթալից տըխրութիս. բա՛րձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիս. անջրպետեա՛ հնարաւոր, զմահացու կրթութիս. տապալեա՛ մեծդ յաղթող, զխաբողին հանճարութիս. բացադրեա՛ վերնայինդ, զմոլեգին մառախուղ. հերքեա՛ կեցուցիչ, զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛ ծածկատես, զըմբռնողին չար գամունս. խորտակեա՛ անքննին, զմարտողին դիմեցմունս: Նշանագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճարկիս. գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս. կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս. ամրացո՛ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի. մաքրեսցես 'ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս. պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն հոգւոյս. անխափ գամս արասցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ՝ զպար զօրու երկնայնոց. կարգեսցես 'ի դիմի՝ ընդդէմ դիւացն դասու: Տուր հանգիստ բերկրութե մահահանգոյնս նիրհմանս 'ի խորութե գիշերիս

բիս, բարեխօսութբ հայցուածոց մերոյ ածած-
նիդ` և ամ ընտրելոց: Միփոփել պարուրեա
զպատուհան տեսութեց` զգայարանացս իմաս-
տից` անզարհուրելի զետեղմամբ` 'ի ծփա-
կան խռովութեց, կենցաղական զբաղմանց,
անրջական երազոց, խոլականաց ցնորից, յե-
ղտակաւ քո յուսոյդ` անձկասելի պաշտպա-
նեալ: Նու սթափեալ վերստին 'ի ննջմանէ
ծանրութե` ամենազգաստ արթնութբ, հոգևո-
րոդ զուարթութբ 'ի քեզ արձանացեալ, զպայ-
ձայն մաղթանաց` բուրմամբ հաւատոց քեզ`
ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից,
փառաբանողաց երկնագումար խմբից եր-
գակցեալ` յերկինս առաքել: Ով է դու փա-
ռաւորեալ ես յամ արարածոց յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Աղօթք շարական` Նորին Սրբոյն Պետրոսի: ԺԷ:



յաւիտենական, բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք 'ի մահու, և լոյս 'ի խաւարի, յոյս ակնունողաց, և երկայնմտութի տարակուսելոց: Որ ամենարուեստ իմաստութբ քո` դարձուցանես յայգ զստուերս մահու, անմուտ ծագումն և անմուտ արեգակն, քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէ-



րու

րութեն քո՝ խաւար գիշերոյ։ Արուսեակ երկնի
ծունր երկրպագութեան ամենեցուն՝ երկնաւո-
րաց և երկրաւորաց, և սանդարամետականաց։
Որ լսես զձայն կարդացելոց, և հայցես յաղօթս
խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա։
Ած իմ և թագաւոր իմ. կեանք իմ և ապա-
ւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ. յս քս
ած-դ ամենի։ Տէրդ՝ հանգուցել ի հոգիս մեզ,
մխիթարութիւն վշտացս, և քաւարան մեղուցելոց։
որ գիտես զամ յառաջ քան զլինել նոցա։ ա-
ռաքեա զպահպանողական զօրութի աջոյ քո,
և փրկեա զիս յերկիւղէ գիշերոյ և ի դիւահ-
արէ։ Ած զի պաշտպանակ սոսկալի և մեք քո-
նուանդ՝ միշտ համբերութեն շնթամբք հոգ-
ւոյ՝ ըղձմունք ջինջոյ, կեցցես պահպանեալ ընդ-
այնոսիկ՝ որք կարդան զքեզ ի բոլոր սրտէ։
Դու ի դր ըղձէ խաւարի քոյոյ նշանակեց, զօր ամենայն
արարածքս ներկեալ նորոգեցեր, և ի նոյն
Նախ ի գործութեն զմեզ մկրտեցեր, և ի փառս
և ի պատկերի քոյ նկարեալ յօրինեցեր. այսու-
յարդեօք ամենայնիւք՝ ամաչեցաք սատանայ։
յանկեցաք մեք քննայքն. բարձցին որոգայթ
Նոքա պարտեցին մարտուցեալքն. պակա-
սեցին զէնքն սայրասուրք. մերժեցաւ մէգն.
Թ[illegible]եցաւ խաւարն. մեկնեցաւ մառախուղն։
դումուկ քո հովանացաւ, և աջ քո կնքեցաւ։
Դու ես գթած ես և ողորմած, և անուն քո
անուանեալ է ի վր ծառայից քոց։ Դու քեզ



ընդ-

ընդ հօր՝ հոգւովդ սրբով՝ փառք և իշխա-
նութիւն յաւիտեանս յաւիտենից.

ամէն։

ԱՂՕԹՔ ԶՕՐԱՒՈՐ՝ ՆԵՐՍԷՍ ՄԵԾԻՆ ԿՈՐԻԳՈՐԻ։

խտ։



րդի այ կենդանւոյ օրհնեալ յամէ, հօր-
ահաւորի անքննելի ծնունդ. որ անկա-
րանեաց առ՚ի քէն և ոչ ինչ։ Որ ՚ի ծա-
գել անստուերը նշուլից ողորմութեւքդ փրկեց.
հալեցին մեղքն, հալածեցին դևք. ջնջեցին յանցանք.
խզեցին կապանք. խորտակեցին շղթայք. կենդ-
նածնեցին մահացեալք. բժշկեցին հարուածք.
ողջացան վէրք. բառնեցին ապականութիւնք. ան-
տան ախտութիւնք. նահանջեցին հեծութիւնք. փախեա-
խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն.
փարատի մուայլն. սփռի աղջամուղջն. փե-
րանեաց մութն. գնաց գիշերն. տար...
նայն. չքանան չարիքն. հալածեցին...
տութիւնք. և թագաւորէ ձեռնքդ ա...
քաւիչդ ամի։ Որ ոչ եկիր կորուսան...
կան հոգիս, այլ՝ կեցուցանել. թող...
թիւն չարչարանացդ իմ՝ բազում ողորմու...
մեղաց ես յերկնի անձնո, և յերկր...
՚ի սուրբ գիրն՝ և յերգս ծագաց...
ամի՝ և յամի, ամն ընձեռ օրհն...
ձուն։ Եւ քեզ ընդ հօր և հո...
փառք՝ յաւիտեանս յաւիտենից...

Բանք սաղմոսիս՝ է պատուա կան.
լցեալ հոգւովն՝ ա̃ծա կան.
և որք յասելն՝ յօժարա նան.
արքայութե̃ն՝ արժանա նան.
Սաղմոսըն հա՛ց՝ է երկնայ էն.
մեղան կազմեալ՝ մեծի դաւ թէն.
որք 'ի հացէս՝ այս կերակ րէն.
աստուածայնին՝ սիրովն յա գէն:
Սաղմոսըն գանձ՝ է անըս պառ.
այնմ որ ստանայ՝ մրտօք պայ ծառ.
զլապտեր հոգւոյն՝ պահէ 'ի վառ.
և մտանէ՝ 'ի փառս ան ճառ:
Սաղմոսն աղբիւր՝ կենդանա րար.
մեղաց քաւիչ՝ և սրբա քար.
և որ ասէ՝ զսա մեղմա բար.
նա ս̃բ հոգւոյն՝ լինի տա ճար:
Իսկ որք չասեն՝ և քուն լը նէն.
և սաղմոսեն՝ ոչ փափա գէն.
յանմահական՝ հացէն սո վէն.
յաւուր մեծի՝ դատաստա նէն:
Իսկ որք ասեն՝ զսա կիսա տուն.
վընաս առնեն՝ իւրեանց հո գուն.
թէպէտ և կան՝ զգիշերն ար թուն.
դատարկ մընան՝ 'ի ս̃բ վար ձուն:
Իսկ որք ասեն՝ ծայրատե րով.
անմըտաբար՝ շաղփաղփե րով.

վայլ է նոցա՝ պահեալ յո լով.
զի յաստուծոյ՝ են ամօ թով:
Իսկ որ ծայրատ՝ զպատմոսն ա սէ.
և կիսատունն՝ յաւարտ ա ծէ.
նա յաստուծոյ՝ զամօթ կրես ցէ.
և՛ի բարեացն՝ անմասն ել ցէ.
Ուղղայր ինձ միտ՝ դիր դու հո գւով.
տեսի տաճար՝ մի լի լու սով.
շինած կազմած՝ ութն անկիւ նով.
և աստիճանքն՝ իւր համա րով:
Աստուածաշունչս՝ ոսկի դրու նով.
հարիւր յիսուն՝ պատուհա նով.
առ նա կուսան՝ քրն գան լա լով.
բողքն և պոռնիկքն՝ պարեն հո գւով:
Լուր որ կամի՝ յօժար սըր տով.
խըրմէ ըղնա՝ ոսկի թա սով.
ուրախանայ՝ ինքըն հո գւով.
յարքայութեան՝ ըն պարե լով:
Ութըն մախաղ՝ ես ու նէի.
և ամէն մէկն՝ ութ քըրա կի.
որն որ պխտէր՝ զայն բա նայի.
նա ինձ բուրէր՝ հոտ կընդըր կի:
Ութ փարչ տեսի՝ կաթամբ լը ցած.
գունով էին՝ քան զհուր վա ռած.
յորոց արբի՝ ես անքօ տած.
ոչ լիացայ՝ զերթ ծարա ւած:
Շնորհակալի՝ մէն աղէ սակ.
ունի հազար՝ լեառն բալե տակ.



նո

Նոցա մազերն՝ են սեւո րակ.
Իւրեանց հովիւքն՝ ոչ զհրեշ տակ.
Մօրն իւր արգանդ՝ էր սեւոյ են.
Հօրըն բարակ՝ ամենեւ են.
Որդերըն սեաւ՝ ծընանէ են.
Դաշտ կըսպիտակ՝ բընակէ են:
Պաշտ մի արձակ՝ եւ պատուհա կան.
Լըցեալ ծաղկօք՝ լոյժ զանա զան.
Ոչ յեղանակս՝ միայն գար նան.
Այլ անթառամ՝ ժամն ամե նայն:

Յաւելուած վերջոյ՝ վերջին գովեստ ոչ Սաղ մոսին, Զօղեալ անուանեալ ոտանաւորս:

Սաղմոսն՝ է մեր՝ մեղաց՝ քաւ ւիչ.
է մեր՝ հոգւոց՝ ախտից՝ մաք րիչ.
մեղաց՝ ախտից՝ դիւաց՝ վա րիչ.
քաւիչ՝ մաքրիչ՝ վարիչ՝ փըր կիչ:
Սաղմոսն՝ ըզմեզ՝ հանէ՝ յեր կին.
ըզմեզ՝ յերկրէս՝ 'ի վեր՝ կըր կին.
հանէ՝ 'ի վեր՝ զմիտ եւ՝ զո գին.
յերկին՝ կըրկին՝ զոգին՝ ան գին:
Սաղմոսն՝ է սանձ՝ կենաց՝ մարդ կան.
է սանձ՝ չարաց՝ բարեաց՝ պահ պան.
կենաց՝ բարեաց՝ պատճառ՝ պատ կան.
մարդկան՝ պահպան՝ պատկան՝ ուն կան:
Սաղմոսն՝ ունէ՝ հոգւոյն՝ ծա նօթ.
ունէ՝ հոգւոյն՝ շնորհաց՝ ա նօթ.



հո

հոգւոյն՝ շնորհաց՝ տեղի՝ և օթ.
ծանօթ՝ անօթ՝ և օթ՝ ան տօթ։

Սաղմոսն՝ է մեր՝ հոգւոց՝ պա շար.
է մեր՝ վիրաց՝ բժիշկ՝ և ճար.
հոգւոց՝ բժիշկ՝ մտաց՝ համ ճար.
պաշար՝ և ճար՝ համճար՝ պա տար։

Սաղմոսն՝ է լոյս՝ ճրագ՝ ո տից.
է լոյս՝ սիրով՝ վառեալ՝ սրր տից.
ճրագ՝ վառեալ՝ առ Տէր՝ մր տից.
ոտից՝ սրրտից՝ մտից՝ հօ տից։

Սաղմոսն՝ ոսկեայ՝ տուփ է՝ խըն կով.
ոսկեայ՝ բուրվառ՝ անոյշ՝ հո տով.
տուփ է՝ անոյշ՝ սրբոց՝ գոր ծով.
խնկով՝ հոտով՝ գործով՝ սրր բով։

Սաղմոսն՝ է սաստ՝ ծուլից՝ խր թան.
է սաստ՝ զորմէ՝ դեւ ոչ՝ փութան.
ծուլից՝ դեւ ոչ՝ բընաւ՝ կար դան.
խրթան՝ փութան՝ կարդան՝ խոր դան։

Սաղմոսն՝ է գան՝ սաստիկ՝ նո ցին.
է գան՝ յորմէ՝ քիմարք՝ խո ցին.
սաստիկ՝ քիմարք՝ ատօղք՝ գան ձին.
նոցին՝ խոցին՝ գանձին՝ ան ձին։

Սաղմոսն՝ անթիւ՝ թիւրից՝ ուղ ղիչ.
անթիւ՝ մեղաց՝ անձանց՝ թո ղիչ.
թիւրից՝ անձանց՝ քուղին՝ ա ծիչ.
ուղղիչ՝ թողիչ՝ ածիչ՝ տա ծիչ։

Յանկ սաղմոսաց՝ ըստ կարգի այբուբենից։

Աղաղակեցէ՛ք առ Ած ամ երկիր. ԿԵ։
Աղաղակեցէ՛ք առ Տր ամ երկիր. ՂԹ։
Ապրեցո՛ զիս Տր՝ զի նուազեաց սբ. ԺԱ։
Ապրեցո՛ զիս Տր ՚ի մարդոյ չարէ. ՃԼԹ։
Առ գետս Բաբելացւոց, անդ նս. ՃԼԶ։
Առ քեզ Տր կարդացի Ած իմ, մի՛. ԻԷ։
Առ քեզ Տր համբարձի զանձն իմ. ԻԴ։
Առ քեզ Տր համբարձի զաչս իմ. ՃԻԲ։
Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում. ԺԳ։
Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում. ԾԲ։
Ասաց Տր ցՏր իմ, նիստ ընդ աջ. ՃԹ։
Ասացի՝ թէ պահեցից զճանապարհս. ԼԸ։
Ասէ անօրէնն ՚ի մեղանչել ընդ միտս. ԼԵ։
Ած ականջօք մերովք լուաք. ԽԳ։
Ած Ած իմ, ես առ քեզ առաւօտ. ԿԲ։
Ած Ած իմ՝ նայեա՛ց առ իս ընդէ՞ր. ԻԱ։
Ած աստուածոց Տր խօսեցաւ, և կո. ԽԹ։
Ած եկաց ՚ի ժողովս աստուածոց. ՁԱ։
Ած զիրաւունս քո արքայի տո՛ւր. ՀԱ։
Ած մեր ապաւէն և զօրութի, օգնա. ԽԵ։
Ած մերժեցեր և աւերեցեր զմեզ. ԾԹ։
Ած՝ մտին հեթանոսք ՚ի ժառանգութի. ՀԸ։
Ած յանուա՛ն քում կեցո՛ զիս, և ՚ի. ԾԳ։
Ած յօգնել ինձ նայեաց. և Տր յըն. ԿԹ։
Ած ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. ԿԶ։
Ած ո՞ քեզ նմանիցի. մի՛ լռեր և. ՁԲ։
Ած վրէժխնդիր, Տր Ած՝ վրէժ. ՂԳ։
Ած օրհնութե՛ իմոյ մի՛ լռեր. զի բե. ՃԸ։

Ահա օրհնեցէք ամ ծառայք Տն. ճլգ։

Բազում անգամ մարտեան ընդ իս. ճիը։

Բայց միայն այ հնազանդ լեր. կա։

Բանից իմոց ունկն դիր Տր, և՛ի. ե։

Բարի է խոստովան լինիլ Տն. ղա։

Բարձր առնեմ զքեզ այ իմ. ճխդ։

Բարձր առնեմ զքեզ Տր, զի ընկալ. իթ։

Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս քո. խդ։

Գոհացայց զքէն Տր բոլորով. թ։

Գովեա Երուսաղէմ զՏր. ճխէ։

Դատ արա ինձ այ. և իրաւ արա. խբ։

Դատ արա ինձ Տր՝ զի ես յանմեղ. իե։

Դատեա Տր զայնոսիկ՝ որք դատեն. լդ։

Եթէ ոչ Տր էր առ մեզ, ասաս. ճիգ։

Եթէ ոչ Տր շինէ զտունն ՚ի նա. ճիզ։

Եկայք ցնծասցուք ՚ի Տր. աղաղա. ղդ։

Երանեալ են անբիծք ՚ի ճանապար. ճժը։

Երանեալ է այր՝ որ երկնչի ՚ի Տնէ. ճժա։

Երանեալ է այր որ ոչ գնաց ՚ի խոր. ա։

Երանի ամցուն՝ որք երկնչին ՚ի Տնէ. ճիէ։

Երանի որ խորհի զաղքատն և զտն. խ։

Երանի՛, ում թողութի եղև մեղաց. լա։

Երկինք պատմեն զփառս այ. ժը։

Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի. ճլբ։

Զի՞ պարծի ՚ի չարութե հզօրն, ծա։

Զողորմութիւնս քո Տր յաւիտեան. ձը։

Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և ժո. բ։

Ընդէ՞ր մերժեցեր այ իսպառ. հգ։

Թէ արդարև զարդարութի խօսէիք. ծէ։

Որչափ զի՛ բարի է Իէլի ած. ՀԲ։
Ի դարձուցանել տն զգերութ. ՃԻԵ։
Ի խորոց կարդացի առ քեզ՝ տր. ՃԻԹ։
Ի կարդալ իմում լուաւ ինձ ած. Դ։
Ի նեղութ իմում ես առ տր կար. ՃԺԹ։
Ի տր յուսացայ. ո՞պ ասիցէք ցանձն. Ժ։
Ի քեզ տր յուսացայ, մի՛ ամաչեցից յաւ. Լ։
Ի քեզ տր յուսացայ, մի՛ ամաչեցից. Հ։
Լուարուք զայս ամ ազգք, ունկն. ԽԸ։
Լուիցէ քեզ տր յաւուր անձ. ԺԹ։
Լուր ած աղօթից իմոց յաղաչել. ԿԳ։
Լուր ած աղօթից իմոց. և նայեա՛ տր. Կ։
Լուր տ՛ր արդարութ. և նայեա՛. ԺԶ։
Խոնարհեցո՛ տր զունկն քո՝ և լուր. ՁԵ։
Խոստովան եղերուք տն՝ և կար. ՃԴ։
Խոստովան եղերուք տն՝ զի բարի է. ՃԺԷ։
Խոստովան եղերուք տն, զի բարի է. ՃԼԵ։
Խոստովան եղերուք տն՝ զի քաղցր է. ՃԶ։
Խոստովան եղերուք տն՝ զի քաղցր է. ՃԵ։
Խոստովան եղէց քեզ տր բոլորով. ՃԼԷ։
Խոստովան եղէց քեզ տր՝ բոլորով. ՃԺ։
Խոստովան եղիցուք առ քեզ ած. ՀԴ։
Ծափս հարէք ամ հեթանոսք, աղա. ԽԶ։
Կեցո՛ զիս ած, զի հասին ջուրք. ԿԸ։
Հաճեցար տր ընդ երկիր քո, և. ՁԴ։
Համբարձի զաչս իմ ՚ի լերինս, ուս. ՃԻ։
Համբերելով համբերի տն, և նայե. ԼԹ։
Հաւատացի զոր և խօսեցայ. և ես. ՃԺԵ։
Հիմունք նր ՚ի լերանս սրբ նր. ՁԶ։

Ձայնիւ իմով ես առ Տր կարդացի. հզ:
Ձայնիւ իմով ես առ Տր կարդա. ճխա:
Մատուցէք Տն՝ որդիք աստուծոյ. մա. իը:
Մեծ է Տր, և օրհնեալ է յոյժ ՚ի. խէ:
Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ. լզ:
Մինչև յերբ Տր՝ մոռանաս զիս. ժբ:
Յայտնի է ՚ի հրէաստանի Ած. և. հե:
Յարիցէ Ած՝ և ցրուեսցին ամ. կէ:
Յելանելն իէլի յեգիպտոսէ. ճժգ:
Յիշեա՛ Տր զդաւիթ, և զամ հեզու. ճլա:
Յողորմութի՝ և յիրաւունս օրհնեցից. ճ:
Նայեցարուք ժողովուրդք յօրէնս. հէ:
Ողորմեա՛ ինձ Ած, զի կոխեաց զիս. ծե:
Ողորմեա՛ ինձ Ած՝ ողորմեա՛ ինձ. ծզ:
Ողորմեա՛ ինձ Ած ըստ մեծի ողոր. ծ:
Ո՛ յուսայ ՚ի Տր, որպ լեառն սիոն. ճիդ:
Որ բնակեալն է յօգնութի բարձրե. ղ:
Որ հովուեսդ իէլի՝ նայեաց, որ ա. հթ:
Որպ սիրելիք են յարկք քո Տր զօրու. ձգ:
Որպ փափագի եղջերու յաղբերս. խա:
Ո՛ւնկն դիր Ած աղօթից իմոց. և մի՛. ծդ:
Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս. ճիա:
Պահեա՛ զիս Ած իմ, զի ես ՚ի քեզ. ժե:
Պատրաստ է սիրտ իմ Ած, պատ. ճէ:
Սիրեցի՝ զի լուիցէ Տր զձայն. ճժդ:
Սիրեցից զքեզ՝ Տր, զօրութի իմ. ժէ:
Տեառն է երկիր լրիւ իւրով. իգ:
Տր՝ ապաւէն եղեր մեր ազգէ. ձթ:
Տր Ած իմ ՚ի քեզ յուսացայ, փրկեա՛. է:

Տ՟ր ա՟ծ փրկութե՟ իմոյ, 'ի տուէ. ձէ:
Տ՟ր՝ զի՞ բազում եղեն նեղիչք իմ. գ:
Տ՟ր թագաւորեաց, բարկացան ժողո. ղը:
Տ՟ր թագաւորեաց՝ վայելչութի՟ զգե. ղբ:
Տ՟ր թագաւորեաց՝ ցնծասցէ՛ երկիր. ղզ:
Տ՟ր 'ի զօրութե՟ քում ուրախ եղիցի. ի:
Տ՟ր լոյս իմ և կեանք իմ՝ ես յում. իզ:
Տ՟ր՝ լո՛ւր աղօթից իմոց. ունկն դիր. ճխբ:
Տ՟ր՝ լո՛ւր աղօթից իմոց. աղաղակ. ճա:
Տ՟ր կարդացի առ քեզ՝ և լո՛ւր ինձ. ճխ:
Տ՟ր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ո՛չ. իբ:
Տ՟ր մի՛ սրտմտութ՟ե քով յանդիմաներ. լէ:
Տ՟ր՝ մի՛ սրտմտութ՟ե քով յանդիմա. զ:
Տ՟ր ո՛չ բարձրացաւ սիրտ իմ. և ո՛չ. ճլ:
Տ՟ր՝ ո՛վ կացցէ 'ի խորանի քում. ժդ:
Տ՟ր տ՟ր մեր, զի՞ սքանչելի է անուն. ը:
Տ՟ր փորձեցեր զիս՝ և ծանեար. ճլը:
Ցնծացէ՛ք առ ա՟ծ, օգնական է մեր. ձ:
Ցնծացէ՛ք արդարք 'ի տ՟ր՝ ուղղոց. լբ:
Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց ա՟ծ. ծը:
Քեզ վայելէ օրհնութի՟ ա՟ծ 'ի սի. կդ:
Օրհնեա՛ անձն իմ զտ՟ր. տ՟ր ա՟ծ իմ. ճգ:
Օրհնեա՛ անձն իմ զտ՟ր, և ա՟մ ոս. ճբ:
Օրհնեա՛ անձն իմ զտ՟ր. օրհնեցից. ճխե:
Օրհնեալ տ՟ր ա՟ծ իմ, որ ուսոյց. ճխգ:
Օրհնեցէ՛ք զանուն տ՟ն. օրհնեցէ՛ք. ճլդ:
Օրհնեցէ՛ք զա՟ծ 'ի սրբութե՟ ն՟ր. ճծ:
Օրհնեցէ՛ք զտ՟ր ա՟մ ազինք. ճժզ:
Օրհնեցէ՛ք զտ՟ր՝ զի բարի է սաղ. ճխզ:

Օրհնեցէք զՏր յերկնից. օրհնէ. ճխը:
Օրհնեցէք զՏր յօրհնութի նոր. օրհնե. ղէ:
Օրհնեցէք զՏր յօրհնութի նոր. օրհ. ղե:
Օրհնեցէք զՏր յօրհնութի նոր. ճխթ:
Օրհնեցէք մանկունք զՏր. և օրհ. ճժբ:
Օրհնեցից զՏր յամ ժամ, յամ. լգ:

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ.

Արդ՝ արձակեա զծառայս քո Տր. 321.
Ես ասացի ՚ի վերանալ յհնէն. 236.
Զի հուր բորբոքեցաւ ՚ի բարկութէ. 115.
Ի գիշերաց կանխէ հոգի իմ առ. 199.
Ի նեղութե իմում ես առ Տր կար. 274.
Հաստատեցաւ սիրտ իմ ՚ի Տր, և. 155.
Մեծացուսցէ անձն իմ զՏր. և ցն. 320.
Հայեցարուք երկինք, և խօսեցայց. 71.
Տր զլուր քո լուայ՝ և երկեայ. 308.
Տր ամենակալ Աստծ աբրահամու. 322.
Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտ. 314.
Օրհնեալ ես Տր Աստծ հարցն մե. 316.
Օրհնեալ Տր Աստծ իէլի, որ յայց ել. 320.
Օրհնեսցուք զՏր, զի փառօք է. 31.
Օրհնեցէք զԱստծ յօրհնութի նոր. 273.

Խօսին Սաղմոսաց՝ Աղաղակաւորութե:

Տր՝ մի՛ սրտմտութե քով յանդիմա. զ:
Երանի՛, որոց թողութի եղև մեղաց. լա:
Տր մի՛ սրտմտութե քով յանդիմաներ. լէ:
Ողորմեա ինձ Աստծ ըստ մեծի ողոր. ծ:
Տր՝ լուր աղօթից իմոց. աղաղակ. ճա:
Ի խորոց կար. ճիթ: Տր՝ լուր աղօ. ճխբ:

## Խրատ առ ի Նշանաւորման Պարզատեսու[թեան]
## ցուցանէ ՃԱՇՆ-առնէս:

Առ զթուականն յորում ամի և ից
՚ի հանդիպակաց տախտակն. և առ զգ
տարւոյն՝ որ է մերձ նմին. (խաչ
զոյգն են նոտր գծով, նահանջք
նոքին.) և գիտ զնոյն գիր ՚ի հետևեալ խ
րանս՝ առաջին աղիւսակաց: Յորս իւրաքան
իւրքն յայտեն մինչ ՚ի քեն՝ գլխագիր տ
ունք եդեալ են ՚ի շարս սկզբան յերկս զգ
երեսս թղթոյն. և որ ինչ ՚ի դէմն իւր գրեա
է, այն է մինչև ցաւարտ տարւոյն անվրեպ
Օ՛ր օրինակ՝ թուական տարւոյս որ
ՌՄԿ, գիր տարւոյն՝ է տառն ( Ղ ) զ
շրջեալ զթուղթսն՝ գտանես յերկրոր
դում աղիւսակոջ. և որ ինչ է կից նմին
կարգի յայնմիկ, ցուցանէ յայտնի զամեն
Լ. յսհ:քն՝ զօր յայտնութեան: զմիջոց ուտիս
և զայլն կարգաւ մինչև ցօր բարեկենդան
յայտնութե.

Ս.ւքն առողջն գիտութեն՝ փառք յաւի
տեանս ամէն.

| Թուին Տն. և Թուականն Հայոց. | Նոտար գիր | Կիւրակագիր | Մեծ պաս | Տանուտէր. |
|---|---|---|---|---|
| 1811 . ՌՄԿ | Լ | Է | ԺԳ | Կշիռն |
| 1812 . ՌՄԿԱ | ԲԱ | Ա Բ | ԻԵ | Կարիճն |
| 1813 . ՌՄԿԲ | Հ | Գ | Ը | Աղեղնաւորն |
| 1814 . ՌՄԿԳ | Ը | Դ | ԺԹ | Այծեղջիւրն |
| 1815 . ՌՄԿԴ | Ռ | Ե | Լ | Ջրհոսն |
| 1816 . ՌՄԿԵ | ՄԾ | ԶԷ | ԺԱ | Ձուկն |
| 1817 . ՌՄԿԶ | Դ | Ա | ԻԲ | Խոյն |
| 1818 . ՌՄԿԷ | [illegible] | Բ | Գ | Ցուլն |
| 1819 . ՌՄԿԸ | [illegible] | Գ | ԺԴ | Երկաւորն |
| 1820 . ՌՄԿԹ | ԲԷ | Դ Ե | ԻԵ | Խեցգետինն |
| 1821 . ՌՄՀ | Մ | Զ | Զ | Առիւծն |
| 1822 . ՌՄՀԱ | Լ | Է | ԺԷ | Կոյսն |
| 1823 . ՌՄՀԲ | Բ | Ա | ԻԸ | Կշիռն |
| 1824 . ՌՄՀԳ | [illegible] | Բ Գ | Թ | Կարիճն |
| 1825 . ՌՄՀԴ | [illegible] | Դ | ԻԱ | Աղեղնաւորն |
| 1826 . ՌՄՀԵ | [illegible] | Ե | Բ | Այծեղջիւրն |
| 1827 . ՌՄՀԶ | Խ | Զ | ԺԳ | Ջրհոսն |
| 1828 . ՌՄՀԷ | Դ | Է Ա | ԻԴ | Ձուկն |
| 1829 . ՌՄՀԸ | Ռ | Բ | [illegible] | ոյն |
| 1830 . ՌՄՀԹ | [illegible] | [illegible] | ԺԴ | ուլն |
| 1831 . [illegible] | [illegible] | [illegible] | ԻԵ | Երկաւորն |
| 1832 . ՌՄՁԱ | [illegible] | [illegible] | Ը | Խեցգետինն |
| 1833 . ՌՄՁԲ | Լ | Ե | ԺԹ | Առիւծն |
| 1834 . ՌՄՁԳ | Բ | Ա | Լ | Կոյսն |